



ԱՐԻՔԵՆ ՄԵՎԱԿ 125

ՅՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Prof Dr. H. G. Wenzel
Institut für Vogelwarte
Bergen auf Rügen Empfehlungen
2011

WFO 48980 f48f Empfohl
10-9-2013 f8 WFO 48980
der Wissenschaften und
Forschung der
Bundesrepublik Deutschland

«ՀԱՅ Մ. ԱԲԵՂՅԵԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
«ՍՓՅՈՒՇՈՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՄԵԿ ԱԶԳ, ՄԵԿ ՄՇԱԿՈՒՅԹ» «ԻՄԱԴՐԱՄ

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ

125

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան - 2011

ԺՈՂՈՎԱՃՈՒՆ ՄՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ Մ.ԱԲԵՂՅԱՆԻ անվան
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԽՈՐԻՒԹՅԻ ՈՐՈՇՄԱՆՔ

ԺՈՂՈՎԱՃՈՒՆ ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅ ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԾ
ՈՈՒԹԵՆ ՄԵՎԱԿԻ ԾՆՍԴՅԱՆ 125 ԱՄՅԱԿԻՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐԻՈՒՐԴ՝
ԱՎԻԼ ԽՍԱՀԱԼՅԱՆ (նախագահ)
Վարդան ՂԱՐԻԿՅԱՆ (պատ. Խմբագիր)
Լևոն Անանյան
Հենրիկ Եղոյան
Վլադիմիր Կիրակոսյան

ՌՈՒԲԵՆ ՄԵՎԱԿ

1912 թվականի ապրիլի 29-ին Լոգանից Ռուբեն Մեվակն իր նամակում <քանտ Նազարյանին հայտնում էր «ամենավերջին փափազը»։ Երկրագործ լինել, կյանքի վերջին տարիներն անցկացնել լոության ու բնության մեջ։ Ամենավերջին... քսանյոթամյա երիտասարդը կանխազգո՞ւմ էր մոտեցող մահը, թե՝ սա պոետական կեցվածք էր, առկա կարգերն ու բարքերը մերժելու, ռոմանտիկ հոգիներին վայել գոյություն հաստատելու ձև, «աստվածորեն ապրելու» ձգտում։ Նրա ստեղծագործությանն էապես բնորոշ է կյանքի և երազների հակասությունը։ Մի կողմից նրբագույն ապրումներ, մեղմ, սիմվոլիկ պատկերներ, բանաստեղծական տեսիլներ, մյուս կողմից պայքար տրորվող, տառապող, զոհաբերվող մարդու ազատության համար։ Նամակի տողերը պերճախոս հաստատումն են անհունության, մենության մեջ ապրելու և ստեղծագործելու անհնարինության։ Խաղաղ պոետիզմի անիրագործելիությունը, ձակատագրային անխուսափելիությունը չարչարանքից ու մաքառումից, բանաստեղծին տանում է դեախ ազգային-ազատագրական պայքար։ <Եռվից պարզորոշ տեսնելով հանդերձ «Պոլսո մղձավանջը... Սողոմի մուսն ու Գոմորի բոցը», նա վերադառնում է հայրենիք։ Ոչ ոք չէր հավատա ոչ մի ականատեսի հուշերի, եթե պահպանված չլիներ մի ուրիշ նամակ։ Ահա անհավատալի փաստը։ «...կցանկամ, որ վերջնականապես հայրենիք վերադառնալե առաջ երթամ գոնե գարուն մը - կյանքիս հաշվված գարուններեն մին - Վենետիկ անցնեմ, ապրիմ, ապրիլս զգամ, մեռնիլս կանխազգալե առաջ» (Նամակը գրված է 1911-ի փետրվարի 4-ին, Լոգանից)։

Մահվան ուրվականը հետապնդում է բանաստեղծին նրա ողջ ստեղծագործական կյանքում, որը դաժան նախախնա-

մությամբ, նահատակության մի նախապատրաստություն էր կարծես:

1

Ռուբեն Սևակը (Ռուբեն Չիլինկիրյան) ծնվել է 1885-ի փետրվարի 28-ին (իհն տոմարով՝ փետրվարի 15-ին), Մարմարայի եվրոպական եզերքի Սիլիվրի գյուղաքաղաքում: Նախ փականագործ, ապա երկարեղենի առևտրական էր հայրը՝ Հովհաննես աղա Չիլինկիրյանը: Մոր անունը Արմավենի Գրաբոսյան էր:¹ Ռուբենը երրորդ զավակը լինելով, ուներ երկու քոյր և երեք եղբայր: Ծննդավայրում Ռուբենն ավարտում է Ասքանազյան նախակրթարանը, ապա երկու տարի սովորում Պարտիգակի գիշերօթիկ Ամերիկյան քոլեջում, իսկ 1901-ին անցնում Սկյուտարի նշանավոր Պերպերյան վարժարան, նույնական գիշերօթիկ, որն ավարտում է 1905-ին: Դասընկերները լավ ծանոթ էին նրա կազմակերպած ինքնագործ աշակերտական խմբում կարդացած բանաստեղծություններին: Առաջին տպագիր գործը «Բաժանման խոսքեր» բանաստեղծությունն էր,² որ Պերպերյանի շրջանավարտ Ռուբեն Չիլինկիրյանը արտասանել էր վկայականների բաշխման ավարտական հանդեսին, արժանանալով ներկաների գնահատությանը: Ցայտուն ընդունակություններ դրսևորելով տարբեր առարկաների յուրացման մեջ, միշտ դասարանի առաջին աշակերտը, վարժարանը փայլուն ավարտելուց հետո, մեծ ուսուցչապետ Ռեթենս Պերպերյանի թելադրությամբ ու աջակցությամբ, նա մեկնում է Ծվեյցարիա, 1905-ի աշնանից ուսանելով Լոզանի բժշկական համալսարանում: Այստեղ էլ նա առաջինն է տարբեր ազգերի բոլոր ուսանողների մեջ: Ուսանողության տարիներից էլ Ռու-

1 Կենսագրությունը լրացրել ենք ըստ Տիգրան Հաճյանի «Ռուբեն Սևակ. ծննդյան հարյուրամյակին առթիվ» հոդվածի («Հառաջ», Փարիզ, 1985, թիվ 96):

2 «Մասիս», Կ.Պոլիս, 1905, թիվ 24, էջ 379-380:

բեն Սևակը արևմտահայ մամուլում տպագրում է իր գործերը, հետզիետ լայն ձանաչում ստանալով:¹ 1908-ին, սահմանադրության հաստատումից հետո, ամառվա արձակուրդներին նա գալիս է Կ.Պոլիս, կարծ ժամանակով զբաղվում «Սուրիհանդակ» օրաթերթի հրատարակությամբ, նվիրվում հասարական գործունեությանը: 1911-ին, ավարտելով Լոզանի բժշկական համալսարանը, նա աշխատում է տեղի հիվանդանոցներում՝ օգնական բժիշկ: Ուսանելու շրջանում, 1907-ի մայիսին նա ծանոթանում է գերմանական իին ու հարուստ տոհմից սերող, Լոզանի գեղարվեստի վարժարանի ուսանողուիի Յաննի Ապելի հետ: Ամուսնությանը դեմ էին և աղջկա ծնողները, որ բնակվում էին Երֆուրտում (հայրը գոհարավաճառ էր), և տղայի ծնողները՝ չին ցանկանում, որ իրենց որդին ամուսնանա օտարուիու հետ, և Հռվիաննես աղան դադարեցրեց դրամական առաքումները: Ուուրենի համար սկսվեց նյութական դժվարությունների մի շրջան: Բայց հակառակությունը վերջապես վերացավ, նամակներից իսկ երևում է, որ Յաննիի ծնողները Ուուրենին վերաբերվում էին ջերմ համակրանքով: Ամուսնությունը հաստատվեց 1910-ի հուլիսի 16-ին՝ Լոզանի քաղաքապետարանում, կրոնական հարսանիքը կատարվեց հաջորդ օրը Փարիզի հայոց եկեղեցում: Ուուրենը 25, Յաննին՝ 20 տարեկան էր՝ արտակարգ հոգու և գեղեցկության մի մարմնացում: Նրանց նամակները ոռմանտիկ, աննար սիրո մի վիպասանություն են, այժմ արդեն ազգային մեր գրականության պատմություն:

1 Սևակ գրական անունը հատկանշում է իրեն՝ «...քիչ մը թուս դեմքով ու սև արտահայտիչ աչվոններով» (Արմեն Սևան, Նահատակ գրողներ, Գիրք Ա, Սոֆիա, 1931, էջ 73): Տիգրան Հաջյանի կարծիքով ակ-ը թերևս փաղաքական իմաստ ունի՝ սկսուկ: Բայց «Սերը» բանաստեղծությունում Սեվակ անունը գուգահեռվում է ակունք, աղբյուր իմաստներին.

Կը տեսնե՞ս սա վիհին վըրա Սեր-ակը.

Հազարներ կուլ է տվեր այդ սև ակը.

Իր ջուրեն օր մը խենթեցավ

Սեվակը

յան հմայիչ մի դրվագ, ողբերգական ավարտով: Ներդաշնակ և գեղեցիկ ամուսինները երկու զավակ ունեցան՝ Լևոնը և Շամիրամը: Ինչպես պատմում է Սևակի ընկերներից մեկը՝ Գ.Ամատյանը, Յաննին հետաքրքրվում էր հայ մշակույթով և սկսել էր ամուսնուց հայերենի դասեր առնել:

1910-ին Կ.Պոլսում լույս տեսավ «Կարմիր գիրքը» ժողովածուն: Թեոդիկի 1911-ի «Ամենուն տարեցույցում» հայ մշակույթի բազմաթիվ այլ գործիչների հետ տրված Ռուբեն Սևակի կարծառութ կենսագրականում նշված են իր ծրագրած «Քառոր», «Սիրո գիրքը», «Վերջին հայերը»: Նույնը հավաստում է նաև Մերուժան Պարսամյանը («Ծանթ», Կ.Պոլիս, 1918, թիվ 2): Այդ գրքերը չկարողացավ հրատարակել: Սևակի արձակ առաջին գործը՝ «Տարի մը վերջ» պատմվածքը լույս տեսավ 1907-ին, իսկ 1913-ին «Ազատամարտուն» սկսեց հանդես գալ «Բժիշկին գիրքեն փրցված էջեր» շարքով, որը մեծ հաջողություն ունեցավ և որը նույնպես ամբողջությամբ չկարողացավ հրատարակել: Ռուբեն Զարդարյանը շարքի մասին գրեց. «Չեք կարող երևակայել, թե որպիսի՝ խանդավառ ընդունելություն գտած են անոնք ընթերցող հասարակության մեջ... Ասիկա նախ կապացուցանե այն անտարակուսելի գրական ճարտարությունը, որով կգրեք ձեր հոդվածները քերթվածի մը չափ թթուուն...»:¹ Իսկ Հարություն Ալփիարին հիացնում էին արվեստագետի ձիրքերը. «Զգացումներու փափկազգաց նկարիչ մը, լեզվի ciseleur մը, և բառին ամբողջ ուժովը՝ հածելի գրագետ մը: Գրական նոր ծյուղ մը կստեղծեք կոր»:²

Ինչպես այդ, այնպես էլ Արևմուտքում ապրած տարիների մասին որոշ պատկերացում են տալիս Ռուբեն Սևակի նամակները, որոնցից ոչ բոլորն են, դժբախտաբար, տեղ գտել ցարդ հրատարակված ժողովածուներում: Թվում էր, թե բոլոր նախադրյալները կան լիարժեք ապրելու, երջանիկ լինելու

1 Թեոդիկ, «Ամենուն տարեցույցը», Կ.Պոլիս, 1915, էջ 325:

2 «Աստղաբերդ», 1952, թիվ 5, էջ 62:

համար. հաջողություն, նվիրվածություն ու տաղանդ ընտրած մասնագիտության մեջ, հոյակապ ընտանիք և իսկական մեծ սեր, ստեղծագործական հագեցված, փայլուն կյանք, անշահախնդիր արվեստագետ ու ոչ արվեստագետ բարեկամների ազդեցիկ շրջան: Անկարևոր չէր, հարկավ, նաև նյութական բարեկեցիկ վիճակը: Բայց եթե բանաստեղծն ընդհանրապես, ինչ երկնքի տակ էլ ապրի, չի կարող երջանիկ լինել, հայ բանաստեղծը դատապարտված է ծակատագրով: <Եռվից էլ զգացվում էր սպասվող կոտորածի մղջավանջը և, այնուամենայնիվ, հայ մտավորականության շատ ներկայացուցիչներ վերադառնում էին տուն: Այդպես, 1914-ի հունիսին Ռուբեն Սևակն ընտանիքով վերադարձավ Կ.Պոլիս: <Ենց նավահանգստում, Յաննիի վրա թուրքական միջավայրը ծանր տպավորություն թողեց. «Ռուբեն, դառնանք այս շոգենավով, ես շատ չիավնեցա այս երկրին... Սոսկում եկավ վրաս. չե՞ս տեսներ, ո՞չ մեկուն դեմքը կժպտի»:¹ Սևակը հաստատապես վճռել էր վերադառնալ, և ցավոք սրտի, կնոջ մռայլ կանխազգացումը որևէ նշանակություն չունեցավ: Կ.Պոլիսում Սևակը բնակվում էր Բանկալթի, Նալբանդ փողոց, Մավրոմատի մենատանը, աշխատում իր մասնագիտությամբ, դասախոսություններ կարդում Բերայի Հայ բժշկական միության կազմակերպած հիվանդապահության դասընթացներում, իրավիրվում է Կեդրոնական վարժարան՝ կենսաբանության ուսուցիչ: Գրական աշխատանքի նոր, բուռն շրջան էր սկսվել նաև, իր հարազատ տարերքի մեջ էր՝ արևմտահայ արվեստագետների միջավայրում: Երբ պայթեց առաջին համաշխարհային պատերազմը, Սևակը կանչվեց թուրքական բանակ՝ հարյուրապետ սպայի աստիճանով, որպես զինվորական բժիշկ: Մի հանդիպման մասին Մերուժան Պարսամյանը պատմում է. «Առտու մը տեսա զինքը ծիու վրա, զինվորական բժշկի համազգեստով... Երբ տուն հասանք... իր անտիա քերթվածներեն ու արձակներեն կարդաց... Մերը

1 «Ծանթ», Կ.Պոլիս, 1918, թիվ 2, էջ 14:

տիկին Զիլինկարյանն էր, որ իր բարձր ու շքեղ կիսաստվերը կպտտեցներ սենյակին մեջ, տաքություն մը, երաժշտություն մը հոսեցնելով մթնոլորտին մեջ... Նույն իրիկունն իսկ իմացա, որ ծերբակալեր են զինքը:

Առաջին վայրկյանեն իսկ հուսահատ էր տիկին Զիլինկարյան. առտուն գերման դեսպանատուն՝ իրիկունը՝ ոստիկանական տնօրենին մոտ... իբրև թե հայուիի մը ըլլար տիկին Զիլինկարյան, կըննադատեր գերմաններուն ընթացքը, կպախարակեր անոնց վայրագությունը»:¹

Ռուբեն Սևակը ծերբակալվեց և ուղարկվեց Չանգըրը: Այդ օրերի մասին վկայություններ է թողել նրա հետ աքսորված Միքայել Շամտածյանը (տես «Հուշարձան ապրիլ տասնընթեկի», Կ.Պոլիս, 1919, «Չանգըրըն վերիիշումներ», էջ 113-121): Չանգըրըն Սևակը բուժում է մի թուրք չեթեծիի աղջկան: Թուրքը «խանդաղատանքի զգացումներ» հայտնելով, բժշկին համոզում է մահմեդականություն ընդունել անխուսափելի սպանությունից փրկվելու համար: Սևակը հրաժարվում է, ավելին, նա, որ աստված ու կրոն չեր ընդունում, հավատափոխությունը համարելով ազգադապություն, ամբողջ երկու օր աշխատում է համոզել տատանվող որոշ հայերի, թե մահը մահմեդականացումից լավ է, ստիպելով երդվել նրանց, որոնց վրա կասկած ուներ: Այս պատմությունը լրացնող մի հայտնի վկայություն և կա. բուժված աղջիկը սիրահարվում է Սևակին և աղաջում է հորը ամուսնացնել իրեն հմայիչ երիտասարդի հետ: Հայրը ճարահատյալ կանչում է Սևակին, զգուշացնում է, որ մահվան է դատապարտված իր ընկերների հետ, բայց կարող է փրկվել. «... աղջիկս մահեն ազատեցիր, և աղջիկս շատ ուրախ է քեզի պես բժիշկ մը ճանչնալուն համար, և քեզի սիրահարված է՝ հետդ ամուսնանալ կուզե: Եթե ընդունիս իսլամանալ և ամուսնանալ աղջկանս հետ, կազատեմ քեզի անոր սիրույն համար...»:

1 «Շանթ», Կ.Պոլիս, 1918, թիվ 2, էջ 14:

Սևակը կսարսափի առաջարկեն, կըսէ թէ արդեն ամուսնացած է և զավակներու տեր է: «Վնաս չունի», կըսէ նարդը, «մեր կրոնքին համար ամուսնացած ըլլալը անպատեհություն մը չէ»:¹

Օգոստոսի 26-ին, հինգշաբթի առավոտյան, հինգ հոգի երկու կառքով ուղարկվում են Այաշ, որոնց մեջ Ռուբեն Սևակն ու Դանիել Վարուժանը: Մյուս երեքն են՝ Օննիկ Մաղագայան, Վահան Քեհյայան, Հարություն անունով մի հացթուխ: Երեկոյան ժամը 12-ին հասնում է նրանց սպանության լուրը, իսկ մեկնելուց ընդամենը 24 ժամ հետո ԿՊՈԽի հեռագիր է ստացվում, որ նրանք պետք է ազատ արձակվեն: Ականատես Հասան անունով թուրք կառապանի պատմությունը բացում է սպանության հանգամանքները: ճանապարհին կառքերը կանգնեցնում են: Կարծում են ավագակների հարձակում է, բայց ոստիկանության պաշտոնյան ակնածանքով բարենում է անձանոթին, որին հետևում էին չորս ուրիշներ՝ մինչև ատամները զինված: Տեղափոխությունն այսպիսով խաբեություն էր, նախապես ծշգրտորեն նշակված էր հինգ զոհերի սպանության ծրագիրը: Նրանց ծեռքերը կապված էին և դիմադրել չէին կարող: Կառապանն անկասկած նկատի ունի Սևակին, երբ նշում է. «Անոնցմէ մեկը երիտասարդ մըն էր սև մորուցով և վառվուն աչքերով»:² Ոստիկանները խուզարկում են զոհերին, կողոպտում նրանց ունեցածը և հեռանում: Կառապանը մնում է և հեռվից դիտում սարսափելի տեսարանը: Դահիճները հարձակվում են հինգ զոհերի վրա, մերկացնում, կապում ծառերին. «Հետո չեթեապետը և իր մարդիկը իրենց դաշույնները մերկացուցին և սկսան դանդաղորեն և հանդարտ կերպով զանոնք մորթուտել: Դատապարտյալներու աղաղակը և անոնց հուսահատական կատաղությունը սիրտս կօմլեին»:³

1 Հովհաննես Չիլինկիրյան, Ռուբեն Սևակ և «Փրցվելիք ուղեղներ», փարիզ, 1985, էջ 34:

2 Արմեն Սևան, Նահատակ գրողներ, էջ 87:

1 Արմեն Սևան, Նահատակ գրողներ, էջ 89:

Աքսորի ժամանակ Ռուբեն Սևակը զարմանալի անվրդով էր թվում, լավատես՝ վաղվա օրվա հանդեպ: Համենայն դեպս, 1915-ի հունիսի 17-ին Զանգըըցից գրում է Յաննիին. «Ծառ հանգիստ եմ... մի՛ մտահոգվիք ինձի համար: Ծնորհոցն Աստուծո քիչ ատենեն արդարությունը կվերականգնվի և մենք միասին կըլլանք»: Ինչպե՞ս վերականգնել չեղած արդարությունը, ինչպե՞ս ապավինել չընդունած աստծուն: Նրան հանգիստ չէր տվել մահվան գաղափարը, բայց այդպես էր թերևս նրա գրականության մեջ միայն: Բանգի ստեղծագործողի ու ստեղծագործության, կյանքի ու գրչի անմնացորդ համընկնումը անխուսափելի օրինաչափություն չէ: Անհողողդ մոտենում էր նահատակության անագորույն պահը, ստեղծագործողն ու ստեղծագործությունը ողբերգականորեն միաձուվեցին: Ընդամենը մի օր առաջ, օգոստոսի 25-ին հեռագիր ուղարկեց կնոջը. «Վարուժանին հետ Այաշ պիտի երթանք, նամակնիդ հոն դրկեցեք: Ռուբեն»:²

Նահատակության գույժը լսելուց, Կ.Պոլսից հեռանալուց հետո էլ Յաննի Սևակը չէր կորցրել հույսը: 1915-ի նոյեմբերի 4-ին գերմանական դեսպանատան թարգման Հայկ Թայքեսենյանին գրեց. «Կտառապիմ: Աստուծո սիրում, ազնվությունը ունեցեք երթալ տեսնելու տիկին Վարուժանը և իրենց հարցնելու, թե ինչ եղած է մոնս. Տոլչի աշխատության արդյունքը՝ ամուսինին մասին: Ինձի համար ատիկա մեծ կարևորություն ունի. որովհետև դեռ ձեռքս ապացույց մը չունիմ Ռուբենի մահվան մասին և կհուսամ տակավին»:

Դարձյալ կիսնդրեն ծեզմե, որպեսզի իմ կողմես աղաչեք Կոմիտաս վարդապետի, հոգեհանգիստ մը կատարելու համար»:²

Միքայել Շամտաճյանը ուրիշ ազատված հայերի հետ մեկնելիս Թյունեյ գյուղից այն կողմ տեսնում են ծամփեզրի սեզե-

2 <ովկիաննես Զիլինկիրյան, Ռուբեն Սևակ, էջ 67:

3 «Ծանթ», Կ.Պոլս, 1918, թիվ 2, էջ 15-16:

րով ծածկված, ջրի դիմացի ափն ի վեր, հինգ հողարքերը:¹ Դանիել վարուժանի և Ռուբեն Սևակի աջուններն այնտեղ են:

Պոլսի ոստիկանապետը, նկատի առնելով, որ տիկին Յան-նի Սևակը գերմանացի է, խարխրում է, թե բժիշկ Սևակին շուտով պետք է ազատեն, Գերմանիա ուղարկեն: <Ուսալքված Յաննին վերջապես բղավում է ոստիկանապետի երեսին, որ խարում են իրեն և դիմում Գերմանիայի դեսպան Վանգենհայմին: Սա էլ մի քանի անգամ չընդունելու հետո, վերջապես, տիկնոց պաղատանքին՝ փրկել իր ամուսնուն, պատասխանում է. «Դուն թշվառական գերմանացի... լրեցիր ազգդ, ամուսնացար այս հայուն հետ և հիմա կուգաս խնդրելու, որ ազատեն զինքը: Ան ետ չպիտի գա մեյ մըն ալ: Անոնք մեռնելու գացին»:

Տիկին Սևակ սարսափած Վանկենհայմին անմարդկային պատասխանեն, ծեռքը սուրի մը պես կմոտեցնե դեսպանին երեսին «Մանչ զավակ մը ունիմ» կըսե «անիկա պիտի մեծցնեմ, այնպես, որ օր մը պիտի գա իր հորը վրեժը առնե գերմանացիներեն»:²

Յաննի Սևակը մերժեց գերմանական հպատակությունը, ապրեց իբրև հայ, երբեք գերմաներեն չխոսեց, երեխաներին հայեցի դաստիարակություն տվեց, տպագրեց բանաստեղծությունների մի քանի գրքեր ֆրանսերեն, վերջինը՝ «Ի հիշատակ մահից ուժեղ մի սիրո»: Յաննի Սևակը վախճանվեց Նիցցայում, 1967-ի դեկտեմբերի 28-ին: Իր կտակի համաձայն հուղարկավորությունը կատարվեց հայ Եկեղեցական ծեսով, Նիցցայի Ս.Աստվածածին հայկական Եկեղեցում:

Լևոն Սևակը 1939-1945-ի երկրորդ համաշխարհային պատերազմում ֆրանսիական բանակում կռվեց գերմանական ֆաշիզմի դեմ: Ռուբեն Սևակի զավակները բնակվում են Ֆրանսիայում:

1 Ս.Շամտածյան, <այ մտքին հարկը եղեռնին, Կ.Պոլիս, 1919, էջ 61-62:

2 <Ովկիաննես Զիլինկիրյան, Ռուբեն Սևակ, էջ 37:

«Ինձ համար գրելը երգել է: Բոլոր
միսիթարությունս սա երկարի փոքրիկ
գրչիս մեջն է: Ու մենավոր ապաստանիս
մեջ՝ ծմբան գիշերներ, ինձմեն երջանիկ
մարդ չէ կարելի երևակայել՝
ոտանավորի մը ավարտումեն վերջ»:

ՈՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ

Նրա հրատարակած միակ ժողովածուն՝ «Կարմիր գիրքը» ամփոփում է երեք պոեմ: Երրորդը՝ «Մարդերգությունը» մարդկային գոյի հանելուկների խորախորհուրդ վերապրումն է: Այն եռամաս է, համապատասխան՝ ծնունդ-կյանք-մահ ընթացքին. առաջինը՝ «Գյուղական եկեղեցինն մեջ», երրորդը՝ «Գյուղական ճամբուն վրա», երրորդը՝ «Գյուղական գերեզմանատան մեջ»: Եկեղեցուն աստված ու դարերն են՝ բայց քարացած. ժամանակը մեռելորեն ննջում է չորս պատերի անհունի մեջ: Ինչպես է անհունը տեղավորվում փոքրիկ, փակ տարածությունում: Դա թերևս գեղրավեստի գաղտնիքն է նախ.

*Քար քարի վրա, ծներ էր, հըլու՝,
Առանց արվեստի, առանց մեծ ոժի,
Պարզ, ինչպես ծառ մը, որ հողեն կ'ածի:*

Բանաստեղծական խոսքը անհնարինը դարձնում է հնարավոր: Երևակայությունն իր թոփչքի մեջ անցավորը կապում է անանցին: Գեղարվեստի այս կախարդանքը բացատրվում է պարզ անարվեստությամբ: Պարզության խնդիրն իբրև գեղարվեստի կատարելության չափանիշ շոշափել է, և դրան չէ, որ ուզում ենք անդրադառնալ: Ուրբեն Սևակին բնորոշը, որ բնորոշ է նաև նրան ժամանակակից և հոգեհարազատ, նույն ուղ-

դության բանաստեղծների՝ Ատոմ Յարձանյանին (Սիամանթո) և Դանիել Վարուժանին, թե՛ գեղարվեստի, թե՛ գոյի առեղջվածները կյանք հասկացությունը ելակետ ընդունելով՝ իմաստաբանելն է: Սա բանաստեղծական հոյակապ իմաստաբանություն է, հավերժող տարերք: Կյանքի ողջ ընթացքն անբաժան է մահից (չորս պատերի անհունի մեջ «ծեր գեղջուկներ մեռնիլ կը սորվին...»): Կյանքն իր սկիզբ-ընթացք-վախճանով անվախճանության կրողն է: Մարդկությանն ամենից շատ տանջող ցավը պարունակող այս հակադրամիասնությունը մի լուծում է գտել. վախճանավոր կյանքը միաձուվում է անվախճանությանը հոգու անմահության հավատով: Կրոնը մարդկությունը հորինել է մահվան սարսափին ընդդեմ հանելով անմահության երազը: Թեև բանաստեղծը հայտնում է, որ բնավ չի ծաղրել «Մեծ հույսը», բայց ավարտում է իեզնանքով. կրոնական շինությունները կենդանիների գոհաբերության կենտրոններ են սոսկ, սպանդանոցներ («Ու հոն - զլխարկնիդ բացեք վեհերուն - Գերեզմաննոցն է կենդանիներուն...»): Կյանքի իր ըմբռնումը Աևակը հակադրում է դատարկ «Մեծ հույսին», որը իեշտությամբ «մեռնել սովորելու» միջոց էր, կույր հավատ՝ վճռականապես անընդունելի:

Կյանքից այն կողմ՝ անվախճանությունը «միստիք, լոելյայն», առանց ժպիտի ու առանց ցավի վիճակ է, անշարժություն, ուր.

Առանց աճելու, ա՛ռանց նվազելու,
Հազար դարերու ու անհուններու
Մտերմության մեջ կ'ապրեին, - հեռո՛:

Այսպես ապրելու պատրանքը հակադիր է կյանքին, որի հիմքում ընկած է աճելության սկզբունքը: Անհունությունը դրա բացակայությունն է, ուր «Բան մը կար Կյանքեն անջատ, Կյանքեն վեր»: Նույնն է, նույն ձգտումը, նույն պատրանքը. «Այդ՝ Մահ-

վան իսկ մեջ ժխտումն էր Մահվան...»: Անսահման անուրջում, եթե լինի էլ այդ ժխտումը, մարդը դարձյալ ապրում է լույսի ու խավարի, երկրի ու երկնքի միջև, ինչ որ «... անշեց է պիտի շիզի» գերեզմանի մթության մեջ: Գեղեցիկը կյանքն է իր բոցով, իր երջանկությամբ ու տառապանքով, իր պայքարով ու համապարփակ սիրով: Եկեղեցին գեղարվեստի հրաշք է, քանզի ածել է ծառի նման. կենսալի լինելություն, որ չորս պատերով ամփոփված շինությանը տալիս է անպարունակելին պարունակելու վիթխարի կորով: Այստեղ խաչաձևվում են երկինքն ու երկիրը, կյանքն ու մահը:

3

«Մարդը գոհ ու երջանիկ է զգում այն դեպքում
միայն, եթե ինքն իր հետ է, իր էության մեջ»:
ՀՅՈՒՂՎԻԳ ՖՈՅԵՐՓԱԽ

«Մարդերգություն» - ամենաուղիղ իմաստով նշանակում է, որ մարդն է պոեզիայի, ստեղծագործության կենտրոնը, մարդն է թե՛ իր իսկ բնության, թե՛ արտաշխարհի, թե՛ տիեզերական գոյի իմաստների բանաստեղծացման ակունքը: Հանրահայտ բնորոշման համաձայն գեղարվեստական գրականության առարկան մարդն է, և եթե Սևակը սա էր հաստատում իր ընտրած վերնագրով ու նյութով, այժմ կթվա, թե դրանով առանձնապես ուշագրավ բան չէր ասում: Բայց 1910-ն էր և պետք է հիշել, որ փիլիսոփայական անտրոպոլոգիան դեռ շարունակում էր սաղմնավորվել կյանքի փիլիսոփայության մեջ¹ (իսկ դրանից ավելի վաղ՝ գերմանական ռոմանտիկական փիլիսոփայությունում):

I Մաքս Շելերի «Մարդու դիրքը տիեզերքում» և «Ելմուտ Պլեսների «Օրգանական աստիճանները և մարդը» փիլիսոփայական անտրոպոլոգիայի հիմնաղիք աշխատությունները լույս տեսան 1928-ին:

Այստեղից կարելի է երկու կարևոր եզրակացություն անել, մեկը՝ Ռուբեն Սևակի տեսական կողմնորոշումների, մյուսը նրա պոեզիայի վերաբերյալ:

ա/ Նրա աշխարհայացքի և ստեղծագործության հիմքում ընկած անտրոպոլոգիական սկզբունքները պետք է որ համընկնեն առավելապես կյանքի փիլիսոփայության մշակած կոնցեպցիային: <արկավ, որոշիչ նշանակություն ուներ և ոռմանտիկական ավանդույթը:

բ/ Մարդերգությունը որպես ստեղծագործական հարցադրում, որով ներթափանցված է Սևակի աշխարհայացքը, միանգամայն նորարարական էր:

«Կարմիր գրքում» առկա են բանաստեղծի ողջ ստեղծագործությանը բնորոշ գլխավոր խնդիրները. խորագույն մտահոգությունները, առկա է մարդու և կյանքի այն ըմբռնումը, որն աղերսվում է կյանքի փիլիսոփայության հոսանքին: Սևակի մոտ այն կարող էր հատկապես արձագանքը լինել Ֆրիդրիխ Նիցշեի փիլիսոփայության, որի հանդեպ նա երկակի վերաբերմունք ուներ: «Բժիշկին գիրքն իրցված էջերում» մի տեղ նա նշում է, որ աշխարհի բոլոր մարդասպաններն ու չարագործները չեն կարող այնքան երիտասարդ հոգիներ սպանել, որքան մի Շնուպենհաուտեր, Նիցշե, Բայրուն: Մելամաղնությունը, հուսահատությունը, հոռետեսությունը Սևակը դնում է «Այլասերում» վերնագրի տակ, որպես վաղվա հիվանդություն՝ «հիվանդություններեն հոռեգույնը»: Այս ախտով տառապող երիտասարդների վրա ունեցած ազդեցության մասին է խոսքը: Իսկ հյուծախտի ծգնաժամում Սիամանքոյի ապրած մահվան տագնապին և կյանքի հաղթանակին ու այս վիճակում հղացված բանաստեղծական պոռթկմանը նվիրված «Զմեռնելու համար» բացարիկ գործում Սևակը դիմում է Նիցշեին, հակառակ նպատակով. «Ո՞չ, Դյուցազնորենը գրողը երիտասարդ չպիտի մեռներ: Ան պիտի ծառանար ահավոր հիվանդության դեմ... «Մարդը ստեղծված է պայքարելու, ու կինը՝ ռազմիկը մխիթարելու համար», կգրե

Նիցշե»: Նիցշեն մղում է անձնասպանության, Նիցշեն փառաբանում է կյանքի պայքարը. Սևակը այսպես կարող էր ընկալել գերմանացի փիլիսոփային ոչ միայն այն պատճառով, որ վերջինիս երկերը իրենց սիմվոլիկ, գեղարվեստական բնույթով տարբեր ընկալումների, մեկնաբանությունների առիթ էին տալիս, այլև այն պատճառով, որ ինքը Սևակը կյանքն ու մահը, լավատեսությունն ու հոռետեսությունը բնավ էլ չէր բաժանում խոր անդունդով: Կյանքի փիլիսոփայության հարցադրումներին նա կարող էր ծանոթ լինել ոչ միայն Նիցշեի երկերով, այլև անմիջական ուրիշ աղբյուրներից: <ակառակ դեպքում, այսպես ասած՝ երկրորդական արձագանքներից. չմոռանանք, որ ամենաէականը այս փիլիսոփայության տեսակետից՝ ռեալականությունը, գոյք որպես կյանքի շարժում, լինելություն դիտելը, կյանքայնությունը ծշմարտացի աշխարհայացքի, ծանաչողության հիմք համարելն է: Բանականությունն անբավարար է, փիլիսոփայական աշխարհընկալումը բխում է կյանքի լիարժեք ապրումից: Սա տարածված, իշխող մտայնություն էր:»¹

4

«...կյանքը կրնա ինքն իրմով գեղեցիկ ըլլալ, բայց կյանքը ինքն իրմով կյանք չէ: Կյանքը և բնությունը իրար միանալով է, որ կկազմեն կյանքը...»: Նամակներից մեկում հայտնած այս շատ կարևոր միտքն ինքնին անհասկանալի, ավելին, անհաջող ձևակերպում կնկատվեր, եթե իմաստավորված տեղ չգտներ նրա գործերում: Բնության անխուսափելի դերը կյանքի հաստատման մեջ պայմանավորված է առկա գոյության և իդեալի՝

1 «...քաներորդ հարյուրամյակի շեմին... կյանք հասկացությունը կենտրոնական տեղ գրավեց, դառնալով ողջ իրականության ու բոլոր արժեքումների ելակետ-մետաֆիզիկական, հոգեքանական, բարոյական, գեղարվեստական», - գրում է կյանքի փիլիսոփայության խոշորագույն ներկայություններից մեկը՝ Գերոգ Զիմմել (Г. Зиммель, Конфликт современной культуры, Пг. 1925, стр. 17):

Սևակի ստեղծագործությունում որոշիչ, հակադրությամբ: Դա շատ հստակ արտահայտված է օրինակ, «Թրուպատուրները» բանաստեղծությունում, ուր մեքենաների երկարե դարին, դրամապաշտությանն ընդդեմ թշվառության հետ հաշտ.

*Կ'ապրին նախնական կենցաղով ազատ,
Ազատ Բնության որբերն հարազատ.*

Թրուպատուրները:

Տրուբադուրը՝ միջնադարյան Պրովանսի երգիչը ասպետական գրականության բնորոշ կողմերով չէ ներկայացվում այստեղ, այլ որպես գեղեցիկի, ազատ ստեղծագործության, ազնիվ ինքնազնիաբերման ու նվիրումի կրող՝ արվեստագետ, բանաստեղծ՝ բոլոր ժամանակներում: Իդեալային անցյալում, «Հին աստվածաբնակ դարերում» վսեմին, «Արվեստին սրտանվեր» ծառայող տրուբադուրները իրենց հայր Հոմերից սկսած անմահանում են, հակադրվում գեղարվեստին թշնամի նոր ժամանակներին («- Վախ, արձաթն Արվեստն հանեց կախաղան»): <ին և նոր դարերի այս հակադրության մեջ բանաստեղծը պաշտպանում է արվեստագետի բացառիկության սկզբունքը: Արվեստագետը՝ բացարձակ ազատության մարմնացումը, հավիտենությամբ ապրող և իրականության երևույթների մեջ հավիտենությունը խտացնող այդ ուժը պատմական մեծ առաքելության կոչումն ունի. «Առաջնորդելու մարդկությունն ամբո՞ղջ»: Իր ազատությունը նա ծեռք է բերում տառապանքով, տառապանքի մեջ և սրանով իսկ լույս ու մուտի, ժպիտի ու դառնության կրողն է միաժամանակ: <ակադրությունների մեջ արվեստագետի ռոմանտիկական այս կերպարի ապրելու գենքը հեգնանքն է.

*Բախտը, տառապանքն, հարափո՞խ հովեր
Իրենց դեմքին մու՞թ ժպիտ մ'են տվեր,
Կյանքը ժանչցողի ալեկո՞ծ ժպիտ:*

Ու իրենց բռնի՛ ծնին մեջ հտայիտ,
Խոիվ մազերնուն ներքև ալսոր,
Աշխարհքն հեգմելու հով՝ մունին աղվոր
Թրուպատուրները:

Որքան էլ նա ձգտի փակվել մաքուր էսթետիկականի բարձր ոլորտում՝ «Վսեմին, Արվեստին, Սուլր Իդեալին» տրվելով, ունալ կեցությունը պահանջում է իրենը, իրականության ողբերգականության խոր ու ցնցող վերապրումը դառնում է ստեղծագործական փաստ: Իդեալայինն ու իրականը մնում են հակառակ ծայրերում, որոնց միջև ծավալվում է արվեստագետի գործունեությունը: Այս հանգամանքը ցայտուն դրսնորվում է Ռուբեն Սևակի ողջ գրական ժառանգությունում, որոշակիորեն քննվելով ոչ միայն «Թրուպատուրներում», այլև ի թիվս այլ էջերի, «Որո՞ւ համար...» ծրագրային բանաստեղծությունում («ստրուկ, անզգամ նյութի» և իդեալի բախումը): Տրուբադուրի կերպարին զուգակցվում է ասպետի կերպարը՝ դարձյալ իդեալի մարմնացում, որ ներքին լարերով կապված են հեթանոս շարժման, ընդհանրապես նեռոռմանտիզմի բարձրացրած հերոսի գաղափարին, զոհաբերության գնացող ասպետը («Ասպետին երգը», «Գացող մարդը»), իր վերջին երգը իդեալին ուղղող տրուբադուրը («Զոն»):

Ռուբեն Սևակի ստեղծագործությունը ներշնչված է դասական ռոմանտիկական այս սկզբունքների ոգով, որը նրան տարավ հայկական նեռոռմանտիզմի բարձունքները, չկա այստեղ էսթետիկական թե փիլիսոփայական, գեղարվեստական թե ազգային, քաղաքական, սոցիալական որևէ բնորոշ խնդիր, որ ցայտունորեն ու միաժամանակ ուրույնորեն տեղ չունենա նրա մոտ: Նրա նեռոռմանտիզմը չի բացառվում, այլ հաստատվում է նույնիսկ հետևյալ խոստովանությամբ. «Ես ավելի իրապա՜շտ եմ, ամեն բանե առաջ իրականությունը գիս կգրավե, ամեն իրականութենե վեր մե՛կ իրականությունը մը կճանչնամ ես՝ ապրվա՛ծ, զգացվա՛ծ կյանքը և ոչ թե երևակայված կյանքը»:

Տեսանք, թե ինչ էր հասկանում Սևակը կյանք ասելով, դա հենց այն կյանքն էր, որն ապրելու, որն իրագործելու համար անհնար էր չհակադրվել հասարակական գոյին, իրականությանը: Այդ գոյի ահավոր պատկերները իր արվեստի նյութ էր դարձնում իրականության արտացոլման նեռումանտիկական եղանակով միայն: Նրա երկերում ուղիղ իմաստով ռեալիզմ որոննելիս ոչնչի չենք հանգի: Նույնիսկ «Բժիշկին գիրքեն փրցված էջերում», որ ծայրեծայր լի են կյանքով, վերցված են կյանքից, հեղինակին պատահած իրողությունների նկարագրություններ են, դարձյալ ռեալիզմ՝ որպես արտացոլման որոշիչ եղանակ, չկա: Կա նկարագրությունների ռեալիստականություն, որը այս կամ այն չափով, այս կամ այն ձևով հատուկ է գեղարվեստական բոլոր ուղղություններին: Արձակ այդ էջերում ցրցված են հայկական նեռումանտիզմի գաղափարների հիմնավոր ձևակերպումներ, և բանն էլ այն է, որ դրանք ոչ թե պատահական հայտարարություններ են թեկուզեն երկի հենքին հմտորեն հյուսված, այլ ողջ նյութն ի վերջո շարադրված է հանուն այդ գաղափարների հաստատման, գեղարվեստական մարմնացման:

Գլխավոր նպատակը՝ հայության վերածնությունը իր լույսն առնում էր դյուցազնական, հեթանոսական դարերից: <Այրենինքից հեռու, մեծ կրքով ու ստեղծագործական բռնկուն ավյունով Ռուբեն Սևակը նվիրվում է այդ մեծ գաղափարին: Առաջին հայցքից՝ «Բժիշկին գիրքեն փրցված էջերը» բժշկական գրուցներ են, հեղինակն ասես հետամտում է առողջապահական, ուսուցողական, օգտապաշտական նպատակներ: Իհարկե, դա բացառել չի կարելի: Բայց, առավել ևս մեզ համար, որ միայն դրանում չէ այդ արձակի բուն նշանակությունը, քանզի գործ ունենք գեղարվեստական անուրանալի արժեքով առանձնացող էջերի հետ, այլև առողջապահական նպատակները երկրորդական են, մարմնացած այդ խնդիրների համեմատությամբ, որ գտնվում էին ինչպես Սևակի, այնպես էլ ժամանակի հայ

գրականության կիզակետում: Ավելին, հանգամանքների գուգաղիպությամբ միասնացնելով բժշկի և արվեստագետի կարողությունները, Ռուբեն Սևակը լավագույն հնարավորություն ուներ հարցերը ներկայացնել տեսական ու գեղարվեստական առավել համոզիչ, շոշափելի ու ներդաշնակ կերպավորումով: Եթե առողջ ցեղի, սիրո, ուժի պահանջները հեթանոս շարժման ներկայացուցիչները հաճախ երևան էին բերում կոչերի ձևով՝ իրենց ծրագրային ելույթներում ու նաև բացառապես գեղարվեստական արտացոլումների մեջ, ապա Սևակը, հիմնավորում էր կյանքային-բիոլոգիական էությամբ, որի մեջ հմուտ էր, իրավասու՝ ժամանակի գիտության ամենաբարձր մակարդակով: Այսպես օրինակ, երբ «Այլասերում» կամ «Վեցերորդ զգայարանք» գործերում նա գրում է, որ հայությանը «Ոսկեդար մը պետք է, նոր Ոսկեդար մը», «Այլասերո՞ւմ, ոչ Վերածնունդ», կամ՝ «Պատրաստենք մեր զավակները այդ մեծ օրվան համար: Ու սորվեցնենք իրենց Վերածնունդի առաջին օրենքը: Առողջ սեր, առողջ սեռ», ապա դա նախապես պատճառաբանում էր ոչ միայն գեղարվեստորեն, ոռմանտիկական գրավիչ ծովզածքով, այլ գիտականորեն: Սեօի և սիրո, կյանքի ծարավի, ապրելու կամքի, առողջ, կենսունակ սերնդագործման շուրջ դատողությունները հեթանոս շարժման հայտանիշներն են, որոնք ի մի են բերվում կյանքի փիլիսոփայության առաջնորդությամբ: Ուշագրավ շատ նկատառումներից հետևյալ տողերը ևս ցույց են տալիս հեթանոս շարժման առնչությունները. «Եթե Եվրոպան է, որ կինչեցնե այլասերումի ահազանգը, մի մոռնաք, որ այդ սարսափելի ախտը ամենեն առաջ մեր ցեղին կսպառնա՝ իբրև իին ցեղի մը»: Այստեղից իսկ երևում է, որ կյանքի փիլիսոփայությունն իր բիոլոգիական մեկնաբանությամբ Արևմտյան Եվրոպայում միանգամայն գործնական նշանակություն էր ձեռք բերել:¹ Մի

I Վիլելմ Դիլթյու կյանքի փիլիսոփայության առաջնորդ կապում էր «ծերացող ազգերին» հատուկ «հնքնաներզնության» հետ (տես Ա.С.Богомолов, Немецкая буржуазная философия после 1865 года,

բան, որ ինչպես համոզված էին հայ նեռումանտիկները, ավելի կարևոր պետք է լիներ կործանման եզրին կանգնած արևմտահայության համար: Եվ նույն ոգով էլ նրանք նախապատրաստում էին բաղձալի վերածնուռնդը, բնական կյանքի դիրքերից քննում, մարմնավորում, փառաբանում էին կամքը,¹ կենսական մղումներն ու ցեղի կենսական ակունքները:

Սևակի ստեղծագործություններում հատուկ տեղ է գրավում սերը, որը ծգուում է «բացարձակ իդեալին», ըստ որում, այն «անձնական, կերպարանավոր, երկրային, բնական» իդեալն է («Փոխան հարսանիքի» գրվածքում): Սերը կյանքի հոմանիշն է: Արուն և էգը, մարմինն ու հոգին խառնվելով «միանգամայն Տիեզերքին ու Աստուծույն կխառնվին»: Սիրո վերածումը տիեզերական ուժի, միաժամանակ և վերածումն է ողջ գոյի ծավալման ու ճանաչողության ելակետի, կյանքի տարերքի այս արտահայտության մի ծայրն այսպիսով մարդն է, մյուսը՝ տիեզերքը: Տիեզերքը՝ հավերժության կրողը, ինչպես կարող է ընդունել սերը եթե ոչ մահվան միջոցով.

Մեռնիլ, մեռնիլ... Անմահանալ մահվան մեջ.

Մեռնիլ... Գրկիդ գոզն, այսպես, մեր սերն անշեց,

Անհունին մեջ ծառացընել տիրական...

Հայկական նեռումանտիզմում կա գոհաբերության և հարության գաղափարը իրու բնության աշնանային թառամումի

Մ., 1969, ստ. 135): Ահա ընդամենը մի գիծ, որ հստակ ցույց է տալիս ծերացած, «հին ցեղի» ըմբոնման տարածումն ու առնչությունները: Ըստ որում, ըմբոնումը շարունակեց իր գոյությունը և մասնավորաբար հայ գրականության մեջ բառացի ծևակերպումներով. ահա օրինակ, Շահան Շահնուրը «Ավագ ուրբաթում» գրում է. «Սեր արյունը հին է, ծեր է և պառվցած: Ավիշ, ավիշ պետք էր մեզի...»:

I Սա համապատասխան մեկնաբանությամբ, գալիս էր Արթուր Շոպենհաուտերից, որի փիլիսոփայության հիմնական հասկացությունը, գոյի ներքին էությունը՝ կամքը, իմացությունը ենթարկում է իրեն որպես մարդու և ցեղի պահպանման միջոց:

և գարնանային վերակենդանացման (Լ. Շանթ), դիոնիսիզմի արտահայտություն: Դիոնիսոս աստծու երևույթի մեջ, Նիցշեից եկող, հաճույքի և տառապանքի, մահվան և կյանքի, նահատակության և հարության, ողբերգության և վերածննդի միասնության փիլիսոփայությունն էլ հիմք դարձավ հեթանոս շարժման: Սևակի մոտ սերը և մահը նույնքան անջակտելի են, նույնիսկ «Սերը սեր չէ, մահը մահ չէ, սերն է մահ»: Սերը վաղանցուկ է, մահն է հավերժական, մահվան մեջ անմահանալու ձգտումը տիեզերքին ծովալու ձգտում է, սերը մոլոր անդունդի մեջ անվախ ընկլուգումն է: Սիրո մեջ բախվում են աշխարհի եղերական հակասությունները, այն ընդունում է այնպիսի վիթխարի չափեր, որ Աստված իր ամենակարողությամբ անգամ փոքրանում է նրա առաջ.

*Սերն հեթանոս երջանկությունն է, խաչված,
Սերն այն կուրքն է, որուն առջև ծնրադրած
Որքի՝ մը պես պիտի ողբար ի՞նքն Աստված...*

Խաչված երջանկություն. սիրո բարձրագույն աստիճաններում համատեղվում-փոխհատվում են մարդկության մեծագույն երազները, կյանքի հավերժական սիմվոլները, գերագույն հավատալիքները և գուցե գերագույն փիլիսոփայությունը: Տիեզերական այդ սերը շարժման մեջ է դնում հակընդեմ, հզոր ուժեր, որոնց հավիտենական ալեբախման մեջ մարդն ապրում է հաճույքի ու տառապանքի իր բաժինը և չքանում հավիտենապես: Ահա թե ինչու մահ-անհունը, «ճերմակ Ոչինչն է» իրականը և գեղեցիկը, «Ջունին» բանաստեղծությունը թերևս գոյի ու չգոյի հարաբերության ծշտո՞ւմն է գեղարվեստական հոյակապ ծևի մեջ: Դժվար է նման բան պնդել, Ոչինչն այստեղ խավարի, սառնության, մոռացության, մահվան արտահայտությունն է: Այս սառցե, ճերմակ և միաժամանակ խավար իրականությունն ու հրաշքը այնուամենայնիվ կա որպես այդպիսին, այսինքն՝

ՈՉԻՆՉԸ ինչոր բան է, իհարկե կյանքի հերքում, բայց և ոչ բացարձակ չգոյ: Սիրո և մահվան համադրումը էլությամբ ռոմանտիկական սուր հակադրություների համադրում է: Ժամանակին նկատվել է, որ, չունենալով անդենականի հավատքը, աշխարհը շատ սիրելու համար Սևակը չի կարողանում իրենից վաճել մահվան հաճախանքը: Արմեն Սևանի այս կարծիքն ուղղակիորեն հաստատվում է ոչ միայն հոռետեսության, հուսահատության դեմ «Բժիշկին գիրքն փրցված էջերում» ասվածով: Ավելորդ չէ դրան ավելացնել մարդատյացի հոռետեսությունից հրաժարվելու նրա հորդորը՝ նամակներից մեկում. «Հապա որո՞ւ համար են ապրելու հաճույքը, տեսնելու վափաքը, սիրելու կիրքը ու տենչալու՝ տենչը: Որո՞ւ համար են արվեստները, գեղեցիկը, բնությունը, կինը, համբույրը, առավոտը, գիշերին խորախորհուրդ բանաստեղծությունը...»: Կյանքի սերն է ստիպում հիշել մահը, և հետևաբար, սեր-մահ կապակցությունը բնավ էլ միապահաղ, ցուրտ նույնությունը չէ կամ «ճերմակ Ոչինչ»: Նույն «Զյունին» բանաստեղծությունում կա և «Կյանքը քրքից մ'է հտպիտ», և «Սիրո հին, հին դարերուն աստվածն ըլլալ կարծեցի» տողերը, այսինքն կյանքի կատակերգությունը, կյանքի հեգնանքը մահվան բեմի վրա, և հեթանոսական մղումները: Կյանքի ու մահվան բախման մեջ ձև են ստանում բանաստեղծին մտահոգող հարցերը, այն ամեն կարևորը, ինչով նա ապրում էր: Այդ բոլորը պետականացվում են հակադրությունների մեջ: Հակադրությունները հենց կյանքի, ավելին՝ տիեզերքի, որի մեջ ծավալվում է կյանքը, օրինաչափությունը, շարժման ռեալ ուժերն են: Օրինաչափ է նաև, որ «սերն է մահ» ասելով հանդերձ բանաստեղծն ամբողջ ծայնով օրինաբանի սեր-կյանքը.

Եկու՛ր, Եկու՛ր, Եկու՛ր սիրենք կաթոգին.

Ով չի սիրեր պիտի մեռնի առհավետ.

Սերը պետքն է, երա՛զն է, կյանքն է կյանքին...

Նրա բանաստեղծական աշխարհում սերը հնչում է ամենատարբեր երանգներով ու վիճակներով, ամենանուրբ, ներքին-անշոշափելի դրսևորումներից մինչև բոցոտ կիրքն ու հեթանոս վայելքը, և այդ հախուռն տարերքից մինչև անշափելի ընդգրկումներ: Եվ իր բոլոր դրսևորումներում սիրո երգը հնչեցնում է արտակարգ թեթևությամբ՝ ամենամեղմ, ասես մշուշում հալվող ցոլացումներից, հազիվ նշմարվող նվագուն ուրվագծերից անցնելով վառ, ազդու ու թանձր վրձնահարվածների, տրտմությունից՝ պողոթկացող ցնծություն, շշմեցնող հանդնությամբ խաղալով հակադրությունների հետ, իրար բախելով ու իրար խառնելով կյանքի ու մահվան, երկրի ու երկնի հակոտնյա ուժերը:

5

«Սիրո շողբերը» կարդալիս անհնար է չհիշել Պոլ Վեոլենի «Աշնան երգը». մելամաղձոտ նույն նվագը, նույն անբացատրելի վիատությունը, նույն կարծ տողերը մեղմ երաժշտայնությամբ և ռիթմն էլ զարմանալի տրտմությամբ թաթավուն.

*Երգը հուշքին
Սըրտիս խորեն
Կուլա ուժգին
Վըհատորե՞ն:*

Սեռողմանտիկների տեսական ու ստեղծագործական պրակտիկայում կիրառվում էին նրա փիլիսոփայության հիմնական որոշ դրույթներ ու հասկացություններ, որոշ այլափոխությամբ ու հարմարեցումով պատմական հանգամանքներին:

Պոեզիայում կա տխրության, անհանգստության մի տեսակ, որի հասցեն լավ հայտնի է՝ սիմվոլիզմ: Ընթերցողը հաճախ դժվարանում է բացատրել, թե այդ սիմվոլիստական տխրութ-

յունը ինչպես է հաջողվում ձանաչել առաջին իսկ ունկնդրումից, բանաստեղծության հնչականությանք, տրամադրությունների, մտածումների տարտամությանք, լեզվի փխրունությանք, գույների մեղմությանք, նրբաճաշակությանք: Միևնույն է, եթե սիմվոլիզմի կնիքը կա բանաստեղծության վրա՝ անջնջելի է: Եվ ուրեմն Ռուբեն Սևակի մի շարք բանաստեղծություններ կրում են այդ կնիքը, ակնհայտ ու դրանով իսկ չափազանց հետաքրքիր, բայց և դժվարացատրելի փաստ: Սևակին հատուկ է պոետական սուգգեստիոն (ներշնչում, ակնարկ, հուշում), անքոնելի հոգեվիճակներ արտահայտող մեղմերանգ, մարմրող պատկերները, հնչյունային-ինտոնացիոն աղոտ դաշնավորումները: Վերնագրով իսկ չափազանց խոսուն «Բասթելը», որ սիմվոլիստական բանաստեղծության մի հիմնալի նմուշ կարող էր համարվել, նույնքան բնորոշ է Սևակին, որքան հեթանոս ոգով գրված գործերը: Այդ բանաստեղծությունում պաստելային երանգների փափկությունն է, աննշմար անցումները: Անորոշ, տարտամ, մշուշի մեջ հալվող մի աշխարհ, Սևակի պոեզիայի անբիծ սիմվոլ անուրջների կարապով, տարակույսը արտաքին, ծավալվող ռեալականության հանդեպ, տրանսցենդենտալ էության հայեցությունը.

*Կապույտ սարի մը կատարին ամայի՝
Բաղեղապատ խարիսով գմբեթն հավատքիս
Տարակույսի անդունդն ի վար կհայի:*

Սա կարծես հնամենի իմաստության արձագանքն է. «Հեռագոյն քան որպէս էրն եւ զխորութիւն խորոց ով կարասց գիտել» (Ժողովող, գլ. է, 24), «Եւ տեսի ես զամենայն արարածս Աստուծոյ, զի ոչ կարասց մարդ գտանել զարարածն արարեալ ի ներքոյ արեգական. զոր միանգամ ջանասցի մարդ խնդրել՝ եւ ոչ զցոցէ. քանզի որչափ ասասց իմաստունն գիտել՝ ոչ կարասց գտանել» (Ժողովող, գլ. Ը, 17): ճանաչողության անսահմա-

նության, գոյի անսպառության և ընդգրկման անհնարինության այս աֆորիստիկ ծևակերպումների միջուկը՝ «Ունյանութիւն ունայնութեանց... ամենայն ինչ ընդունայն է» գաղափարն է:

Ժողովողը տարակույս չունի, որ ամենն ունայն է և քամու աշխատանք («...զի ամենայն ինչ ունայնութիւն է եւ յօժարութիւն ոգտոյ», կամ ինչպես նշված է՝ ըստ Եբրայերեն բնագրի. «...աշխատութիւն ոգտոյ», այսինքն հողմի, քամու աշխատանք): Այս համոզմունքն այսպիսով ամրապնդված է անհասանելի հեռու, անհասանելի խոր-ով։ Անհասանելիի առաջ մահկանացու մարդու բոլոր մղումները, ջանքերը, կարողությունները կնքվում են ունայնությամբ. միևնույն է, չի հասնելու: Իսկ «Տարակույսի անդունդն ի վար կիայի» բանատողը շունչ առնելով անհասանելի, անհատակի գաղափարից, հակառակ նշանակություն է ստանում – տարակույս հավատքի հանդեպ։ Սա ժողովրդի ունայնության անհատակ փոսը չէ: Եթե բանաստեղծը հավատք ունենար, չէր ունենա այդ տարակույսը։ Չէ՞ որ ժողովողն ամեն ինչ ի վերջո դնում է Աստծո վրա, մարդը որքան էլ որոնի, չի կարող հասու լինել Աստծո գործին, իմաստունն անգամ եթե ասի գիտեմ, դարձյալ չի կարող հասնել։ Այստեղից է ժողովողի աներկրայությունն իր իմաստության հանդեպ։ Աստծո գործերը անքննելի են. բանաստեղծը մենակ է, նրա համար չկա Աստված, չկա ոչինչ, որ իր վրա վերցներ բոլոր մտատանջությունների, ոգորումների, ներքին հակասության ու երկպառակության պատասխանատվությունը։

«Կապույտ սարի մը կատարին ամայի»՝ վերից վար, անդունդն է, պարզ է, այլ ուղղություն չի կարող լինել։ Բայց բանաստեղծի ուժը դրա իսկ հերքման մեջ է, բազմանշանակության և ոչ թե միանշանակության։ Հաջորդ տունը ցույց է տալիս միակ ուղղության անհնարինությունը։

*Բլուրն ի վար, բլուրն ի վեր՝ իմ կյանքիս
Խոպան ձամբան է, որ կ'երթա մենավոր...*

Ուրեմն «ի վարը» միայն ուղղություն չէ, այլ ժամանակ, կյանքի ընթացք տարածության մեջ, մենավոր, վերիվայր ծանապարհ: Իհարկե, մինչ այդ էլ, սարի ամայի կատարն ինքնին Ենթադրում էր հակադիր ուղղությունները, առավել ևս, երբ կա երկնքի, հեռավորի, բարձրի սիմվոլը՝ կապույտը: Իսկ մենավորն արդեն վիճակ է, ժակատագիր, պատմություն ու նաև ժողովուրդ՝ աշխարհի, ոճրագործության առաջ մենավոր ժողովուրդ (չի բացառվում և նման Ենթատեքստի առկայությունը): Շղթա կազմող բառերը այստեղ տալիս են հետագույնն ու խորքերի խորությունը, ժամանակ-տարածության մեջ: «Ի վարն» ունի մի, Ուութեն Աևակի աշխարհայեցության տեսակետից այլ կարևոր իմաստ ևս: Անհնար է «անդունդն ի վար կիայի»-ն կարդալիս գունե Ենթագիտակցաբար չզգալ նահկան գաղափարը: Եվ իրոք, հաջորդաբար, մենավոր ժամբան իջնում է դեպի վախճան.

Ու լերկ ժամբուն եզերքն ի վար իմ մոլոր
Բագիններուս ու մեղքերուս, վերքերուս,
Կրանիթե մահարձաններն են բոլոր:

«Բասթել» բանաստեղծությունում գրեթե միակ ռեալ, նյութական, ամուր և որոշակին «կրանիթե մահարձաններն» են, այսինքն միակ ռեալ. շոշափելին մահն է իր նշաններով: Պատահական չէ բագինը, «անաստվածության», ապրված, մարմնական կյանքի, հեթանոս գրական շարժման ամրապնդված հասկացություն: Բանաստեղծության մեղմ-մշուշոտ ընդհանուր տոնայնությունը չի խախտվում այս տողերով, դրանք սոսկ մի հիշեցում են մարմնական-նյութական «մեղքերի, վերքերի», հեթանոս բագինների անցյալ գոյության, որոնցից մնացել են «կրանիթե մահարձաններ» միայն: Նույն կապտավուն մշուշում գորշ-սևագույն մի կտոր է, մահկան գույնը, մելամաղձը: Ոչ սովորական է «բասթելը» նաև իրոք բանաստեղծական ամբողջություն: Այն կարելի է բաժանել երկու,

միանգամայն ինքնուրույն բանաստեղծության. առաջին տունը միացնելով հինգերորդից մինչև վերջինին.

Հոգիս նիհար նըկար մըն է բասթելի,
Ուր ոչինչ կա աչքին խոսող, ոչինչ վառ
Ուր ամեն ինչ մշուշի մեջ կը հալի

.....

Պուրակ, առու իր դաշտերուն մեջ չըկան,
Իր ծորերուն մեջ ո՞չ լելակ, ո՞չ նարկիս,
Որ քաղեի իմ սիրտիս քոյր աղջրկան:

Մոռցված ա՞փ մը ջուրի վրա հեռավոր
Աչքե հեռու, սեզերուն մեջ կը սահի
Անուրջներուս վայրի կարապը աղվոր...

Ու այս բոլորը կը դողա, կը հալի,
Մշուշի մը տարտամությանը մեջ ուր
Լացող դեմքի մ'ստվերը կա պաշտելի...
Հոգիս նիհար նըկար մըն է բասթելի:

Եվ երկրորդ, երրորդ, չորրորդ տներն առանձնացնելով որպես մի ամբողջություն.

Կապույտ սարի մը կատարին ամայի՝
Բաղեղապատ խարխուլ գմբեթն հավատքիս
Տարակույսի անդունդն ի վար կը հայի:
Բլուրն ի վար, բլուրն ի վեր՝ իմ կյանքիս
Խոպան ծամբան է, որ կ'երթա մենավոր...
Բասթելի մութ դաշտանկար մ'է հոգիս:
Ու լերկ ծամբուն եզերքն ի վար իմ մոլոր
Բագիններուս ու մեղքերուս, վերքերուս
Կրանիթե մահարձաններն են բոլոր:

«Բասթելն» արտաքուստ բնանկար է, իսկ այս ծնով անջատելով՝ առաջինը ստացվում է պայմանականորեն ասած՝ բնանկար-սիրերգ, երկրորդը՝ բնանկարի կեղևի մեջ իմաստուն որոնումը անհասանելիի և խորքերի խորքի: Դժվար չէ նկատել, երկրորդը՝ «Բասթելի» միջուկն է: Բանաստեղծի գյուտը երկուսը հանձարեղորեն միացնելու է, սերը և մահը, անհասանելի-հեռավորը, անհասանելի խորը և սահմանավոր, վախճանավոր հոգին: «Հոգիս նիհար նըկար մըն է բասթելի» - բանաստեղծության այս առաջին և վերջին տողը շրջանակում է ամենը: Ինչպես է անհասանելին տեղավորվում «Նիհար նըկարի» փոքրիկ շրջանակում, որ կարելի է տեղավորել ափի մեջ ու զմայլվել նրբությամբ, աղոտ երանգների ապշեցուցիչ համադրումով, ցնցվել ունայնության, մեծ տարակուսի, մենության ճակատագրի, անսկիզբ ու անվերջ, որևէ ժամանակում չտեղավորվող ճանապարհի պատկերներով, ապրել կյանքի ու մահվան անսահմանությամբ... և այս բոլորի մեջ հստակորեն անջատվող «Անուրջներուս վայրի կարապը աղվոր...», որը հաստատապես միայն սպիտակ ես պատկերացնում, թեև գույնի մասին ոչ մի ակնարկ չկա: Անուրջների սպիտակ կարապը, Ուրբեն Սևակի պոեզիայի անբիծ սիմվոլը:

Անսահմանությունը «Նիհար նըկարով» շրջանակելով բանաստեղծն ամենը մատուցում է որպես անրջող հոգու պատկեր: Բայց որքան էլ շրջանակված, ինչպես տեսանք, պատկերը միաժամանակ սահմաններ չունի: Սահմանավոր-անսահմանի համադրումը բարձրագույն արվեստով: Նկարն ավելի ու ավելի նրբացված, էսթետացված է, բառերը ոչ թե կայուն ու կարծր նշանակություն ունեն և ոեալ առարկաների իմաստների ուղիղ արտահայտիչն են, այլ բազմանշանակ են, շարժում: Կոնկրետ պատկերը չհասցնելով հստակ ուրվագծվել՝ չքանում է («Ու այս բոլորը կը դողա, կը հալի, մշուշի մը տարտամությանը մեջ...»):

Ուրբեն Սևակի բանաստեղծական խառնվածքին հարազատ էր մեղմ, ակնարկող սիմվոլիկականությունը: Սիմվոլիստական

կատարյալ արվեստը նշանակալի դպրոց էր բանաստեղծների համար: Սևակը յուրացրել էր այդ արվեստի գաղտնիքները՝ հղկելով, բյուրեղացնելով իր խոսքը: Կիրառելով սիմվոլիզմի պոետական հնարավորությունները, նա հղացավ սքանչելի բանաստեղծությունների մի փունջ. «Կարապներ», «Լեման», «Ետըլվեյս», «Վերջալույս», «Կ'արյունի» և այլն: Բայց ի՞նչ աներկրայելի փաստերի ճնշման տակ պնդե՞լ, որ Ռուբեն Սևակը որոշ գործերով սիմվոլիստ է և գուգահեռաբար գրած այլ գործերով՝ նեռումանտիկ: Կամ, այս իսկ տրամաբանությանք նույնացնե՞լ այդ երկու ուղղությունները: Չէ՞ որ կան նույնիսկ առանձին գործեր, որոնք, ասես, երկու ուղղությունների պուտիկաների խաչասերման արդյունք լինեն: Ահա, «Երգ երգոցի» առաջին տողը՝ «Երա՞զ, տեսի՞լ, անգո ստվե՞ր մանհոգի», որ հստակ ուղղություն է տալիս բանաստեղծության զարգացմանը տոնայնությամբ ու տրամադրությամբ, պատկերման եղանակով: Եվ առաջին տունը այդպես էլ կառուցված է: Երկրորդուն նույն տրամադրությունն է, բայց «անգո ստվերի» փոխարեն արդեն «կապույտը վծիտ» երերային անջանքով, և նույնիսկ՝ «քու կարմիրդ Պենկալյան վարդերու»: Բայց և այնպես միանգամից չի հրդեհվում այդ գույնը, այլ դժգունացվում, խառնվում է կապույտին: «Երազամած կարմըրության պես տժգույն. Գոզն աչերուդ կապույտն ունիս ջուրերու»: Հաջորդ տունն արդեն ոչ դժգույն կարմրակապույտը կա, ոչ էլ, առավել ևս, անգո ստվերն ու ցնորքը, այլ արցունք ու հեշտանք. «Շունչըդ գինո՞վ է», «Զայնը տարփոտ»: Այս հատվածն է համընկնում «Աստվածաշնչի», «Երգ երգոցի» սկզբին. համբույր և գինի, Սևակի մոտ ծնափոխված այսպես՝ «...հեշտանք, որ շրթներուդ մեջ կ'ըմպես»: Առաջին երկու տունն այսպիսով բանաստեղծի սեփական մուտքն է դեպի թեմա, գրված ժամանակի պոեզիայի, ավելի ծիշտ՝ սիմվոլիզմի ոգով, որը շատ հեռու է բնօրինակի կրքոտ, զգայական սիրո բաց նկարագրությունից: Հետաքրքիր է, որ Սևակի «Երգ երգոցում» բնօրինակի մի շատ կարևոր արտահայտությունը՝

«... զի բուռն է իբրեւ զմահ սէր», բերված է որպես բնաբան, իսկ տեցստում չի դրսնորվել: Արդեն տեսանք, սեր-մահ զուգահեռն ընկած է նրա մի շարք բանաստեղծությունների հիմքում: Կարելի է ասել, որ բուն «Երգ երգոցը» սկսվում է երրորդ տնից, իսկ հաջորդում արդեն «Ու մարմինեդ ծորող խունկը մեղավոր» տողով տեսիլը չքանում է վերջնականորեն՝ մարմնական վայելքի առաջ: Եթե փորձենք «Ետ պտտել» բանաստեղծությունը, կտեսնենք գույների, գծերի աղոտացում, կրքի մարում, կնոջ «Քանանու գինիեն» ավելի քաղցր մարմնից վերադարձ դեպի անհոգի ստվերը: Կթուլանան շեշտերը, կչքանա սիրո ըմբոշխնումը, կչքանա «Հազարբուրյան այս պատարագը», արբեցումը, որ հինգերորդ տաճ մեջ տեսողության, լսողության, հոտութելիքի շքեղ հաճույքներից հետո պիտի պարզենի շոշափելիքի աստվածային սարսուոը.

Հրաշագո՞... Ո՞հ, քու անդրիդ բյուրեղե,
Մրունքներուդ սարսուացնող ծյունն հրաշե՞կ,
Ու անանուն ցոլքը, որ քեզ կ'ողողե,
Մորթիդ թաքուն գանգուրներուն խուրձը շեկ...

ՀՐԱՇԱԳՈ՞-Ն մի բառ է, որի օգտագործումը պետք է արդարանա և հիմնավորվի, հակառակ դեպքում կարող է վերամբարձ ու փծուն տողեր ծնել: Խնդրի լուծումն իրոք մի հրաշը է: Այս տունը բանաստեղծության հուզական լարվածության բարձրակետն է, որին Սևակը հասնում է ոչ միայն սոսկապես կրքի ու սիրո ներշնչանքի նկարագրությամբ, այլ անկարելի հակադրությամբ: Մինչ այստեղ պարփակված հակադրությանն անցնելը չմոռանանք, որ Սևակն իր «Երգ երգոցը» պետք է գրեր նախ հակադրվելով աստվածաշնչայինին, քանզի այնտեղ Սուլամիթն ասում է. «Սեաւ եմ ես, եւ գեղեցիկ...» (Երգ երգոց, գլ. Ա, 4), և ավելացնում. «... ես սեւացեալ թխացայ, քանզի խեթիւ հայեցաւ ընդ իս արեգակն...»: Սևակի հերոսուիհին, հակառա-

կը՝ կապուտացյա, շիկահեր, արտակարգ սպիտակամաշկ է, և սա բնականորեն բանաստեղծական բոլորովին այլ երանգներ, այլ մեղեղի է պահանջում: Այստեղ չկա հարավի հզոր արևի ու հարավի կրակոտ աղջկա ջերմությունը, այլ հակառակը՝ անզո ստվեր, ճառագայթի տարտամ խաղ և այլն: Բայց առանց կրակի «Երգ Երգոց» կլինի՝ անհնարին բան: Իսկ Սևակը չի հրաժարվում ոչ մեղմ, հյուսիսային երանգներից, ոչ էլ անգամ հյուսիսային սառնությունից: Ահա մի վեհ սառնություն, արձանային, բյուրեղե, որ չգիտես սառուց է, թե ապակի. «Ո՞հ, քու անդրիդ բյուրեղե»: Եվ ապա. «Սրունքներուդ սարսռացնող ծյունն», անպայման անջատենք «հրաշե՛կ»-ը, մի անգամ էլ ցնցող հստակությամբ ծյունի և հրաշեկի աներևակայելի միությունը տեսնելու համար: Զյունի սարսուռը շիկացնող կրակի այրումը այնպիսի հզոր հակադրամիասնություն են, որ մի փրկություն կա, այստեղից դուրս գալու մի ելք. «Ու անանուն ցոլքը, որ քեզ կ'ողողե»: Անանուն՝ այլևս բառ չկա, միայն անանուն ցոլքը, լույսը որպես բարձրագույն, կատարելագույն, ոգեղեն, երկրային ամենացուրտ սառնությունից ու ամենատաք իրից, երկրային դրախտից ու դժոխքից վերանալու, եթեր սավառնելու աննյութ գոյացություն: <աջորդ բանատողում էլ ցայտուն է լույսը, արդեն միավորված նյութին. հոգի և մարմին: «Մորթիդ թաքուն գանգուրներուն խուրծը շեկ...» - թաքունը էլ բացատրելու ոչ կարիք ունի, ոչ հնար, բայց «Խուրծը շեկ»՝ լույսի խուրծ է, նույն հրաշեկի ցոլացումը: Ահա թե ինչպես է Սևակը վճռում ծանր խնդիրը: Նրա «Երգ Երգոցը» ծայրեծայր լույսի ու բոցի խաղեր են իրենց կախարդական ցոլքերով, սկսած «Ճառագայթի տարտամ խաղից» մինչև սիրո սոսկալի իրդեհը: Աստվածաշնչային «Երգ Երգոցի» արևայնության խնդիրը վժռված է:

Տենչերի, կրքերի պոռթկումն իր այս բարձրակետից, հաջորդ տներում վայրէջք է ապրում: Նախորդից անմիջապես հետո ասվածը՝ «Տենչերուս վրա պիտի հսկեմ այս գիշեր», ինքնամոռաց, մոլեգին, հարբած զգայականությանը հետևող՝ բա-

նականության արթնացման նշան է: Սակայն դա էլ, անհնար է թվում. «Իզու՞ր: Հոգիս թաղվի՛լ կ'ուզե հուլորեն, Ստիճնքներու մներմությանը մեջ կույս» (բնօրինակում՝ իմ սիրելին գիշերը «...ի մեջ ստեանց իմոյ հանգիցե» գլ. Ա, 12): Այս անկասելի ցանկությունը՝ ծովակել, թմրել, չքանալ հարազատ ու մտերիմ, պաշտելի էակի գրկում դարձյալ տևական չէ: Տպավորությունների, վիճակների, ապրումների արագընթաց փոփոխությունների մի ուսկի շղթա է այս բանաստեղծությունը, որի ամեն մի օղակն անկրկնելի, անձեռակերտ գեղեցկություն է:

Վերջին տաճ մեջ վերականգնվում են մեղմ գույները. կիրքը սպառված է, մնացել է անձառ երանությունն ու հիացմունքը.

*Տժգույն աղջի՛կ հյուսիսազգի աչքերով,
Կոպերուդ վրա ու բիբերուդ մեջ խոնավ
Այդ ի՞նչ անձառ երանություն, ի՞նչ գորով...
Ոչ մեկ արգանդ քե՞զ պես հրաշք չծնավ,
Տժգույն աղջիկ հյուսիսազգի աչքերով:*

Մեծագույնը՝ սիրո մեջ աշխարհի արարչագործությունն ապրելն է: «Երգ երգոցը» սիրո այդ հրաշքի երկունքն է: Այդպես փրփուրներից ծնվել է Աֆրոդիտեն (հիշողություն, որ ակամա առաջանում է «ծառագայթի, փրփուրի խա՞ղ մը տարտամ» բանատողից): Անգոյից գոյը, երազից մարմնացած ռեալականություն՝ արարչության ընթացքն է դրվագված այս բանաստեղծությունում: Աստվածաշնչային «Երգ երգոցը» ծայրենքայր մարմնական սիրո փառաբանությունն է նույն բարձր հնչեղությամբ: Սևակի «Երգ երգոցը» կյանքային լինելությունն է իր վերիվայրումներով: Լինելությունը կապակցված մի ամբողջություն է սիմվոլիկականության ու ռոմանտիկականության փայլուն միաձուլումով: Այլ խոսքով՝ գեղարվեստական երկու ուղղությունների էկլետիկ միացում չէ սա, այլ սիմվոլիզմի արվեստի հմուտ կիրառում նեռոնանտիզմի մեջ: Այդ

արվեստի դրսնորումները Ռուբեն Սևակի մոտ արդյունք չեն հետևողական ու որոշիչ սիմվոլիստական պատկերման եղանակի: Եվ ոչ էլ կարող են ապացույց լինել հօգուտ սիմվոլիզմի ու նեռոռմանտիզմի նույնացման: Այս երևույթը հաստատում է գեղարվեստի պատմական զարգացման շատ կարևոր առանձնահատկության. այլ ուղղությունների ծեզքբերումների յուրացումն ու կիրառումը ստեղծագործական նոր որակների կերտման պրոցեսում: Ոչ միայն տարրեր ուղղությունների պայքար, այլև ներթափանցում, փոխհարստացում, եղած փորձի, ստեղծագործական հնարավորությունների յուրացում:

6

Կյանք-բնություն միասնության մեջ Ռուբեն Սևակը գտնում էր լինելության ներդաշնակությունը՝ մարդուց տիեզերք արարման ու ավերման հարաշարժ տարերքով: «Հակադրություններով հանդերձ, այս տարերքում էր նա գտնում իդեալը, գոյության գեղեցկությունները: Բայց կյանքի բնական տարերքին թշնամի է հասարակությունը՝ չարիքի, դժբախտությունների, աններդաշնակության արմատը: Արարումն այստեղ ողբերգական բնույթ և հետևանք ունի. սերնդագործումը, ծնունդը, ստեղծագործությունը մարդու տառապանքների սկիզբ են լոկ, որ ավարտվում են փրկարար մահով: Ավերման ու չարիքի այդ թագավորությունը մի քառս է, որտեղ մեկը ծննդյան պահից տեր է, մյուսը՝ գրաստ: «Հայրը» բանաստեղծությունում հանդիպում են հայր և որդի՝ Աստված և մարդ, երկուսն էլ թշվառ, անոթի, հիվանդ: Ամեն արարչագործության արդյունքն, այսպիսով, թշվառությունն է: Թշվառների այդ աշխարհին, նրանց իրավունքների պաշտպանությանը Ռուբեն Սևակը պետք է նվիրեր իր ծրագրած «Քառոսը» բանաստեղծական ժողովածուն: Խոսուն վերնագիրն ընդգծում է բնության և հասարակության խոր հակասությունը, կյանք-բնություն ներդաշնակության ավերու-

մը: Հասարակական բիրտ մեջենայի անհվների տակ տրորվում է կյանքի նեռոռնանտիկական իդեալը: «Արգասավորում» բանաստեղծությունը դրա ցցուն արտահայտությունն է. արու և է ծեր ծիերը մտրակի հարվածների տակ քաշում են «հավատենական անեծքը»: Տառապանքը մշտնջենական է, փոխանցվում է սերնդե սերունդ: Բնության «խեղճ բնազդին հլու» կենդանի արարածները լույս աշխարհ են բերում գրաստների նոր սերունդներ: Կյանք մտած արարածին ցավն ու զրկանքը ուղեկցում են ոչ թե բնության, այլ մարդկային, հասարակական օրենքով: Չի կարելի Ռուբեն Սևակի սոցիալական պոեզիան արիեստականորեն անջատել նրա այլ բնույթի բանաստեղծություններից: Կյանք, սեր, արգասավորում, ծնունդ, ցեղ, հայրենիք հասկացությունները նույնքան ամուր են շաղկապված իրար, որքան անխուսափելի շաղկապված են «մարդկային օրենքին», հասարակությանը: Հասարակական գոյի հակասություններն ու բախումները նկարագրելիս նա ավելի չի մոտենում իրականությանը, քան սեր և բնություն երգելիս – նույն նեռոռնանտիկական գաղափարներն ու պատկերման եղանակն են գործում թե՝ մեկ, թե՝ մյուս դեպքերում.

*Ավա՞ղ, այն ամեն բաներն ապաքեն
Որ շնորհվեցան մեզի երկինքեն՝
Մարդկային օրենքն արգիլեց մարդուն...*

Սոցիալական իր պոեզիայում այս հարցադրումն է հիմնականը: Այստեղ իր լրումին է հասնում կերպարը մարդու՝ իբրև բնական-հասարակական արարածի, որն ընկած է ողբերգական հակասությունների մեջ: «Քառոսում» գլխավոր հերոսը աշխատավոր մարդն է, բանվորը: «Դրամին աղոթքը», «Պոլսո որովայշին մեջ», «Կարմիր դրոշակը», «Կարմիր տոնը», «Փողոց ավլողը», «Այս դանակը» գործերը զրկվածների, «աշխատանքի նորի ստրուկների» ծանր կեցության քննությամբ հանդերձ

բարձրացնում են դասակարգային պայքարի խնդիրը։ Բանաստեղծն իրեն գտնում է աշխատավորության բանակում, զինվորագրվում է արդարության ու ազատության վսեմ կռվին։ Արտաքուստ նա դիտողի դերում է. դա նկատելի է հատկապես «Փողոց ավլողը» և «Կարմիր դրոշակը» գործերում։ Սակայն նա սովորական դիտող չէ։ Նրանց և իր միջև «Մեկ տարբերություն միայն եթե կա», այն է, որ ինքը փնտրում է կյանքի «ինչպես և ինչուն»՝ աշխատում և պայքարում է իր ստեղծագործությամբ։ <Ետևաբար, նրա դիտելը գործել է տառապանքի իր եղբայրների հետ միասնորեն։ Սևակի համոզմունքով բացառիկ է գեղարվեստի դերը ազատության պայքարում, և այդ դերի գիտակցությամբ էր նա ստեղծագործում, քաղաքական իր դավանանքով կանգնելով ժամանակի ամենաառաջավոր՝ պրոլետարիատի պայքարի դիրքերում։ Փողոց ավլողը վիթխարիանում է, սիմվոլացնում արդար աշխատանքի հզոր ուժը.»

Ավել մարդկության ցեխն ու կեղտն անվերջ,
Ավել ու գիտցիր, որ միշտ կ'աղտոտի...

Պատմության դարավոր հոլովույթով կուտակված հասարակական աղբը ավելիու համար միակ այդ ուժը՝ արդար աշխատանքի ուժը համադրվում է արվեստագետ-մարտիրոսի, արվեստագետ-մարգարեի ստեղծագործությանը։ ճակատագրի եղբայրներ, նրանք նվիրվում են կյանքի ու լուսավոր ապագայի համար մղվող պայքարին։ Ահօելի, անգիծում պայքար անվերջանալի կեղտի դեմ։ Գեղարվեստը խտացնում է մարդկության իդեալները։ Առաջնորդելով «մարդկությանն ամբողջ», արվեստագետը չի կարող անջատվել ազգությունից, նահատակվող ժողովողի փրկության գործից, դրանք էությամբ նույն ազատության պայքարի երկու անբաժան ոլորտներն են։

1909-ի ապրիլին Աղանայում թուրքերը կոտորեցին 30.000 հայ, այրեցին ու ոչնչացրին բազմաթիվ կառույցներ, հայերին

հասցնելով նաև հսկայական նյութական վճառ: Ուրբեն Սևակին միայն լուրերը չէ, որ հասան: Նա տեսավ Լոզանում ցուցադրված լուսանկարները: Ցնցված թուրք մարդասպանների անպատկերացնելի ոճրագործություններից, դառնացած հայության անօգնականությունից ու աշխարհի անտարբերությունից, «Զարդի խենթը» պոեմում կատարվածի քստմնելիությունը նա ներկայացրեց տիեզերական անչափելիությամբ.

*Չէ՞ որ դուն վաղուց մեռեր ես, Աստված,
Ու քու հսկայի դիակը անբավակ,
Գարշանքի ժահրո՞վն արյունաթաթավ,
Ապականե՞ր է երկնից անապակ
Ծիր-կաթիններուն երագն անհատակ...*

Նորից արյունով էր ներկվել Հայկական Կիլիկիան, որի անմահ գեղեցկությունները, ժողովրդի և բանաստեղծի անհատակ երազի հետ սպանդի զոհ դարձան, ապականվեցին, այլանդակվեցին: Ամեն ինչ տակնուվրա եղավ բանաստեղծի հոգում, հովվերգությունն ու եղեռնը, առասպելի դրախտը և հավաստի դժոխքը խառնվեցին իրար: «Ո՞վ իմ հայրենիքս...» Կիլիկիո արյունին նվիրված բանաստեղծությունն այդ անասելի ցավով, այրվող հոգու կրակով ծուլված, թվում է մի ընդմիջարկություն՝ դեպքերի ահավոր ընթացքով պայմանավորված: Իսկ իրապես Շվեյցարիայի հրաշք բնությունը, որ Սևակը երգում էր կատարելությամբ՝ ինչպես կզգար ու կվերապրեր հայրենի օրրանը, աշխարհի երկու տարբեր, բայց մեկը մյուսից հմայիչ հայրենիքի բացարձակապես հակադիր պատմության բացահայտման միջոց է: Սկզբից իսկ համակցվում են երկու տարբեր վիճակ, երկու տարբեր տրամադրություն՝ երանություն և ցավեր.

*Ցայգն ի՞նչ անույշ է, ցայգը ի՞նչ գինով
Ցավերես տարված կը քալեմ երկար*

*Հեմանի ավիհն՝ խոր տրտմությունով:
Ի՞նչ խաղաղություն, ի՞նչ անձառ նըկար...*

Երազային անհունությամբ շնչող իրականության անհաս նրբությունների մեջ խուժում է եղեռնի մղջավանջը: Եվ մի բանաստեղծությունում Ռուբեն Սևակը տալիս է, ասես, իր պոեգիայի խտացված պատկերը. բնություն, սեր, իդեալ, երազ և կոտորած: ճերմակ կարապ և մարդկային արյուն.

*Ով իմ հայրենիքը՝... Ու դուք հեռավո՞ր,
Եփրատ ու Արաքս ու Վանա ծովակ,
Ո՞ւ են կարապնե՞րը սիրախտավոր
Որ իրենց երա՞զ թևերով ծերմակ
Ճեղքեին կարմիր ծեր կու՞րծն ախտավոր:*

Սպիտակ և կարմիր: Կարմիր են ճերկվել հեռավորի, կարոտի, ջրերի կապույտը: Բանաստեղծել կյանքի և հոգու անստույգ արժեքները և նկարագրել բարբարոսություններ: Մեկը որքան ցանկալի, մյուսը նույնքան հրամայական անհրաժեշտություն էր, ազգային և մարդկային պարտը: Բայց այդ հակադրությունները դնել կողք-կողքի, համատեղել անհամատեղելին և այն էլ անթերի արվեստով... Եվ բանաստեղծը համատեղում է հակադրությունները, դրանով իսկ անգերազանց ուժ հաղորդելով իր խոսքին:

Ծայրահեղ հակադրությունը ներթափանցված է կյանքի ու մահվան, ներդաշնակության ու աններդաշնակության, իդեալայինի և ռեալականի ոռնանտիկական տարերջով:

Զարդը պատկերելիս բնավ հարկ չկար դիմել երևակայության: Ռուբեն Սևակը առանց չափազանցնելու տալիս է իրողությունը: Ավելին, սարսափելի ծշմարտությունը բացահայտելու համար նա անդրադարձնում է ոչ այնքան ջարդի պատկերները, որքան դրանց հոգեբանական արձագանքը,

առաջացարած ապրումները, մտածողությունները, ստեղծում է դրանց պոետական համարժեքը՝ դիմելով թե՛ տիեզերական անսահմանությանը, թե՛ անցյալի մեծությանը, թե՛ ազգային ոգու նշխարներին ու ազգային արժեքներին, առասպելներին ու իրադարձություններին, սիմվոլներին ու իդեալներին: Մերք հուսահատ զայրույթից նա արդար ցասման ու վրեժի բառն է բորբոքում, նախօներից հրաշքով փրկված թշվառ որբուկների մեջ տեսնելով վաղվա հերոսներին, մերլու գերեզմաններից դուրս է կոչում նահատակներին ընդդեմ ոժրագործների, քանզի նրանք չեն կարող խուսափել պատմության դատից: Անմեղ զոհերն անպարտելի են:

«Զարդի խենթում» որդին ուսին դրած տանում է քահանա հոր դիակը՝ քրիստոնեական գաղափարախոսության բեռը, որի ողջ անհեթեթությունը շեշտվում էր հատկապես համագույն ողբերգության այդ իրավիճակում: Խենթը գաղափարապես ու գեղարվեստորեն գտնված միջոց է, ուրույն կրկնակը Րաֆֆու ազատագրության մարտիկ խենթի կերպարի: Ավելի ուժեղ են հնչում այդ «խենթի» խոսքերը՝ նետված այդ ապուշ կյանքի «խելոքներին», նրանց, ովքեր ճշտորեն կատարում էին եկեղեցական ծեսերը, դրանով ապահովելով ստոր արարքների իրենց իրավունքը: «Ծնալու, ստելու, գողնալու» այդ գաղափարախոսությունը բանաստեղծի համոզմունքով ժողովրդի կործանման պատճառներից էր: Իրենց իսկ ստեղծած ձահծում գոհ ու բախտավոր, առաջնորդ ընտրած «Սաղմոսով սնած սովիեստներն աժան», չին տեսնում, որ մոտենում է կոտորածը: Ուրբեն Սևակի համար Եղենը ոչ միայն ազգային, այլև սոցիալ-տնտեսական, գաղափարական-քաղաքական խնդիր է: Աստծու գարշ դիակը սիմվոլացումն է բոլոր փուչ գաղափարների կործանման: Միևնույն մեկնակետից ու միևնույն համոզմունքով նա գրում է «Առջի հայերը» և «Վերջին հայերը». աշխարհում ազատության համար մեռնող վերջին մարդիկ վերջին հայերը պետք է լինեն: Որքան էլ դարերը մահ են

ցանել, հայությունը հավիտենական տոկունությունն ու մաքառումն է հանուն լուսի, հանուն անմահության։ Փոշիացել են հին աշխարհի հզոր, բռնակալ պետությունները, հայերը գոյատևում են մահվան հոգեվարքի մեջ։

Այսպես անմահացավ նաև Ռուբեն Սևակը, հավերժական Մարդը, հավերժական Ռւելսորը.

Երթա՛լ, երթա՛լ, երթա՛լ առանց ծրագի։

Երթա՛լ՝ առանց սուզի, լացի, փափագի

.....
Չըգիտնա՛լ որ հոս Խտեալը չիկա՛...

Ուխտագընա՛ց երթալ ափերն հեռակա,

Դեպի ուղին Երջանկության մշտակա...

ՏԻԵԶԵՐՔԻ ՄԵԾ ԻՆՉՈՒՆ

Բանաստեղծությունը ամեն ինչից բացի ու ամեն ինչից առաջ նաև հարց է՝ ուղղված անհայտին: Բանաստեղծներին հաճախ համեմատում են մանուկների հետ, որոնց համար աշխարհը դեռ գեղեցիկ հանելուկ է, շողշողուն հեքիաթ. հարցախույզ ինչո՞ւն և պարզունակ պատասխանի մաքուր հրձվանքն է զարդարում գարնանային հասակի յուրաքանչյուր ակնթարթը: <Համեմատության այդպիսի եզրը միանգամայն իրական է, միայն թե բանաստեղծի համար իմացության բերկրանքը շատ հաճախ պարուրվում է անլույժ հարցականների մշուշով, որն էլ իր հերթին թախծության թթու է խառնում ապրելու քաղցր երջանկությանը:

Ցնարական հայացքի այսպիսի բեկվածքը նույնքան իին է, որքան և ինքը՝ բանաստեղծությունը: Խնդիրն այն է, թե բանաստեղծների ամեն մի նոր սերունդ, յուրաքանչյուր բանաստեղծ ոգու կեցության ի՞նչ հեռաստաններ է նշանառում այդ բեկվածքից այն կողմ: Բանաստեղծներ կան, որոնք իրական աշխարհի և ընկալող եսի հարաբերության այդ երկվությունից մոռայլ հետևություններ են անում. գոյի անհմաստության տխուր վարկածը: Կան նաև, որ նախնական այդ երկվությունը փորձում են շրջանցել՝ վայելելով միայն պահի կենսական լիությունը: Բայց կան և այնպիսիները, որոնք գոյի անվախճանականության խորհուրդը, կյանքի իմաստը փնտրում ու գտնում են լուծված ու չլուծված հարցականների հավերժական շրջապտույտի մեջ և այդ ամենի զգացական ու մտածական վերաբրումով բովանդակավորում բանաստեղծականի սկիզբը:

Այս վերջինների դասից է նաև Ռուբեն Սևակը՝ 20-րդ դարի սկզբի մեր բանաստեղծական համաստեղության փայլուն աստղերից մեկը, որի ցնարական մտորումներում «Տիեզերքի

մեծ ինչո՞ւն» իրոք համակարգային նշանակություն ունի: Այդ համապարփակ հարցականի շուրջը են կիզակետվում բանի կախարդանքով կերպավորված բոլոր բանաստեղծական իրավիճակները, ինգու բոլոր այլակերպությունները: ճակատագրական «մեծ ինչո՞ւն» կոտորակվում է ավելի «մասնավոր» ինչո՞ւնների, որոնց տարամիտող և զուգամիտող ուղղությունների վրա էլ ձևավորվում է բանաստեղծի աշխարհը:

* * *

«Հակոբ Օշականի բացատրությամբ՝ Մեծարենցի «Նոր տադերը», Վարուժանի «Հեթանոս Երգերը», Սիհամանթոյի «Սուրբ Մեսրոպը» «Վերջնական գիրքեր են, որոնք իրենց հեղինակներուն կարելի պատկերը կը պահեն վճռական ու անվերադարձ եղանակեցով մը: ...Սևակի համար նման վկայություն մը խնդրական կրնա ըլլալ»:

Ցննդադատն իրավացի է այնքանով, որ, իրոք, «մահվան տարին իսկ ինքզինքը նորոգող ծերութին չէ անհկա, այլ որոնող ոգի՝ մշտապես հակամետ անակնկալների...»: Գուցե նաև դա էր պատճառը, որ նա իր ծրագրած բանաստեղծական շարքերից ոչ մեկն այնպես էլ չամբողջացրեց:

Այդ «անավարտության» խորցում, սակայն, մանավանդ այսօր՝ մեկդարյա հեռվից, նշանական մի անսովոր բանաստեղծական նկարագիր, որ ավարտուն, ամբողջական է հենց իր անավարտությամբ: Գեղագիտական առումով դա կարող է նշանակել միայն մի բան. «Տիեզերքի մեծ ինչո՞ւն» միանշանակ ու վերջնական պատասխան չունի, գոյի շարժումը անսահման է տարածության և անվախճան՝ ժամանակի մեջ:

Բայց բանաստեղծը բանաստեղծ է, քանի որ «դատապարտված» է անդադրում որոնելու այդ պատասխանը, թեն երբեք չպիտի գտնի, ու դրանից ավելի պիտի շիկանա որոնման կիրքը՝ ստեղծագործական արարքը վերածելով Գողգոթայի ժամապարհի...

Ոութեն Սևակը իր սերնդակիցների շարքում առանձնանում է զգացական ու մտածական աշխարհի ցայտուն եզակիությամբ: Նրա բանական եսը հաստատված է երկու իրարամերժ ու միաժամանակ իրարամետ սկզբունքների վրա: Մի կողմից՝ վերլուծող իմացականություն, մյուս կողմից՝ բանաստեղծական գերզգայնություն: Այս երկակիությունը նրա ստեղծագործության մթնոլորտը հագեցած է պահում բարձր լարվածության լիցքերով, քնարական իրավիճակները թանձրացնում է խոհի և զգացմունքի արտասովոր խտացումներով, բանաստեղծական բառը, դարձվածքը ներսից ու դրսից ողողվում են տարերային բռնկումներով:

Այս ամենի հիմքում գործում է որոշակի ստեղծագործական հոգեբանություն:

«Բժիշկին գիրքեն փրցված էջերում» Սևակը հետաքրքիր մի խորհրդածություն ունի՝ «Ահավոր տարակույսը» խոսուն խորագրով: Իմացաբանական տեսակետից այդ տվայտագին խորհրդածություններն, իհարկե, նորություն չեն: Բայց խորհուղին այս դեպքում միայն սառնասիրտ մտածող չէ, բժիշկ, որ ամեն օր շփվում է կյանքի ու մահվան առարկայական իրողությունների հետ, այլ նաև զգացող ու հոգին ապրող բանաստեղծ, որին մշտապես հալածում է բազմադեմ հարցականների մի ամբողջ մրրիկ:

...Հուղարկավորության թափոր է: Բայց՝ «ո՞ւր կ'երթային, ո՞ւր կը վազեին ամենքն ալ: Այս խելազար վազքը կյանքի՝ արշավ, թե մահարշավ մըն է միայն»: Ինչո՞ւ մարդիկ, մահվան հետ առերես, չեն հավատում մահվան, «ուրկե՛ կուգային այդ հունավոր բջիջներուն մեջ անհունության գաղափարները, այդ մահացու տարրերուն մեջ անմահության բնազդները, այդ գետնաքարշ մարմնի մեջ անշրջագիծ խտեալները...»: «Եթե կյանքը ժամանակներու սկզբեն ի վեր կը տքներ միայն Մահվան հասնելու համար», «ուրեմն ինչո՞ւ համար են ծաղիկները, աստղերը ինչո՞ւ, ինչո՞ւ համար է սերը և կյանքը ինչո՞ւ...»: Տարակույսը խորանում

է բանական ոգու երկատվածության գիտակցությունից. «Երկու հսկաներու միջև կը տատանիմ ու կը տառապիմ: Երկու միականի Կիկլոպներ կը բաժանեն հոգիս. Գիտություն մը, որ փաստեր ունի ու խտեալ չունի ու Կրոնք մը, որ խտեալ ունի ու փաստեր չունի...»: Որի՞ն ապավիճել, ո՞րն է ծշմարտության ձանապարհը: Ու հետևում է ինքնածանաչող ու ինքնավերլուծող, ինքնահաստատող և ինքնաերկբայող արարած-անհատի բնական հարցը. «Ո՞վ, ո՞վ պիտի կրնա զիս ազատել այս ահավոր տարակույսեն»:

Ռուբեն Սևակի ամբողջ ստեղծագործությունը այս հարցականի լուծման տենդագին փորձ է՝ որքան ապարդյուն, նույնքան էլ գեղեցիկ, որքան տանջալի, նույնքան էլ ցնծագին, որքան երկնային, նույնքան էլ երկրային...

Առարկություն կարող է լինել, թե այսպիսի մտորումներ ինքնաբերաբար ծագում են ամեն մի իսկական բանաստեղծի հետ հաղորդակցվելիս: Եվ դա իրոք այդպես է: Բայց շատ քիչ բանաստեղծներ կան, որոնց բուն քնարական «կենսագրությունը» գոյավորվում է այս հարցականների չուրջ, որոնք այդ հավերժական ինչո՞ւները վերապրում են որպես բարձր ներշնչումի ակնթարթներ, երբ տեղի է ունենում ստեղծագործության անմեկնելի հրաշքը. «հունավոր բջիջներից» ձառագայթում է «անհունության գաղափարը», «մահացու տարրերուն մեջ» կենդանանում են «անմահության բնագդները», «գետնաքարշ մարմնի մեջ՝ անշրջագիծ խտեալները»...

Այսպես Սևակի քնարերգության մեջ «Տիեզերքի մեծ ինչո՞ւն» ընթացք է տալիս բանաստեղծական մի լայնահուն տարրերքի, ուր ամեն իրական իր մասնավորությունը իմաստավորում է «խտեականի» բացարձակությամբ, եսը ինքնահաստատվում է համայնով, Կյանքը բովանդակավորվում է Մահով, Մահը ոչնչացումի կտրական ակնթարթայնությունից վերածում է վերստեղծումի հավերժության, նյութը ոգիանում է, ամեն երկրային ձգտում է երկնայինի, վերջապես, ամեն երկնային սկիզբ է առնում երկրայինից...

Զգացող, տառապող, կարեկցող բանաստեղծի համար ի՞նչը կարող էր լինել ավելի «առարկայական», ավելի «երկրային», քան, ասենք, ընկերային կյանքի ամենօրյա դրաման, որի բուն խառնարանում տարիների կյանք էր անցկացրել նա, մայր ժողովրդի վերջինգալստական ողբերգությունը, որ ֆիզիկական ցավի այրող անմիջականությամբ է արձագանքում նրա ներաշխարհում: Եվ իսկապես, Սևակի ստեղծագործության մեջ ընկերային և ազգային կյանքի պատկերները գայթակղում են իրենց անսեթեթք ուղղագծությամբ և մեծ մասամբ այդպես էլ ընկալվել ու մեկնաբանվել Են՝ չնկատելով բանաստեղծական տեքստի տեսանելի ու անտեսանելի շերտերի խորքային կապը: Ամենահին չնվազեցնելով սևակյան այդ ինքնատիպ էջերի («Մարդուգություն», «Դրամին աղոթքը», «Այս դանակը», «Փողոց ավլողը» «Կարմիր դրոշակը», «Զարդի խենթը», ««Զանգակներ, զանգակներ...», «Ո՞վ իմ հայրենիքս» և այլն) իմացական արժեքն ու բարոյական կշիռը, բոլորովին չկասկածելով հեղինակի մարդասիրական ու հայրենասիրական զգացմունքների անկեղծությանը՝ հարկ է նաև նկատել, որ երբ այդ էջերը դիտում ենք բանաստեղծի ամբողջ ժառանգության համատեքստի մեջ, բախվում ենք հարցականների, որոնք էսթետիկական զգացողությունը պատկերի երևութական շերտերից ուղղորդավորում են դեպ առավել թանձրածավալ խորություններ: Ընկերային կյանքի աղետները, մարդկային աղավաղված ժակատագրերի տրտում հանդեսը, անմեղորեն թափվող արյան հեղեղները, իրենց պատմական ու կենսական որոշակիությամբ հանդերձ, ինչ-որ նախնականության խորհուրդ են կրում իրենց մեջ, ծնունդ-գոյատևություն-մահ եռագալար շրջապտույտի մեջ արժեզրկում են մարդկային կյանք կոչվող ակնթարթը՝ հավերժի անտարբեր հոլովույթում... Ինչո՞ւ տագնապալի հարցը մնում է անպատասխան, և անելության դրաման մռայլ ծավալումներ է տալիս բանաստեղծի ներաշխարհում: ճակատագրականություն է սա: Գուցե: Բայց բանաստեղծ Սևակը միայն հավերժա-

կան ինչո՞ւների տառապյալը չէ, այլ նաև «անուրջների ուխտավոր»՝ մեծ հավատի համբերությամբ, որ՝

...Խաղաղությա'մբ գա,
Արդարությա'մբ գա, գա' տարվե տարի
Չրկված մարդկության երազը բարի...

Այդ «բարի երազի» բարձունքներից էլ բանաստեղծը անհայտին է ուղղում իր հեռածավալ հարցումները, փորձում է փարատել «ահավոր տարակույսը»:

* * *

Ինքնազգացող գոյի կենսագործունեության հիմքն արգասվորության բնազդն է: Երևույթի բնախոսական իմաստը՝ սերնդագործության անհրաժեշտությունը, մտածող-քննաբանող Սևակի համար անբեկանելի օրենք է: Բանաստեղծ Սևակին փաստի միանշանակ ստուգությունը չի բավարարում: Կյանք ասածդ ինչպես կարող է լինել միայն ինքնավերարտադրող նյութեղեն շարունակություն, չէ՞ որ այդ դեպքում արարչության հրաշալի առասպելը կկորցներ իր իմասն ու հմայքը: Ինչպես նախամարդը ինքնածանաչման բնական հարկադրանքով «իր մտածումը դուրս նետեց կյանքի անծուկ եզրերեն, դո՞ւրս նյութի այս աշխարհեն ու անհունին, բացարձակին մեջ գնաց հարցնելու իր մեծ «ինչո՞ւ»-ն, կյանքին, մարդուն «ինչո՞ւ»-ն», այնպես էլ «շատ քաղաքակիրթ այս Արևմուտքեն» հոգնած բանաստեղծն իր նման շատերի պես ապավինում է Արևելքի «հեռավոր հորիզոններու անծալ երկնքին», ուր՝

Բա՛ն մը կար կյանքեն անջատ, կյանքե՛ն վե՛ր,
Բա՛ն մը, որ կյանքեն բնավ' չէր ազդվեր,
Որ կը նմաներ երեկին, Վաղվան...
Այդ՝ Մահվան իսկ մեջ ժխտումն էր Մահվան:

Բանաստեղծի ոգին ներշնչումի պահին վեր է բարձրանում գոյի առարկայական ոլորտից, այրող հարցականներից նա փրկություն է որոնում միայն հոգեղեն կեցության համար սահմանված եզերքներում։ Արևմուտքի գիտական խստիմացությանք կրթված հայ բանաստեղծը, վայելած լինելով հանդերձ իին ու նոր աշխարհների մեծամեծ իմաստունների հետ հոգևոր մտերմության բերկրանքը, էությամբ, այնուամենայնիվ, մնում է արևելցի՝ «ճակատագրական» ու երազամոլ։ «Կյանք բառին առջև զարմացական հարցական նշանի» «նենգ» որոգայթին գերադասվում է «կախման երեք կետերի» անհավակնոտ պարզությունը։ մինչ «պոռոտ Գիտությանց շեփորահարները սովորս»։

Թվանշաններով կը լուծեն հոգին,
Կը քննեն երկինքն ու Աստվածը, մենք
Մեր կախման երեք կետը կ'երազենք...

Այստեղով էլ անցնում է բանաստեղծականի սահմանը։ Իհարկե, մեծ հարցականի բոլոր հանգույցները չեն լուծվում։ «ապրելու խոլ մահերգը» շարունակում է հնչեցնել իր դրամատիկ համանվագը, բայց կա նաև «ապրելու երջանկությունը», որ անպայման է ու անպարագիծ։ Եթե տարակույսի դնը բանաստեղծի քնարական աշխարհին անընդհատ շարժման լիցքեր է հաղորդում՝ ի հեծուկս տափակ ինքնաբավության, ապա երազը, Սերը, Մահը, Հավատը, Գեղեցիկը առանձին-առանձին ու միասնաբար սահմանում են այդ աշխարհի էսթետիկական օրենքը։ բացատրելու ապարդյուն ջանքերից նախընտրելի է վերապրել այն ամենը, ինչ շնորհված է մարդուն ի վերուստ, սին փափագներով միտքը կեղեքելու տեղ՝ պարզապես ապրել, ինչպես վտակն է իր «ցնծուն մահն» ապրում իբրև միակ ու անկրկնելի վայելք։

* * *

Սևակի քնարական աշխարհում երազը ցնորդի հոմանիշը չէ: Բանաստեղծի երազամոլությունն անզուսպ կենսասիրության շրջված երեսն է: Ավելին, դա կենսածն է, ուր ապրված յուրաքանչյուր պահի եզակիությունն իր արժեքն ունի: Մի կողմից՝ դասական հակադրությունը՝

*Այս, կ'ուզեմ մոռնալ կերտվածքս հողեղեն,
Կ'ուզեմ բարձրանալ, երկնի աստղերեն
Գողնալ երազներ...*

մյուս կողմից՝

Դուն <րաշքն ես, դուն երազն ես, դուն Սերն ես...

Այսինքն՝ բանաստեղծական իրավիճակի լարվածության բարձրակետում <րաշքը, երազը, Սերը նույնանում են իրենց մաքուր «իտեացման» երեսով ու միաժամանակ շոշափելի կենսականությամբ: Եթե բանաստեղծությունն իրականի վերապրումն է՝ շնչավորված ու լուսավորված ստեղծագործողի ներաշխարհային ցոլքով, ապա բանաստեղծականի գոյավորման սկիզբն անպայման երազն է:

Քնարական պահի մի այլ շրջվածքով համարժեքվում են Սերը և Մահը՝

Սերը սեր չէ, մահը մահ չէ, սերն է մահ...

իբրև բանաստեղծական աշխարհայեցության համապարփակ սկզբունք:

Բժիշկ-փիլիսոփիա Սևակին քաջ հայտնի էր, որ կյանքի ու մահի, արարումի ու կործանման, անանցի ու անցողականի հավիտենական փոխբացասման ու փոխհաստատման թեման բոլոր դարերում էլ ներշնչումի աղբյուր է եղել բանաստեղծ ու մտածող հոգիների համար: Տիեզերքի գոյաբանության այդ առեղծվածը, որ հայ բանաստեղծը ամփոփում է «Տիեզերքի մեծ

ինչո՞ւ» բացատրության մեջ, գիտունները փորձել են ենթարկել քննող մտքի կարգ ու կանոնին: Այսպես ծագել են իմաստասիրական ուսմունքները, հավատալիքները, կրոնները: Յուրաքանչյուր դարաշրջան իր իմաստն ու ծնն է հաղորդել դրանց ու դրանց միջոցով սնունդ տվել ստեղծագործողների մտքին ու երևակայությանը: Սևակի ժամանակն էլ իմացության ուսմունքների իր համակարգն ուներ, և նա, տարիներ շարունակ ապրելով Եվրոպայի կենտրոնում, իր խոհերի ու զգացմունքների շատ կողմերով շփում էր դրանց հետ: Ուսումնասիրողները այդ շփումների միջոցով փորձում են տարրալուծել նրա մտածությունների կառույցը, հասկանալ ու մեկնաբանել մասնավորապես սիրո ու մահվան նրա երգերի «տարօրինակ» աշխարհը: Բայց հայտնի է, որ ոչ մի գիտական բացատրություն կամ սահմանում չի կարող անմնացորդ հաղորդել կենդանի մտքի ու զգացմունքի հարստությունը: Բանաստեղծին լիովին հասկանալու համար հարկ է մտնել նրա ժամանակի մեջ, նույնանալ նրա հետ, զգալ այն, ինչ զգացել է նա իր խորհուրդները խոկալիս:

Մեր - Մահ - Չոհաբերություն եռամիասնության խորհուրդը, որ ժակատագրի բերումով Սևակի համար ազգային գաղափարախոսի ու գործչի կենսապայման պիտի դառնար, բացվում է դեռևս պատանեկան սիրո երգերում: Շատերն են հավանաբար հարց տվել իրենց, թե ինչու այդ վառվուն սիրերգությունների մեջ գրեթե միշտ հնչում է մահերգության խոլ մեղեղին: Եթե փորձենք գեղագիտական-իմաստասիրական հեռու աղերսների մեջ որոնել բանաստեղծի այս սիրագգացում-մահազգացումի ծագումնաբանությունը, ապա կարող ենք բախվել սիրո, մահվան, զոհաբերումի հավերժական արխետիպերի, բուդիզմի վարդապետության, սիմվոլիստական երկաշխարհայնության և այլ իմացական համակարգերի հետ, որոնք լեզվական կառույցներ են դարձել Սևակի քնարերգության համատեքստում: Բայց դա ուսումնասիրության

այլ խնդիր է: Այստեղ ես պարզապես ուզում եմ հավատալ բանաստեղծին, որ հավատավորի ջերմեռանդությամբ խորհրդածում է.

*Սերը սեր չէ, մահը մահ չէ, սերն է մահ,
Սերն անդունդին մեջ ընկլուզումն է անահ...*

Բանաստեղծական հավատի այս պարզ անմիջականությունն է, որ Սևակի սիրո ու մահվան երգերում ինչում է որպես քաղցր ու տագնապալի երջանկության ցնծանվագ: Այստեղ գուցե «Ցնծուն մահը»....

Իհարկե, բանաստեղծի մահկանացու էության ինչ-որ մի անկյունում միշտ էլ առկա է մահվան նութ ուրվականը, որ խոռվզ է խառնում ապրելու նրա լիաբուռն երջանկությանը: «Վերջին կոչը», «Ասպետի երգը», «Գացող մարդը» բանաստեղծությունները այդ տիսուր մահազգացումի արձագանքներն են:

Բայց Սևակը ամենից առաջ բանաստեղծ էր, գաղափարի առաջքայլ, իդեալի ուխտավոր: Այդ բարձունքներից մահվան խորհուրդը նա իմաստավորում է հոգու անդրատեսությամբ, որ սերը, կյանքը և մահը դիտում, գիտակցում ու վերապրում է որպես գոյության հավերժական հոլովույթի տարբեր եզրեր, մեկի իրականությունը անհնար է առանց մյուսի: Այդ անդրատեսությունը բանաստեղծի լինելության պայմանն ու բովանդակությունն է, հոգու կեցության կենդանի շարժումը: Այսպես է ապրում բանաստեղծը սիրո և մահվան անբաժանելի խորհուրդը իր սիրերգերում: <Հոգեվերացման այդ պահերին նա մահը շնչում է իրքն «անհունին մեջ անհուննալ», իսկ սերը որպես՝

*Տաք համբույրի մը անհունին մեջ մոռնալ
Գոյությունն ալ, տիեզերքն ալ, ինքզինքն ալ...*

Այսինքն սերն էլ, մահն էլ նշանակում են հոգու ազատագրում նյութական պատյանից: Դա ինքնանվիրումի, ինքնազոհաբերման բարձրագույն պահն է, երբ վայրկյանը դառնում է հավերժություն: Սիրո մաքրագործումի քավարանում բյուրեղանում է հոգին՝ ազատվելով մեղսական մղումներից: Սիրո աղբյուրի «ակերեն» երջանկություն ընպած հոգու մեջ տեղ չի մնում մանր կրքերի համար: Դրանում է սիրո ուժը, դրան է ձգտում բանաստեղծը՝ փայփայելով «աստվածացյալ մարդու» վաղնջական իդեալը: Եվ այս դեպքում մինչև սիրո «լուսե կույս տաճարները», մինչև նրա «ահավոր» ու «սարսոագին» բարձունքները բարձրանալու պաղատանքը նրա համար աղոթքի սրբություն ունի.

Ցո՞յց տուր ինծի, ոսկի շավիղն եթերի,
Ցո՞յց լուսեղեն երկնազըվարծ այն ճամբան,
Ուր էությունս հոգնատանց գալարի,
Բարձունքներուդ գալու համար անխափան
Ցո՞յց տուր ինծի ոսկի շավիղդ եթերի...

Ոգեշունչ այս երգը, որ «Աղոթք» խորագին է կրում, ինքնամոռացումի նարեկացիական շեշտ ունի իր մեջ, դանթեական վերելք դեպի Բեատրիչեի լուսեղեն ոլորտները, բոլորանվեր տեսնանք ու մղում «մութ կիրքերու անդնդախոր խավարեն» մինչև «կույս կատարելության» բարձունքները: <ոգեվերացումի այս վիճակը «Եկո՛ր» բանաստեղծությամ մեջ ավելի կարծրանաձնում է ստանում.

Մերը պետքն է, երազն է, կյանքն է կյանքին.
Մերը մահվան մեջ անուրջն է արփավետ...

Մեր նորագույն քնարերգության մեջ հազիվ թե հնարավոր լինի ցույց տալ ուրիշ մեկին, որի ստեղծագործությունը մահ-

վան գաղափարի և դրա բանաստեղծական խորհրդանշիցի գործառնության համար նույնքան լայն ու բազմապիսի ոլորտներ է տրամադրում, որքան Սևակի քնարական կառուցները և ընդհանրապես նրա գեղագիտությունը։ Այստեղ քնարական հերոսը յուրաքանչյուր քայլափոխի, բոլոր խոհական խորությունների վրա, բոլոր զգայական վիճակներում բախվում է մահվանը, և դա ոչ միայն այն պատճառով, որ «կյանքին մահը օրենք դրեր է Աստված», այլև՝ որ մահն իր հակառակ երեսով ինքը կյանքն է, ավելին, Մահն այնպիսի գերկեցություն է, եթե հոգին ներապրում է աննյութականի բացարձակ լիությունը։

Այս պարագայում «մեծ ինչո՞ւն» ենթադրում է ներըմբռնումի երեք վիճակ. բնախոսական, երբ մահը նյութի որոշակի գոյաձևության տրամաբանական ավարտն է և նորի սկիզբը (արգասավորումի հավիտենական օրենքը). հոգեբանական, երբ անմահության ծգտող կենդանի գոյը չի կարողանում շրջանցել կյանքի վաղանցիկության տխուր գիտակցությունը և անհաշտ է մահվան գաղափարի հետ. Վերջապես, բանաստեղծական, որ նույնն է, թե կրոնական, երբ մահը ներըմբռնողաբար ընդունվում է որպես հոգու այլակեցության ծանապարհ։ Այս վերջինի համակարգող նշանակությունը Սևակի քնարերգության մեջ ամենից ավելի ակնառու է։

Մահվան բանաստեղծականացումը՝ սևակյան իմաստով, ընդհանրության շատ եզրեր ունի բուդյայական նիրվանայի հետ, այսինքն՝

*Ինքնամոռաց անէությունը հոգվոյն,
Տենչանքներու ոչնչացումն անխնա,
Երազամոլ վերացումը գերագույն...*

Սա այն վիճակն է, երբ երազայինի, «իտեականի», մահվան բացարձակության մեջ համասեռվում են բոլոր երկրային արժեքները. կյանքը և մահը միևնույն հավիտենության տարբեր

ծայրերն են, նյութը և հոգին նույն արարչության հակադիր երես-ներն են, Մահը և Սերը՝ անեսության խորհրդի տարանունները...

Սևակի ստեղծագործության մեջ մահ-ինչո՞ւն և սեր-ինչո՞ւն գրեթե միշտ հայտնվում են նույն հարթության վրա՝ կողք կողքի: Իբրև իմաստասիրական պահ՝ դա նշանակում է եսի մաս-նավորության տարրալուծում անհունի մեջ, որ միաժամանակ և՛ Սիրո, և՛ Մահվան ձանաշված ստորոգելիներից է՝ ըստ վաղն-ջական բանաստեղծական գիտակցության: Սիրելով «մահա-նալու» և մահվան մեջ «անմահանալու» քնարական հոգեվի-ծակը ևս անծանոթ չէ հնագույն ժամանակների գեղագիտա-կան պատկերացումներին՝ ընդհուած մինչև աստվածաշնչյան «Երգ երգոցը», որից Սևակը բնաբան է քաղել իր համանուն բանաստեղծության համար. «...զի բուռն է իբրև զմահ սէր»:

20-րդ դարի բանաստեղծական փորձը, որքան ավելի է շփում կենսաբանական, մարդաբանական, ընկերային նո-րածագ ուսմունքների, մասնավորապես «կյանքի փիլիսոփա-յության» հետ, քնարականի խորքում այնքան ավելի է խախտ-վում հայեցողականի և կենդանի զգացականի համամասնությունը՝ հոգուտ վերջինիս: Սեր-մահ հարաբերությունը մտքի զննության ոլորտից անցնում է զգացմունքի անպարագիծ տարածությունները, ուր ներշնչանքը, երևակայությունը, «մեծ անհունի մեջ լուծվելու, անկանալու, մեռնելու ահօելի զգացու-մը» սահմաններ չեն ծանաչում: Ուուրեն Սևակի սիրային քնա-րերգությունը դրա լավագույն արտահայտություններից է:

* * *

Սևակի սիրային քնարերգությունը բացահայտ կենսագրա-կան ակունքներ ունի: Վկան՝ Յաննի Ավելին գրած նամակ-ները: Ահա քաղվածական պատառիկներ այդ նամակներից. «Ահ, քու Սերդ, Յաննիս... Քու Սերդ, որ կը շոյե, կը գրկե, և կը բուրե..., և կ'սպաննե հավերժորեն, հավերժորեն...»: «Կարե-լի՞ է միթե: Իրականությո՞ւն է այս, թե՞ հավերժական երազ, որ

չափազանց իրական է իրական ըլլալու համար...»: «Ինչպես կարելի է երկրին վրա այսքան քաղցրորեն սիրել, Յաննի՞ Ինչպես: Ինչպես... Ըստ՝ ինձի: Ես ինքս չեմ կրնար հասկնալ... Կ'ապրի՞նք: Կ'երազե՞նք... Սիրելի՞ս, օգնե՛ ինձ, ես կը մեռնիմ առանց քեզի»...

Այսպիսի վայրկյաններին է, որ ջնջվում է կյանքի ու երազի սահմանը: «Տիեզերքի մեծ ինչո՞ւն» ընդհուար մերձենում է երջանկության տառապանքն ապրող եսին, միաժամանակ վերջինիս որոշակիությունը լուծվում է բաղդալի ու գրեթե անհասանելի մի վերացության մեջ, որ սիրուց մահ ծգվող ակնթարթ է ու հավերժություն, կյանք է ու կյանք չէ: Վերընթերցենք «Սիրո և Մահվան երգը» և կտեսնենք, թե ինչպես է պահի հոգեբանական իսկությունն իր սահմանափակությունը հաղթահարում բանաստեղյականի ոգեշունչ «անորոշությամբ».

Իմ կյանքս թող աղաչավոր երգմ'ըլլա,
Եղերական ու միամիտ, սև՝ ողբերգ,
Իմ սիրուց թող անհունին մեջ վերք մ'ըլլա,
Հսկայական ու տխրորեն քաղցր վե՛րք,
Իմ կյանքս թող աղաչավոր երգ մ'ըլլա...
... Ես Մահն են, ե՛կ ինձ կյանքին պես գեղեցիկ...
... Եկու՛ր, ես մո՛ւթ բաներ պիտի քեզ ըսեմ'
Սիրո պես քաղցր ու մահվան պես հզոր...
... Սի՛, մի՛ լսեր հոգնած հոգիս որ կուլա,
Տար զիս սիրո կղզիներեն դեպի մահ...

Համանման հատվածներ կարելի է քաղել «Գինով սեր», «Երգ երգոց», «Եկո՛ւր», «Հավիտենական հեքիաթը», «Աղոթք», «Օվսաննա» և այլ բանաստեղծություններից, ուր անտեղի կլիներ որոնել սիրո քնարական վերապրումի այն որակը, որ սովորաբար անվանում են «հոգեբանական ծշմարտացիություն»: Բանաստեղծին դա չի էլ հետաքրքրում. նա ինքնամոռաց տա-

րերքի մեջ հայտնագործում է իր սեփական ճշմարտությունը, երբ զգացմունքի գեղումը աղոթքի նման բացարձակ ու անպայման է, երբ եսի ինքնազոհաբերումը ոչ միայն սիրո գերագույն վայելք է նշանակում, այլև մահ, եսի նյութականության ոչնչացում: «Ես էլ դու եմ, ես չկամ», - պիտի ասեր Վահան Տերյանը: Ինքնամոռացման այս պահերին, երբ մարդկային էլության խորքերից լսվում է արարչության ձայնը, չքանում է ինչպես հարցականի տարակույսը, այնպես էլ պատասխանի երթեք չքավարարող որոշությունը: Սերը և մահը առանձին-առանձին ինաստագրկվում են, գերագույն վերացման խորհուրդը խտանում է Սեր-Մահ բնեռացված ու միաժամանակ փոխանցական միջակայքում:

* * *

Բայց քնարական իրադրության անտեսանելի գոյավորումը դեռ լիարժեք բանաստեղծությունը չէ. բուն բանաստեղծական պատկերը բառի, խոսքի գործառույթ է, որ գործի պիտի դնի «բան» Սերումք:

Սևակի նշանավոր սերնդակիցներից յուրաքանչյուրն այս տեսակետից ունի իր ցայտուն ինքնությունը, լեզվամտածական, լեզվամշակութային նախասիրությունները: Վարուժանն ազատորեն օգտվում է գրաբարի բառապաշարից ու դարձվածքանությունից, Մեծարենցը՝ տեղային խոսվածքների կենդանի ու ծկուն հարստություններից, Սիամանթոն բառակերտման, բանաստեղծական դարձվածքի, տողի կառուցման միանգամայն ինքնուրույն օրենքներ է հաստատում: Սևակը բառընտրական, լեզվամշակութային ընդգծված նախասիրություններ կարծեք թե չունի. ակնհայտ է միայն պարզության, հստակության, «Գեղեցկության աստվածների» դավանանքը, մեկ էլ այն գիտակցությունը, թե բանաստեղծությունը «բառը իտեացուց՝ տալով անոր գույնին հմայքը և խազին անհունությունը»: Սրանով էլ որոշվում է նրա բանաստեղծական լեզվի տարերքը:

Սևակի քնարերգության մեջ «բառի իտեացման» մի քանի աստիճաններ կան, ընդ որում դրանք իրականանում են ոչ այնքան մտածումի լարված տքնանքով, որքան ենթագիտակցականի թեթևությամբ՝ ինքնաբուլս ու ինքնաբերաբար. «Մարդեր կան, որոնց համար գրելը քրտնիլ է. անոնք կը գրեն ժակատնին պաստեցնելով ու գրիչնին կրծտեցնելով... Ինձ համար գրելը երգել է», - խոստովանում է բանաստեղծը: Դա նշանակում է, որ բառիմաստի, գույնի, հնչյունի համադրությունը նրա քնարական պատկերներում խորքային ծագում ունեն և միայն տեքստի մակերևույթին են ձևավորվում՝ ըստ բանաստեղծական իրադրության լարվածության: Խոհական իրադրություններում բառի ծշգրիտ իմաստները շարահյուսվում են կառուցիկ դարձվածքների, տողերի, պարբերությունների մեջ. ուտանավորի կշռույթը, ոիթմը, մեղեղին հստակ հնչողությամբ տրամադրում են ներսույզ խոկումների. «ինչո՞ւ» գործում է համառ հետևողականությամբ.

Բայց ուսկե՞ կու զա այն հույսը մարդուն,
Որ մեծ-ցայգին մեջ միայնակ արթուն
Կ'ուզե հսկել՝ երբ իր ոսկերոտին
Երկու ափ հողին ներքն կ'անհետին:
Ու ինչպե՞ս դիակը վտելե վերջ,
Մարդ համառորե՛ն, Մահվան ծոցին մեջ,
Անմահության Հույս մըն է դիուցեր...

Հեգնական իրավիճակներում, իսկ հեգնանքը Սևակի քնարական խառնվածքի էական հատկանիշներից է, բառը դարձվածքի երկայնքով թօչկոտում է փոփոխական առկայժումներով, ոիթմը հատու և ընդհատուն շեշտեր ունի, թեև այս դեպքում էլ բառի իմաստային տարրողությունը, դարձվածքի հաղորդական լիարժեքությունը նկատելի կառուցողական արժեք ունեն.

Արդ, ո՞ւր եք չքնաղ խոստումներ Խաչին.
Եղբայրության գո՞ւր բարբառներ, ո՞ւր եք:
Կրակ կը փսխե հողն ամենուրեք...
Գետերն արյունով, դիակով կ'ուռչին...

Ու կ'իյնա ան, որ կը ծնկե վախով,
Զի թուրն ավելի արդար է խաչեն,
Զի կյանքն անոնց է միայն, որ քա՞զ են,
Անո՞նց, որ կ'ապրին ուրիշին մահով...

«Բառի խտեացման» բարձրագույն աստիճանը սիրո ներշնչումներն են, ուր բառը՝ իբրև ինքնուրույն իմաստային միավոր, գրեթե չի գիտակցվում: Զգացմունքի տարերքը բուռն հորժանքով կասեցնում է մտքի շարժումը, քնարական պահի լարվածությունը որոշվում է տրամադրության շիկացումով, դարձվածքի հնչողությունը մոտենում է երաժշտականին, բանաստեղծական մթնոլորտն ամբողջապես շնչում է միայն բացարձակ հոգեղեն արժեքներով. «ինչո՞ւն» կորցնում է ուղղորդավորող ներուժը, որովհետև պարզապես չկա: Նյութից ծերբազատված ոգին լուսավորում է տարակույսի մթությունները: Սիրո պարզ խոստովանությունը դառնում է աղոթք՝ ուղղված մաքրագործումի հրաշալի խորհրդին, որ կա ու չկա, որ անանուն է ու բազմանուն, որ մարմին է ու հոգի միաժամանակ.

Այս, դեպի քե՞զ, ու դեպի քեզ, դեպի քե՞զ...
Ի՞նչ ահավոր է բարձունքը սարսուագին,
Ու ի՞նչ երկար ու դառնորեն հրակեզ,
Կրակե ծամբան քու աչքերուդ Արեգին...
Այս, դեպի քե՞զ, ու դեպի քեզ, դեպի քե՞զ...

Դուն որ Սերն ես, ու Խտեալն ես, ու Հոգին.
Ու ինչ որ կա ամենեն վեհ ու մաքուր.
Ու ինչ որ կա լացընող մեր ախտագին

Մրտին հազար հյուսկենները թաքրաքուր...
Դուն որ Սերն ես, ու Իտեալն ես. ու <ոգին...

Փորձենք վերապատմել այս ինքնատիպ հատվածների բովանդակությունը. ոչինչ չի ստացվի, քանի որ Սերն, Իտեալը, <ոգին գաղափարանշաններ են, որոնց գործառության դաշտում բառերի, կապակցությունների ուղղակի նշանակություններն իրենք իրենց որոշակիությունը «հաղթահարում են» «անհավանական», «անտրամաբանական» հարաբերություններում, ինչպես նյութական աշխարհի բազմազանությունը լուծվում է հոգեղեն կեցության համասեռության մեջ: Սևակի քնարերգության համակարգում այսպես է գործում արվեստի անձեռնմխելի օրենքներից մեկը, որ ավանդաբար ասվում է ձևի և բովանդակության ներդաշնակություն:

* * *

Ուրբեն Սևակի ամբողջ ստեղծագործությունն, այսպիսով, տանջագին հարցականների ու հարաբերական «լուծումների» ձգվող զսպանակ է՝ իրար հաջորդող, իրարով ուղղորդավորվող վերընթաց պարույրագալարներով: Ամենավերին գալարի վրա հրապուրիչ հեռանկարում շղոշողում են Սերը, <ավատը, Գեղեցիկը: Մտքի պայմանական կառույցներով անլուծելի ինչո՞ւները լուծվում են արվեստի «անպայմանականությամբ»: Բայց դա էլ հավիտենական երջանկության երանելի հանգրվանը չէ, այլ միայն որոնումի ճանապարհ, այն էլ՝ անվախճան: Այդ հանգրվանը թերևս ինքնամոռացումն է՝ Մահը, այսինքն՝ բոլոր հունավորների անհունացումը, բոլոր մասնավորություններ համայնացումը, բոլոր տարակույսների փարատումը... Իրագործելի հնարավորությո՞ւն է դա, թե՝ անհասանելի իդեալ: Սա էլ մի ուրիշ հարց է, որի միարժեք պատասխանը կնշանակեր արվեստի, բանաստեղծության մահ:

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ ԵՎ ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Դանիել Վարուժան և Ռուբեն Սևակ առնչակցության մասին գրելու առիթը եղավ Սևակի կենդանության օրոք չտպագրված մի բանաստեղծության /«Հովհան»/ առաջին անգամ ընթերցումս: Չուգահեռը՝ Վարուժանի «Առաջին մեղքը» բանաստեղծությունն էր:

Ավելի ուշ «հայտնաբերեցի», այնքան ակնհայտ, նրանց կենսագրության, ճակատագրերի զուգահեռը: Նրանց անուն-ները մշտապես պիտի հիշվեն կողք կողքի, քանի որ կողք կողք էին իրենց ողբերգական կյանքի վերջին րոպեներին: Նրանց փոխադարձորեն տեսան միմյանց սարսափելի մահը. Չանգըրի աքսորավայրից Այաշ տեղափոխելու կեղծ պատրվակով, ծանապարհին, մի ձորակում, կապելով ծառերից, կողք կողքի, նրանց դաժանորեն մորթութեցին: 1915թ. օգոստոսի 26-ն էր: Վարուժանի թե Սևակի անունը հիշատակող ամեն հայ աշակերտ /և ինչու միայն/ նրանց կենսագրության այլ դրվագներ մոռանալով անգամ, գիտե, որ նրանք իրար հետ նահատակվեցին: Վարուժանին հիշելիս ասում ենք՝ նրա հետ էր Սևակը, Սևակին հիշելիս՝ նրա հետ էր Վարուժանը:

Նրանք իրար հետ էին ճակատագրով: Այսօր դարասկզբի մեծերի անունների մեր ամեն մի հիշատակության մեջ Միամանթոյի ու Վարուժանի կողքին նաև Սևակի անունն է /Եղեռնի երեք նահատակ/: /Անշուշտ, նաև Եղեռաբախտ Միսաք Մեծարենցինը և Եղեռնից մազապուրծ Վահան Թեքեյանինը/:

Ընդհանուն մեկ տարով էր Սևակը փոքր Վարուժանից: Վարուժանի առաջին տպագիր բանաստեղծությունը /«Բանաստեղծնահապետին շիրմին առջև»/ 1904-ին էր, Սևակինը /«Բաժանման խոսքեր»/՝ 1905-ին: Հայտնի է, որ Վարուժանը իր գրական

փորձերը սկսել է 1901-ից Պոլսի Գատը-գյուղ թաղամասի Մխիթարյան վարժարանում սովորելու տարիներին: 1902-ին Վարուժանը տեղափոխվում է Վենետիկի Մոլրատ-Ռափայելյան վարժարան: Սևակը Պարտիզակի ամերիկյան վարժարանից Պոլսի Պերպերյան վարժարան է տեղափոխվում 1901թ.: Թե այստեղ սովորելու որ տարիներից է սկսել նա բանաստեղծություններ գրել, հայտնի չէ, բայց հիշատակված է, թե վարժարանի «դասընկերները լավ ծանոթ էին նրա կազմակերպած աշակերտական խմբում կարդացած բանաստեղծություններին»:

Նրանք երկուսն էլ վարժարանն ավարտեցին փայլուն ցուցանիշներով նույն՝ 1905թ.: Նրանք երկուսն էլ նույն տարում, մեկը՝ Վենետիկից, մյուսը՝ Պոլսից, Եվրոպա մեկնեցին բարձրագույն կրթություն ստանալու: Սևակը /այն ժամանակ՝ Զիլինկիրյան/ ուսուցչապետ Ռեթեռոս Պերպերյանի խորհրդով մեկնում է Շվեյցարիա և ընդունվում Լոգանի բժշկական համալսարան /նյութական ապահովում էր հայրը/: Վարուժանի /ինը Չպուգքյարյան/ հայրը չէր կարող հոգալ նրա նյութականը, միսիթարյան հայրերը Մոլրատ-Ռափայելյան կտակի կրթաթոշակով նրան իրենց նախընտրած վայրը ուղարկեցին /Բելգիայի Գենտ քաղաքի համալսարանը/, թեև իր իսկ վկայությամբ՝ Դանիելը, Սիմոն Երեմյանի հետ խորհրդակցելով, որոշել էր Լոգան գնալ: /Ենթադրելի է, որ երկու հայ բանաստեղծ ուսանող, եթե նույն քաղաքում լինեին, չին կարող չմտերմանալ, օտար մի քաղաքում, հեռու հայրենիքց, ու նրանց մտերիմ զրոյցները հաստատապես նոր լիցքեր էին տալու նրանց/: Անձնական ծանոթությունը չեղավ, բայց մթնոլորտը նույնն էր՝ Լոգան թե Գենտ, Շվեյցարիա թե Բելգիա: Եվրոպան էր: Թուրքական միջավայրից հետո /Բրգնիկ թե Սիլիկրի, Պարտիզակ թե Պոլիս/: Ուսանողական տարիները /Դանիելը՝ չորս, Ռուբենը՝ վեց/ ոչ միայն գիտելիքներ տվեցին, այլև կյանքի, աշխարհի նոր ու լայն ծանաչողություն: Բժշկագիտության գաղտնիքների մեջ խորանուին Ռուբենը թերևս ավելի քիչ ժամանակ ուներ բանաստեղծական մուսայի հետ մտերմության:

1906-ին նոր միայն նա խորհել է բանաստեղծությունների գիրք հավաքել՝ /«Սրտի ժամեր», 1906, Լոզան, Ա տետրակ տիտղոսաթերթով/: 1907-ից է միայն նա սկսում մամուլում, ոչ հաճախադեպ, իրապարակել իր քերթվածները: «Հաճախելով հանդերձ գրական դասընթացներուն» և կանոնավորապես «հետևելով քաղաքական ու տնտեսական գիտություններուն»՝ ուսանող Դանիելը այդ շրջանում արդեն ծանաչված բանաստեղծ էր: 1905-ի վերջերին Վենետիկում լույս էին տեսել նրա մի շարք բանաստեղծություններ, 1906-ի սկզբում՝ «Սարսուլոներ» ժողովածուն, 1908-ին գրեթե պատրաստ էր «Ցեղին սիրտը»:

Բայց նրանք երկուսն էլ խորապես հասկացան ժամանակը, հայ մարդու ծանր վիճակը բռնապետական ու բարբարոս թուրքիայում, նոր ժամանակների մարդու բարոյական անկումը, բարքերի ապականությունը: Թե ով ավելի շատ գրեց և ավելի հզոր, էական չէ, բայց որ նրանք նույն ցավով ու անհանգստությամբ, հայ մարդու ծակատագրի նկատմամբ նույն տագնապով էին հնչեցնում իրենց բանաստեղծական ծայնը, էական է:

Հայտնի է, որ աշխատավոր, բանվոր դասի դառը կյանքի, նրա տրտունջի, բողոքի, ըմբոստության, նույնիսկ պայքարի մասին արևմտահայ բանաստեղծության մեջ առավել նշանակալին Վարուժանի երգերն են / զետեղված հատկապես «Գողգոթայի ծաղիկներ» շարքում/: Բայց նկատենք նաև, որ այս թեմայի շրջանակներում նրան ավելի մոտ է Սևակը: Չասենք, թե Սևակը ազդվել է Վարուժանից: Բնավ: Եվ ոչ էլ Վարուժանը՝ Սևակից, քանի որ Սևակի նմանատիպ գործերը ավելի վաղ են գրված: «Սակայն տեսած էի Եվրոպան... հոգիիս վրա բոցի մը լեզվին պես զգացած էի բանվորներուն աղաղակները մեկ կողմեն և մյուս կողմեն շվայտ ու արբեցող կյանքը...» և այս բոլորը «հանգեցա գրել, երբ որ երկիր իմ գյուղս վերադարձա...», - Վարուժանի վկայությունն է: Սևակը նույնպես «տեսած էր Եվրոպան», «բանվորներուն աղաղակները», ցույցերը: Կար նաև Եվրոպական բանաստեղծությունը, որ կարդում էին նաև երկու երիտասարդ հայ բանաստեղծները:

Սևակի «Դրամիս աղոթքը», «Կարմիր դրոշակը», «Այս դանակը», «Մարդեգությունը», «Թրուպատուրները» այդ տպավորությունների արդյունք են և արտահայտում են բանաստեղծի ոչ միայն կարեկցանքը, սերը «անօթիներու», «գործազուրկներու» /«գործարաններու դուռները փակ են», հազարավոր բանվորների «նետեր են փողոց»/, հարստահարվող խեղծերի նկատմամբ, ատելությունը դեպի «գանձեր դիզող» տերերը, «հղիացած, ճոխ մեծերը երկրին», այլև բողոքը անհավասարության, ընդգծված շերտավորվածության, փողի սանձարձակ տիրապետության դեմ: Փոթորկվում է նրա հոգին /«կրծքիս տակ զսպել կուզեի հոգիս»/, երբ դիտում է այդ անհավասարությունը, ավելին՝ նտովի, որպես տեսիլ, տեսնում է ելքը՝

«Ստրուկներու կուռ, բարբարոս գունդեր.
Որ տաժա՛ր, Աստվա՛ծ, կու՛ռք, իշխան ու տե՛ր
Տապալելով վար կերթային հեռու՝
<ավասարության սերմը ցանելու
Ու լայն բաշխելու Արդարություն, հաց...»:

Սի այլ դեպքում, արդեն ոչ որպես տեսիլք, Սևակը ստեղծում է իրական ցուցարարների պատկերը, հավանաբար անմիջական տպավորությունների հիմքով, թե ինչպես անօթիների, գործազուրկների կուռ բանակը քայլում է փողոցով՝ «կարմիր դրոշակը» պարզած. «կերթային անոնք ի՛ գեն, ի պայքա՛ր», հանուն արդարության, «որ այս կերպով պիտի գար...» /այսինքն՝ գենքով, պայքարով/, գնում էին «նոր Օրենքի նոր նժար մը կերտելու»: Ավելի ուշ Վարուժանը «Մայս մեկ» բանաստեղծության մեջ՝ գրված Թոքատում /առաջին անգամ տպագրվել է «Ազատամարտում» 1912թ. մայիսի 1-ին/, գործատներում տառապողներին, «հացի գոհերուն», «նկուղներու մեջ խոնավ» հյուծվողներին հրավիրում է մայիսմելյան միասնության՝ խոստանալով իր սրտի բոցերով և հոգու լույսերով կյան-

քի «ցեխերեն», տառապանքներից «շաղելու» «Նոր Մարդկություն և Նոր Հոյս», որ, ըստ էության, նույնական է «Նոր Օրենքի Նոր Նժար» սևակյան արտահայտությանը: Բանվորների «ղրոշակը կարմիր» է, նրանց տոնը՝ «կարմիր», որ մայսեկյան տոնն է, որին նվիրված է Սևակի «Կարմիր տոն» բանաստեղծությունը՝ գրված 1909թ. մայիսի մեկին Լոզանում:

Սևակը ընտրել է դիմումի ձևը՝ ուղղված «բոլոր բանվորներուն, նորմիներուն»՝ «բանվոր, անբան, ծեր, որբ, անտուն», ոգեշնչում է «հզոր ընդգումի մեջ» քանդել «կուտքը մեծերուն», երգել վրեժը իրենց վերքերի, որովհետև՝ «Ձերին կարմիր տոնն է այսօր», «Վրեժի ահեղ տոնը»:

Վարուժանը «բանվորական թեմայով» մի ամբողջ շարք ստեղծեց՝ նրանց տառապանքի, ողբերգության, ըմբուստության, հավաքական ուժի ընդգծումներով /«Բանվորուիհն», «Մեռնող բանվոր», «Դադար», «Սպասում», «Ո՞վ դար, ո՞վ դար» և այլն/:

Սևակի համար սեռուն գաղափար է դրամի հետևանքով ստեղծված անհավասարությունը, մարդկային կյանքում գոյացած քառոր /նա ծրագրել էր «Բառու» խորագործ բանաստեղծությունների շարք-գիրք լույս ընծայել/,՝ դրամի գործած ավերները մարդկային հոգիների, հարաբերությունների, բարքերի մեջ: /«Մի կրոնք կա՝ Կեղծիք, մի աստված՝ Դրամ...»/: Ժամանակակից բարքերը խորապես տրտմեցնում են բանաստեղծին, մարդկային գեղեցիկ ու բարի հատկանիշների կորսուի զգացումը ապրում է ցավագնորեն և ընդգումով.

Այս ի՞նչ դարերու հասեր ենք, Աստված,
Փշրեցին ինչ որ կար վսեմ կերտված,
Թե դեռ սիրտ ունիք, թաղելո՛ւ տարեք.
Ուկիհն նենգ ձայնն է ամենուրեք...

Դրամի ավերումներն ամենուր են, անգամ արվեստի ասպարեզում.

Վայն, արծաթն Արվեստն հանեց կախաղան...
/«Թրուպատուրները»/

Գիտենք, որ Վարուժանի և հեթանոսական շարժման մյուս հեղինակների՝ «հին-հին դարերու», հեթանոսական ժամանակների նկատմամբ կարոտախտը առաջին հերթին պայմանավորված էր նոր դարերի, նոր ժամանակների, կապիտալիստական հարաբերությունների նկատմամբ անհանդուրժողականությամբ: «Այդ օրերուն աղտն ու տգեղությունն էր», - վկայում է Հակոբ Սիրունին,- որ նրանց «հոգվույն մեջ զգվանք մը կ'արթնցներ ու կը տաներ ետ, դեպի հին դարերը, երբ դեռ մարդիկ չեին խաչած գեղեցկությունը»: Նոր, կապիտալիստական այդ հարաբերությունների քննադատությունն էր հենց ընկած հեթանոսական շարժման հիմքում: Բայց այդ քննադատությունը կար նաև այլ բանաստեղծների երկերում, որոնք «հեթանոս» չեին: Ռուբեն Սևակի վերոբերյալ բանաստեղծություններում նույն քննադատությունն է՝ արտահայտված ցավով ու գայրույթով: Երիտասարդները, մի նամակում գրում էր Սևակը, «Եվրոպա նետվիլ կուգեն իսկույն, մինչդեռ հոն յոթ տարի ապրող մը միայն կրնա գիտնալ, թե ինչ է քաղաքակրթությունը, «զարգացած կյանքը. ամեն բան սուտ ու կեղծիք. շպար ու ամոր: Ասիկա իմ համոզումս է»: «Քաղաքակիրթ» աշխարհից՝ կապիտալիստական Եվրոպայից փախչելու և հայրենի գյուղում կյանքի պայքարը մի պահ մոռանալու ցանկությունը Սևակը լավ է ներկայացրել իր «Մարդերգություն» պոեմի մուտքում.

Անցյալ տարի էր: <ոգնած ապաքեն,
Շատ քաղաքակիրթ այս Արևմուտքեն
Ուր խիղճը բառ մէ, մարդը մեքենա,
Աշխարհ գործարան մանխոնջ, անխնա.
Սերը հաշիվ մէ, Կրոնքը՝ դրամ,
Երջանկությունը ծանծրալի մի տոռամ,

Մահմ՝ անմտություն, կյանքն՝ անհաշտ կոիվ.
Ուր ժամանակն իսկ վատ մէ ալեխոիվ,
Որ ամեն րոպէ իր մանրակրկիտ
Մուրօի հարվածով կը զարնե մտքիդ...
Այսպէ՞ս, հևիին՝, հոգնա՞ծ, հուսահա՞տ,
Անմիտ այս վազքեն անդուլ, անընդհատ,
Կարոտն ունեցա հին-հին դարերու
Եվ հիվանդ հոգիս տարի ես հեռու,
<եռո՛, խնկավե՞տ, լո՛տ, մշտնջենի՛,
Արևելքի իմ գյուղս հայրենի:

Վարուժանի ձեռագիր /Սևագիր/ անավարտ «Քեզի կուգամ, ով գյուղակ» բանաստեղծությունը Սևակյան նույն տրամադրության արտահայտությունն է: Քաղաքի կյանքից ձանձրացած, հոգնած բանաստեղծը բռնում է գյուղի ճամփան, որ «գերագույն խաղաղության կը տանի», բռնում է այդ ճամփան՝ նախապես բեռնաթափվելով այն ամենից, որ Ճնշում էր նրան քաղաքում:

Հոս, դուրսը դե՛ռ, կը թոթվիմ
Փոշին վրայես, ժամտ մնացորդը քաղցին.
Մետաղի փսոր մը ծալքերեն հագուստես,
Կոպերես շիթ մը ցավի:
Կըրունկներես նայվածք մը հուր
Զոր ուղղեցին մարդիկ եղքով նենգելու,
ճակտես թախիծն, աչքես նըկարը քաղցին,
Հոս, դուրսը դե՛ռ, կը թոթվիմ...

«Կարոտն ունեցա հին-հին դարերու», -ասում է Սևակը, որովհետև «քաղաքակիրթ Արևմուտքում» խիղճը լոկ բառ է, մարդը՝ լոկ մեքենա, «սերը՝ հաշիվ մը, կրոնքը՝ դրամ»... Իր ժամանակից նույն հիասթափությամբ՝ Վարուժանը գրում է. «<Եթանոս կյանքը /հին-հին դարերը-վ. Գ./ օրեօր զիս կը գրավե»: Եվ դա

այն պատճառով, որ այդ հին-հին դարերում՝ հեթանոսական ժամանակներում է գտնում ժամանակակից աշխարհի այլանդակությունների հակադրությունը, որովհետև՝

Առաքինի քաջության տեղ նենգն այսօր կը տիրե
Փոխան տեզին հոլանի՝ պատյանի մեջ դաշույնն է՝
Որ կը սողա մութին մեջ, կը ժանգոտի արևին.
Ոմիրներն այդ խավարի լըության մեջ կը
դարբնվին...

Մի գավաթ մյունխենյան գարեջրով մարդիկ կարող են ածուրդի հանել սերը. «Սեր վաճառված, ոչ նվիրված...», - գրում է Վարուժանը «Հարծի» քնարական շեղման մեջ, իսկ «Ո՛ Տալիթա» բանաստեղծության մեջ չի թաքցնում նաև իր ատելությունը՝ «Դահլիճներու փարթամ կիները կ'ատեմ», որովհետև՝ «Իրենց կավատն է՝ ոսկին»:

Վարուժանը բանաստեղծություններ է ձոնում «մեռած աստվածներուն», Սևակը դառնորեն ու ցավով հիշեցնում է, թե «Հի՞ն, աստվածաբընակ դարերը մեռան», և երազում է հին երգասացներին՝ «հայր թրուպատուրն Հոմեր, որ աստվածներու ակեն կը խմեր», «Գողթան թրուպատուրներին», մինչդեռ նոր երգասացները, «որ բռնի կերպով կ'երգեն, կը խաղան», «պետք է խնդացնեն, մոլրան»: Ու եզրակացությունը՝ գերխիտ ընդհանրացումով՝ «Վախ արծաթն Արվեստն հանեց կախաղան»:

Հայրենի տանից հեռու երկու ուսանող բանաստեղծ անշուշտ կարուտում էին հայրենի վայրերը, հարազատներին, և կարուտը ոչ միայն մտորում, նամակ էր դառնում, այլև՝ բանաստեղծություն: 1908 թվակիր իր մի բանաստեղծությունը Սևակը վերնագրել է «Կարմիր կարոտ»: Մտովի նա գրուցում է մի ծամփորդի հետ, որ անցել է հայրենի վայրերով: Արդյո՞ք նա անցել է նաև ի՞ր գյուղի մոտով, արդյոք տեսել է «տնակները հին ու ցած»՝ «արյունաներկ մամռուտ պատերով», գյուղի

այգեստանները, ցորենի դաշտերը: Նրա տեսլապատկերում կենդանանում է հայրենի գյուղը՝ իր գեղեցկություններով ու թշվառությամբ, որի նկատմամբ իր կարոտը «ախտագին» է:

*Տարիներով կարոտն ունիմ սիրագին
Այդ հողերում, աղբյուրներուն մեղմ հոսան,
Այգիներում, գերեզմանին, լուսնակին
Ու ժայռերուն որ իմ ծընիլս տեսան...
Անոնց կարմիր կարոտն ունիմ ախտագին:*

Բանաստեղծի անձնական ապրումը դարձել է ընդհանրական ապրում, որ բնորոշ է բոլորին, ովքեր հեռու են հարազատ գյուղից: Մանավանդ որ այդ գյուղը գտնվում էր բռնապետական թուրքիայում: Դա թուրքիայում հայ գյուղի ընդհանրացված պատկերն է. գեղեցիկ ու բարեբեր բնություն, բայց և ինչ -որ բան հուչող պատկերներ՝ «քարուքանդ պարիսպներ», «տրտմագին» հայացք, «սուզի տնակները իին ու ցած», «սեմին առջև ծերեր», «արյունաներկ մամուռ պատեր», «ավերակ գյուղ», գերեզմանոցում ննջող «նահատակներ»: Այս ընդհանրական պատկերներն են, որ ծնուն են սիրագին, բայց և «ախտագին», վառվող, արնագին «կարմիր կարոտ»:

Մի ուրիշ, բայց իրական «Ճամփորդի»՝ Դերենիկ ճիզմեճյանին է ուղղված Վարուժանի խոսքը, որ դարձել է բանաստեղծություն՝ «Պատվեր» խորագրով /1909/:

*Ահա քղամիդդ գգեցար և ճամփորդի ցուադ առիր.
Կը բարախե սիրտդ արդեն հայրենիքի կարոտեն:
Քանի մօրեն պիտի մեր հողն համբուրես
սիրալիր...*

*Ընկեր, պատվեր մը ունիմ քու հոգիիդ հանձնելու.
Հայրենակոյն ոտքերուդ կապելու սիրտ մը ունիմ,
ճամփորդ վրա, Ալիսի ջուրերուն մոտ այցելու,*

**Ուոհնազարդ գյուղ մը կա. ներս մտիր. ան
գյուղն է իմ:**

Եթե Սևակը անհայտ անցորդին հարցնում է, թե արդյոք նա չի անցել իրենց գյուղի կողքով, Վարուժանը իրենց գյուղի կողքով անցնող ճամփորդին խնդրում է մտնել իրենց գյուղը: Իրական պատմություն է: Վենետիկյան շրջանի իր ամենամոտ ընկերն էր Դերենիկը: 1908թ. ամռանը Դերենիկը թուրինից մեկնում է հայրենի Երզնկա: <Համեշտի երեկոյին մասնակցում էր նաև Վարուժանը, որ խնդրում է նրան ճանապարհին Պոլսում հանդիպել իր հորը: Այս առիթով է գրվել «Պատվերը» և նվիրվել է Դերենիկ ճիզմեծյանին: Բանաստեղծը խնդրում-պատվիրում է նրան մտնել իրենց տուն, որ ծնողները նրանից իր կարոտն առնեն, ու հատկապես իր տված նամակը հանձնել՝ «պանդուխտ օրերս արցունքին շիթով համրող» մորը, նամակը, որի մեջ «կարմիր Ուլստս եմ գրեր»: Մեկի մոտ՝ «Կարմիր կարոտ», մյուսի մոտ՝ «կարմիր Ուլստ». Կարմիրը, որ արյան գույնն է, հողին, երկրին, գաղափարին անձնազրի նվիրումը, երկու հեղինակների մոտ մասնավոր նրբերանգներով, բայց և ներքին աղերսներ է ենթադրում:

Ուսանող Վարուժանի մի խոհը /1906թ./ իր գրասեղանի վրա, «սկավառակին մեջ» «Հայրենիքի դաշտերեն բերված» «բուռ մը հողի» շուրջ, սևովում է նրա գունային հատկանիշի վրա՝ «կարմիր հող» է այն: Բնության օրենքով, թե՛ իր նախնիների արյամք ոռոգված «կարմիր հողը» կարմիր զգացումներ է թելադրում.

**Զիս հապըշտապ կը մղե
Մերթ լալու, մերթ մոընչելու,
Եվ զիմելու բռունցքըս, հոգիս բռունցքիս մեջ:
/«Կարմիր հողը»/**

Այս իսկ տրամադրությամբ նույն թվականին ծնվեց «Զարդը» ընդարձակ քերթվածք՝ 1895-96-ի Պոլսի ջարդերի ականատեսի անմիջական տպավորությունների վերհուշով:

Եկավ 1909թ. ապրիլը: Նոր ջարդեր Աղանայում, Կիլիկիայի տարբեր վայրերում: Շուրջ 30 հազար զոհեր: Կոտորածի լուրերը հասան աշխարհի տարբեր ծայրերը: Առող Յարձանյանին դրանք հասան Պոլսում: Նախորդ ջարդերի սարսափելի տեսիլներից դեռ չազատված /«Կոտորած, կոտորած, կոտորած քաղաքներեն ներս և քաղաքներեն դուրս», «Եվ բանաստեղծի աչվներս արյուն, արյուն, արյուն է որ կը տեսնին»/ ահավոր լուրեր ստացավ Աղանայի կոտորածների ականատեսներից: Այդ լուրերը նա որակեց «Կարմիր» և այդպես էլ անվանեց ահազարհուր պատկերների իր նոր շարքը՝ «Կարմիր լուրեր բարեկամես»: Վարուժանը հեռավոր Գենտում ստացավ այդ լուրերը, Ռուբեն Սևակը՝ Լոզանում: «Կարմիր լուրեր»: Այդ լուրերից փոթորկված երկու երիտասարդ հոգիներ իրենց ցավը, զայրութը, իրենց տագնապներն են դրել այն նամակներում, որ հենց այդ օրերին հղել են «Ազդակի» խմբագրությանը /տպագրվել են մայիսյան իրարիազորդ համարներում/: Իրար անծանոթ երկու երիտասարդ բանաստեղծ որքան նման են իրենց հուզումների, զայրույթի, մտահոգությունների մեջ: «Համիտին փորասողուկ թափալումը /նկատի ունի Սուլթան Համիդի գահընկեց արվելը ապրիլի 28-ին - Վ.Գ/ ինձի այնքան ուրախություն չպատճառեց, որքան Կիլիկիայի ջարդը ծնվեց աղիքներս: Ցեղին հոգին արյուն կուլա մեջս, իրդեհված քաղաքներեն եկող ամեն լուր տաք մոխիրի նման կը թափի գլուխիս և սրտիս վրա... Լուրերը այնքան գեշ ազդած են վրաս, որ կը ցավիմ Աղանա չգտնվելուս համար»,- գրում է Վարուժանը: «Սև օրեր կ'ապրինք նորեն, սարսափի օրեր: Հեռագիրները ամեն ժամ նոր գույժ կը բերեն: Զա՞րդ, ու եթե ջարդ չէ, իրդե՞հ, ու եթե իրդե չէ, սո՞վ ու ինչ որ ամենեն սարսափելին է, համաձարակ»,- գրում է Սևակը, ապա նկարագրում մի խմբագրատան պատին փակցված ջարդի նոր

լուսատիպ նկարների զայրացուցիչ պատկերները՝ «հազարավոր թշվառներ ծովի ափին.. ոտքեր, մարդու կտորներ, որովայնը պատռված և դուրս հանված երեխա մը իր մորը դիակին վրա..., ապա՝ «Սիրտս պատառ-պատառ... կը հեռանայի այդ արյունի զայրացուցիչ ցուցադրությունեն»:

Երկուսի համար էլ անհանդուրժելի է խեղճությունը, կրավորականությունը, խլուրդի կյանքով ապրելը: «Միթե դեռ հայեր կա՞ն, որ Զեր ըսած խլուրդի գոյությունը կ'ապրին: Եթե մինչև հիմա ուրիշ ազգ մը մեր կյանքը ապրե՞՝ իր մեջ մեկ պահպանողական չէր հաշվեր... Եվ դեռ հայության ծոցին մեջ «խլուրդի գոյություններ» կան: Խլուրդ չեն ատոնք... որդեր են, անարգ որդեր, ... որ գարշապարիս տակ ձգմել պիտի զգվեի», - գրում է Վարուժանը: Աևակը դառնացած սրտով, մեջբերելով եվրոպական հանդեսից մի հատված, թե Թուրքիայում անընդհատ կրկնվում են ջարդերը, թե այս ամենը այնքան տարօրինակ չէ մեզի համար, որքան այն հուսահատեցուցիչ «խելոքությունը», որով հայերը կ'ողջունեն այս ջարդերը, և թե «Ե՞րբ այս ժողովուրդը պիտի սորվի մարդկորեն կատղիլ...», ավելացնում է. «Ու իրավ: մարդկորեն կատղիլ. այս տարրական առաքինությունը կը թվի իսպառ հեռացած ըլլալ հայու սրտեն... նույնիսկ մտավորականության մեջ»: Աևակը զայրացած է հայ մամովի՝ կիլիկյան ջարդերի մասին ոչ բավարար տեղեկատվության, ինչպես նաև սուս «ծայրահեղորեն հոռետես, ջլատ դամբանականներու» պատճառով: «Մինչդեռ հայ ընդհանուր մամուլը Սուգին սկը՞ը պետք է պատվեր կամ Արյունի կարմիրովը պոռքկար... Դամբանականները պետք է կարդալ դամբանական խմբագրողներու գլխուն: Ժողովուրդները ինքնապահպանության, ցեղին շարունակության, Պայքարին բնազդը ունին... ֆաթալիզմը չէ որ պիտի փրկե ընկճված ցեղերը...», - գրում է Աևակը: Վարուժանը կարծես գրում է հենց Աևակի ցանկացած խոսքը, ոչ թե հուսահատեցնող դամբանականի, այլ հավատավոր հույսի. «Բայց հայը պիտի ապրի՝ հակառակ իր դահիճնե-

րուն... Այս է մեր բոլորի հույսը, հույս մը, զոր մուրճով կռեցինք, ինչպես մեր պապերեն մեկուն նիզակը, որ նպատակին կը դիմեր օդին և արևուն մեջ երգելով»: «Չանցնիր այն ծրագն՝ զոր վառեց Աստված»։ ալիշանյան այս տողի փոքր-ինչ խմբագրումով է ավարտում Վարուժանն իր նամակը՝ «Չանցնիր այն ծրագը՝ զոր կամքը վառեց»։

Վարուժանի ու Սևակի այս նամակներից հետո «Ազդակը» տպագրում է Սևակի «Ո՞վ իմ հայրենիքս...» /«Կիլիկիո աղետին» ձոնով/, «Չանցակներ, զանգակներ» բանաստեղծությունները, ապա Վարուժանի «Կիլիկյան մոխիրներուն» ընդարձակ քերթվածը։ Թեոդիկի «Ամենուն տարեցույցի» 1910թ. տարեգրքում լույս է տեսնում Սևակի «Կիլիկյան երգեր» շարքը /երեք բանաստեղծություն/։ Իսկ «Զարդին խենթը» և «Թրքուհին» պոեմները գետեղվում են 1910թ. լույս տեսած «Կարմիր գիրքը» ժողովածուի մեջ։

Վարուժանի «Կիլիկյան մոխիրներուն» ընդարձակ քերթվածը նաև ներառվում է արդեն հրատարակության պատրաստված «Ցեղին սիրտը» ժողովածուի մեջ՝ որպես «Բագինին վրա» շարքը ամփոփող երկ։ «Կիլիկյան մոխիրներուն» քերթվածում կրկին «Զարդը» քերթվածի գաղափարն է՝ խաղաղ, ստեղծող, արարող ժողովրդի և բարբարոս ոգու հակադրությունը։ Տավրոսի ստորոտում «Ժիր ժողովուրդ մոր կյանքին աստվածումը երգեց» և «Բարբարոսները... որ արկին վրա թզքնելով՝ մահվան սերմները բըռած մեծախնծիղ արթնցան»։ Կիլիկյան ոճիրը ոչ թե պատմում է բանաստեղծը, այլ ցույց է տալիս օտարականին՝ բարձրացնելով նրան «լերան վրա», որտեղից պարզ երևում են «քաղաքն ու գյուղերն ու արոտներն ու ափերն ուրկեանցավ կրակի Ցեղն»։ Համատարած սպանդ, հրդեհված քաղաքներ ու շեներ, հանդեր։ Ցույց է տալիս, որ օտարականը իր «ոսկիի եղբայրներուն» պատմի, «թե ինչպես Կիլիկյան մորթեցին»։ Չի մոռանում նաև օտարականին սպանիչ հեգնանքով ասել, թե հավատացած է, գիտի, որ այդ եղբայրները «մեծա-

գոգ նավերով գալ պիտ՝ ուզեն... օգնության... ո՞հ..., ո՞չ... մահվան մնացորդին...» պիտի գան «մեր կույս լեռները պեղել», «հանքերեն կըթել մետաղն հրաշափայլ...»: Հրաժեշտ է տալիս օտարականին, իսկ ինքը պիտի տեր կանգնի անթաղ զոհերին, պատանքներ գործի, գերեզմաններ փորի, շիրիմներ կերտի, հուշարձաններ կանգնեցնի և «մարմարին վրա երգերս տապանագիր քանդակեն»: Ցավի, մխիթարանքի, ըմբոստության ու հավատի երգերը:

«Ո՞վ իմ հայրենիքս...» /«Կիլիկիո աղետին» ձոնով/ բանաստեղծությունը, որ Սևակը գրել է հենց կիլիկյան ջարդերի օրերին, «տարագիր», «հայրենահալած քերթողի»՝ «արյունի տաք շամանդաղի», «համայնասպառ բոցերու» մեջ մխացող «ղդբախտ հայրենիքի» նկատմամբ ցավագին սիրո, հոգեկան խռովքի, ծանր դրամայի արտահայտությունն է՝ կառուցված ոչ միայն հայրենիքի խաղաղ ու երանելի ժամանակների և ջարդի մղճավանջային օրերի, այլև մի ուրիշ հակադրության պատկերներով. հեռվում արյունաներկ ու երկիզված երկիրն է, ինքը խաղաղ Եվրոպայի հրաշք անկյուններից մեկում՝ չքնաղ Լեմանի ափին /«Յայգն ի՞նչ անուշ է. ցայգը ի՞նչ գինով... ի՞նչ խաղաղությամբ, ի՞նչ անծառ նկար...»/, քայլում է՝ «խոր տրտմությունով, որովհետև աչքերի առաջ սպանդի տեսիլներ են, ականջում՝ ահազարհուր ծայներ /«Բարե՛: Վայուններ են որ կը լսեմ...», «խելահեղ փախչող» և «ընդդիմադրումի մը պահուն». «պիղծ յաթաղանով ընդկիսված ահեղ՝ Կայսերու վայունն է որ կը լսեմ»/: Քայլում է ինքը Լեմանի ափով, ինքը՝ «հիմար տարագիր»՝ «Ներքնապես լալով՝ միտքդ դեպ երկիր»... Չանցած մեկ ամիս՝ նա գրում է «Զանգակներ, զանգակներ»-ը, որի մեջ բանաստեղծը «ներքնապես լալով», միայն մտքով չէ երկրի հետ, այլ բարձրաձայնում է իր խոհը, առաջարկում, պահանջում /«խոսք ելլել կուզե արյունը վազուն»/: Դիմում է հայոց եկեղեցիների գմբեթներում լրած զանգակներին, ի լուր ամենքի աղաղակել գույժը՝ «Աստվածն է մեռեր»: «Գույժ տվեք հա-

յուն զի ա՛զգը մեռավ»: Սուտ դուրս եկան «չքնաղ խոստումները Խաչին», «Եղբայրության զո՞ւր բարբառները», դեռ «հեռու է օրն այն երբ գայլ ու գառնուկ սիրո՞վ կ'արածին» /Վարուժանը իր նամակում գրում էր, թե «դեռ որչափ հինգ դարեր պետք են և որչափ հայու արյուն», որ թուրքը «քաղաքակրթվի»/: Բրիստոնեական համակերպությունը չարդարացրեց իրեն՝ «Կ'իյնա այն որ կը ծնկե վախով, // Զի թուրն ավելի արդար է խաչեն, // Զի կյանքն անոնց է միայն որ քաջ են...»/: Վարուժանն իր նամակում ասում էր, թե «հայր պիտի ապրի» և մեր հույսը մուրճով պիտի կրենք, «ինչպես մեր պապերեն մեկուն նիզակը»/:

Եթե այստեղ բանաստեղծը ուզում է վերցնել զանգահարի առաքելությունը /«ինչպես կ'ուզեի ծերին պարանին // Կախվիլ ու ցնցել երկայ բազուկով».../, որպեսզի դրանք հնչեն, իր հոգու «հազար խոլ զանգակներով» «գոռան» ծշմարտությունը՝ «Օ՛, դողանջեցեք. Աստվածն է մեռեր», ապա «Կիլիկյան երգեր» շարքում վերցնում է մի ուրիշ առաքելություն. Վրեժի սերմնացան է բանաստեղծը և իր տաղերը նվիրում է վրեժին, թեև գիտե, որ նա «ցասումի վայրագ հեղեղ է, արդարության մութ իրեշ», «խավարներու ահեղ ծնունդ», բայց և՝ «Ողջուն, տաղե՛րը քեզի...»: Բանաստեղծը մեկոյի է դնում երգը, որ իր սրտի, ամենքի, ազգի վերջն է մորմոքել, իր տաղերը ուղղում է նրան, թեև գիտի, որ նա «ցասումի վայրագ հեղեղ» է, «արդարության մութ իրեշ», «խավարներու ահեղ ծնունդ», բայց և՝ «Ողջուն, տաղե՛րըս քեզի...»: Բանաստեղծը մեկոյի է դնում երգը, որ իր սրտի, ամենքի, ազգի վերջն է մորմոքել, իր տաղերը ուղղում է նրան՝ վրեժին: «Մութ շանթերու սերմանացան» է համարում նա իրեն, հուսալով, թե հայրենի արյունոտ ակոսներուն ցանած իր տաղերից «մահու առաջալներ», վրիժառու «հսկաներ» պիտի ծնվեն:

Վարուժանն ասում էր, թե այդ ծնվելիք հայորդիները «պիտի ելլեն հսկա և հերոս», արդեն ծնված քաջ մարտիկներին վրեժի տաղեր էր նվիրում /«Եղեգնյա գրչով վըրեժ երգեցի»/:

Հայ ոյուցազնի սրի «մետաղը Վրեժին ճոխ հանքերեն են պեղեր», - գրում էր Վարուժանը: Սևակի երազած «Մահու առաքյալներին» Վարուժանն արդեն մարմավորված էր պատկերում /«Առաջյալը»/: <իշենք նաև, որ Վարուժանի արխիվում կա ինքնագիր մի էջ՝ «Ցեղին սրտի» նախնական ցանկը. գրքի խորագիրը նախապես եղել է «Վրեժին քուրմերը», գիրքը բաժանված է եղել երեք շարքի, առաջինի խորագիրը նույնպես՝ «Վրեժին քուրմերը»:

Սևակի «Հայու որբիկը» նույնպես, իր հարազատների պատկերները հայացքի առաջ, իր թշվառությունը խորապես զգալով, մտքում վժիռ ունի՝ «Վրեժն ինձ աստված»:

Իսկ ահա վիրավոր, մահամերծ հայ մայրը, որի ամուսինը կովում նոր է սպանվել, վերջին օրորն է ասում իր մանկանը, ստիճանների կտրված պտուկներով ոչ թե կաթ, այլ արյուն է դիեցնում մանկանը՝ պատգամելով.

Արյո՛ւն-հեղեղ հորդեց այս սուրբ ձորերե,
Բայց չի փախիս, փարե երկրիդ, զայն սիրե,
Հողիդ վրա գերի մըլլար, այլ տիրե...

Որպես կտակ նա թողնում է մանկանը՝ «Հայաստանը մա՛յր քեզի» և երկսայրի սուրբ՝ հայրիկի դեռ տաք-արյունը վրան:

Երիտասարդ Սևակը այս երգերում ստանձնում է բանաստեղծի առաքելությունը, որ իր ժողովրդի ցավի կրողն է, նրա վշտերի ամոքողն ու մխիթարողը, նրան կովելու, պայքարելու, ապրելու ազդակներ տալու, ներշնչելու կոչվածը, այնպես, ինչպես Վարուժանը «Կիլիկյան մոխիրներուն» քերթվածի /և ոչ միայն/ մեջ:

«Կիլիկյան աղետը» ստիպեց Սևակին մեկո՞ի դնել իր բոլոր բանաստեղծությունները և որպես առաջին գիրք լույս ընծայել երեք պոեմ /առաջինը՝ «Զարդին խենթը»/ «Կարմիր գիրքը» վերնագրով: 1909-ին ծնված գիրքը ընթերցողին հասավ

1910-ին: 1906-1909թթ. գրված «հայրենասիրականներու» իր ժողովածուն Վարուժանը հրատարակության ներկայացրեց 1909-ի աշնանը, բայց ընթերցողին հասավ 1910-ի առաջին ամիսներին: Երկու ժողովածու՝ նույն գաղափարի սևեռումով՝ արևմտահայության կյանքը, ճակատագիրը: Ոչ շատ առաջ լուս էր տեսել կիլիկյան կոտորածներին Սիամանթոյի արձագանքը՝ «Կարմիր լուրեր բարեկամես» քերթվածների շարքը: Կարմիր գույնը խորհրդանիշ էր՝ արյան գույն, որ ներկել է երկիրը: Ու նաև «կարմիր ուխտ», որ կոիվն է, պայքարը, զոհաբերումը:

Վարուժանի և Սևակի ստեղծագործական աշխատանքի ընթացքի մեջ նկատելի է մի հետաքրքիր աղերս. գրքերը հրապարակել ամբողջական կուռ շարքերով: Շարային /շարքերով/ բանաստեղծությունների հրապարակումը դարասկզբին տարածված երևույթ էր /Խսահակյան, Տերյան, Սիամանթո, Վարուժան, Չարենց/: Բայց ահա նախապես ծրագրել շարք, որոշակի սկզբունքով, ոչ միշտ է հայտնի: Վարուժանը դեռ 1908-1909 թթ. ընտրել էր այն խորագրերը /«Գողգոթայի ծաղիկներ», «Հեթանոս երգեր», «Հացին երգը»/, որոնց տակ դրվող բանաստեղծությունները դեռ հետո պիտի գրվեին: Ուրեմն նա ոչ թե գրում էր բանաստեղծություններ, հետո դրանք խմբավորում շարքի մեջ, այլ նախապես ծրագրում էր շարքը՝ որոշակի խորագրով, ապա՝ իրագործում:

Մինչև 1910թ. Սևակը գրել էր շատ բանաստեղծություններ, բայց առաջին ժողովածուի /«Կարմիր գիրքը»/ մեջ դրեց ոչ դրանք: Դա նոր հղացված գիրք էր, ամբողջական կառույց: Երեք քնարական պոեմ, բաղկացած առանձին բանաստեղծություններից՝ որոշակի կառույցով. առաջին երկուսը՝ տասական, երրորդը երեք՝ յուրաքանչյուրը 11-ական մասով /16 տողանի տներով/: Իր ժողովածուն նա անվանեց գիրք: 1913-ին «Ազատամարտում» Սևակը տպագրեց մի շարք պատմվածքներ, գրույցներ, ակնարկներ, որոնք խորագրել էր՝ «Բժիշ-

կի գիրքեն փրցված էջեր»: «Բժիշկի գիրքը» նա չհասցրեց ամբողջացնել, բայց ծրագրել էր: Մի ուրիշ գիրք էլ էր ծրագրել տպագրել և խորագիրը գիտեր՝ «Սիրո գիրքը» /այս վերտառությամբ նա մամուլում բանաստեղծություններ է տպագրել/: Ծրագրել էր նաև «Թառսը», «Վերջին հայերը» շարքերը /այս մասին հայտնում են Թեոդիկի «Ամենուն տարեցույցը» դեռ 1911թ. տարեգրքում և «Շանթը» 1918-ին/:

Սևակի ծրագրերը անկատար մնացին, ինչպես նրա բախտակից Վարուժանինը: Վարուժանի «Հացին երգը» /անավարտ/ առանձին գրքով լույս տեսավ 1921-ին Պոլսում: Սևակի «Բժիշկի գիրքը... /նույնպես անավարտ/ 1925թ. Սալոնիկում, այդ և հետագա տարիների հրատարակություններում «Գիրքը» մասամբ համալրվել է:

Առավել մանրազնին ուսումնասիրությունը կարող է Վարուժանի և Սևակի մտածողության, պատկերների, գեղագիտության հետաքրքիր աղերսներ նկատել, կյանքի ու գործի հետաքրքիր զուգահեռումներ: Չխորանանք: Նկատենք ևս մի երկու զուգահեռ: Ահա Սևակի «Հայաստան» բանաստեղծությունը.

Ո՞վ կու լա այսպես խշոյակիս շեմքին.

- Քոյիր, դարիպն է բաց:

Կմա՞խք մը կ'անցնի դուրսեն լալազին.

- Սո՞վն է, դուռդ բա՛ց:

Տապա՞րն է ջախջախ դրանս կուրծքին.

- Զարդն է, դուռը բա՛ց:

Հայաստանի համապատկերը՝ երեք բնորոշ իրողությամբ ու հետևանքներով՝ պանդխտություն, սով, ջարդ: Այդպես էր տեսնում Հայաստանը նաև Վարուժանը իր «Ցեղին սիրտը» գրքում, որ ծնվել էր, իր բացատրությամբ՝ այն շրջանում, երբ «հայությունը կը խեղդվեր սուրի և սովի մղճավանջին մեջ»: «Ցեղին սրտի» գրեթե բոլոր տրամադրությունները խտացված

են գրքի սկզբում գետեղված «Զոն» բանաստեղծության մեջ: «Զոնը» գրքում ընդգրկված կյանքի տարբեր կողմերի թվարկումն է: Այստեղ էլ հայ ներկա կյանքի դաժան իրողությունների մեջ, ինչպես Սևակի մոտ, առանձնացված են պանդխտությունը, սովը, սուրը: Վարուժանը խորանում է հետևանքների մեջ՝ հիշատակելով այս ամենի պատճառով ստեղծված կացությունը՝ իեզ պանդուխտների կողքին հարսների հիշատակությունն է /Սևակի դարիափի կողքին՝ քոյրը/, սուրի /նաև կրակի/ հետևանքը անթիվ զոհերն են՝ որբացած տունը, ալեհեր հայրն ու կարեվեր մայրը, որոնք օջախի խորհրդանիշներն են /Սևակի մոտ՝ ջարդը ոչ թե սուրով, այլ տապարով է իրագործված, ավեր տան զուգահեռ տապարով ջախջախված տան դուռն է/: «Սովէ հաց, հաց...» - «Ո՞վ կ'իեծե // Շեմին վրա խըրժիթիս ո՞վ կը իեծե», - այսպես է սկսում Վարուժանը «Ողորմություն» բանաստեղծությունը: «Կմախք մը կ'անցնի դուրսեն լալագին. // Սովն է, դուռդ քաց», - ասում է Սևակը: Վարուժանն, իհարկե, մեծացնում է հայ կյանքի շրջանակը՝ այնտեղ տեսնելով նաև այդ ամենի դեմ պայքարող «հայ մարտիկներին, քաջ մարտիկներին» ու նաև իրեն՝ հայոց տառապանքներն ու նաև պայքարը /եռակի կրկնությամբ/ երգող բանաստեղծին:

Վարուժանի գրքում հայ քաջամարտիկների շարքում է նաև <այուիին՝ «հեղեղատին բոմբյունով լերան կողին օրորերգված և մեծացած» /«Կովի երթ»/, «Վերածնուիիին է, լեռներու աղջիկ, մըրըկին պես զորեղ» /«Ապրիել»/, Վերածնուիիին է, որ ավետում է իր գալուստը. «Կ'ելլեմ, կ'ելլեմ, նախճիրներու ծնունդ եմ, կրակին չափ գերահզոր...», «մատակ առյուծի» սրտով, «վրեժով քինահույզ...» /«Վերածնություն»՝ գրված 1905-ին, լույս տեսած 1909-ին/: Այս բանաստեղծությունները հենց այն շարքում են, որ գրքի նախնական տարբերակում Վարուժանը խորագրել էր՝ «Վրեժին քուրմերը»:

Վերածնության, ազատության պատգամաբերն ու կերտողը Ազատության Զրմուիին է ըստ Սևակի և իր կանչ-հրավե-

ու նրան է ուղղված. «Ահա կուգաս թոթափելեն մոխիրներեղ
դարավոր... // Եկու՛ր, Եկու՛ր, Ազատության ո՛վ Քրմուիիդ ջահա-
գնաց...» /«Ազատության համար», 1908:/

«Առաջին մեղքը» վերնագրով բանաստեղծություններ ու-
նեն և Վարուժանը, և Սևակը: <Ետաքրքիր է, որ ձեռագրերում
դրանք ունեցել են այլ վերնագիր /Վարուժանինը՝ «Խորոպա-
բեկը», Սևակինը՝ «Մեղքը»/: Վարուժանինը առաջին անգամ
լուս է տեսել 1907-ին «Անահիտում», Սևակինը՝ 1912-ին «Ճան-
թում»: Վերնագրի ընտրության հարցում հուշում կա թե ոչ, չենք
կարող ասել, բայց եթե անգամ կա, ապա տարբեր է «առաջին
մեղքի» դիտարկումը: Վարուժանը պատկերում է հեթանոս շր-
ջանի դեռատի կույսի մղումը, որ թելադրում է արթնացող մար-
մինը, դեպի անհնանալին, դեպի այն էակը, որին առաջին ան-
գամ զոհաբերելու է իր կուտությունը: Սևակը պատկերում է
առաջին կնոջ ու առաջին տղամարդուն, աստվածային կամքով
ու թելադրությամբ, առաջին միացման գեղեցկությունը, սիրո
ծնունդը և «առաջին մեղքի» իր մեկնությունն է տալիս: Արարիչ
Ոզին «մարդկության ծնող առաջին զույգի» առաջին գիշերը
կամենում է հրաշալի դարձնել. «սիրահրավեր աչքերու նման»
աստղեր է վառում երկնքում, բնության տարբեր կողմերից
շշուկներ, մեղեղիներ, սյուրեր դյուրիչ մեղեղիներով «սեր են
ծագում» նրանց մեջ, վտակը արծաթե հեքիաթ է ասում, ծղրիդ-
ները երգում են, «Խունկի, աղորքի, բույրի այդ պահուն», «գար-
նան առաջին ցայգն իր Սե՛րն անհուն» «լուռ կը մռնչեր ահաբեկ
զույգին»: «Ահարեկ»՝ նոր զգացման, նոր սկզբի՝ մերձեցման,
զոհաբերության առջև: Բայց դա չէ առաջին մեղքը, այլ այն, որ
այդ պահին իրենց «մինա՞կ զգացին, տխու՞ր գազաններ», որ
«զույգ-զույգ քաշվեր էին լուռ»: Ավելին, այն պահին երբ՝

*Մարդն առաջին, տղու պես դողդո՞ց,
Սոտեցա՞վ սիրով առաջին կընոջ...
Այն ատեն Աստված զինք մինա՞կ զգաց,*

Իր անհուններուն մեջ լացավ հանկարծ...
- Առոտուն իրենց վրա ինկած ցողն խոնավ
Այդ արցունքն էր չար. մեղքն անկե ծնավ:

Սևակի այս բանաստեղծության միջնամասը նկատելի աղերսներ ունի Վարուժանի «Գրգանք» բանաստեղծության հետ /առաջին անգամ տպագրված «Ազատամարտում» 1910-ին, ապա, ինչպես և «Առաջին մեղքը»՝ «Հեթանոս Երգեր» գրքում: Այստեղ հակառակ պատկերն է: Ոչ թե բնությունն է սիրով համակում սիրող գույգին /ինչպես Սևակի մոտ/, այլ նրանց Սերն է համակում շրջապատին, ամբողջ բնությանը. «Եղեգնութին մեջ քամին մեղմ նվազեց // Ծլարձակման բյուր օրենքները Գարնան» /Սևակի մոտ/՝ «Գարնան առաջին ցայգն իր Սերն անհուն // Նոր օրենքի մը նման ահագին // Լուր կը մոնչեր ահաբեկ գույգին», նունուֆարի կտրված ցողունները ջրի մեջ փթիթներ են արձակում, լճի վրա կարապներն էլ թուխս են նստում՝ համակված սիրող գույգի պատկերով:

Բայց ահա հետաքրքիր աղերսներ են հուշում Վարուժանի «Առաջին մեղքը» և Սևակի «Հովհիվը» 1910 թվակիր /Երկար տասնամյակներ անտիպ մնացած/ բանաստեղծությունները: Վարուժանի բանաստեղծության մեջ, «հեթանոսականի» իր ընկալումով, մարդկային բնական զգացումները արթնանում են բնության ծայների կանչերից, որ դյութում ու մղում են նաև սիրով մերձեցումի: Դեռատի, արդեն արբունքի հասած հովվուիին, «Զորերուն մեջ, սարերուն վրա» «ամեն օր իր կապույտ աչքերով» ուլն էր արածեցնում: /Պատկերը հուշում է վաղնջական, հեթանոս ժամանակների աստվածաշնչյան վկայություն: «Երգ Երգոցի» մեջ կարդում ենք. «Երե չգիտես, ովք գեղեցիկդ կանանց մեջ, թե որտեղ կգտնես ինձ, // Գնա հոտերի ոտնահետքերով և քո ովերն արածեցրու հովհիվների վրանների մոտ»/: Ու մի իրիկուն հովիտից մի ձայն, երգի պես «աղվոր ու դյութիչ», կանչում է նրան՝ իջնել աղբյուրի

մոտ և իր ծերմակ ուղը իրեն զոհաբերել: Համոզում է, թե ինքը լեռներու ոգին է, տիրում է ամեն կախարդանքի, թե իր գրկի մեջ շուշանները վարդ են դառնում, «կույսերն ալ թագուհի», լսում է անընդհատ կրկնվող կանչը, և այդ ձայնը «կարծես իր արյունին մեջ կը խոսեր»: Ապա դյութված՝ քշում է ուղը ծերմակ «դեպի հովիտն հեշտաբույր», և «արու Ոգուն, որ զգիսիչ բույրերով» ասես գրկել է իրեն, զոհաբերում է իր ծերմակ ուղը /«ի՞նչ արբշիո էր պահն ու որքա՞ն անույշ».../, «Դրավ դանակն անբիծ վզին և արբշիո // Երգը շուրբին՝ զայն հեշտանքով մը զոհեց...»/: Իրեն թվում էր, թե իր ուղը էլի պիտի ողջ մնա, դաշտերը պիտի լցվեն նոր ծաղիկներով ու թիթեռնիկներով, բայց այդպես չեղավ, անցավ զոհաբերումի «արբշիո պահը», միտքը զուլավեց ու աղջիկը «մեռած ուղին քով կանգնած՝ լացա՞վ, լացավ», «հրապուրված կույսն իր անուշ մեղքը լացավ»: Ծերմակ աղջիկ, ծերմակ ուլ՝ կապույտ աչքերով /մաքրության, անբիծության, անարատության, կուտության խորհրդանիշներ/, որի զոհաբերումը բնության կանչով ու արյան մղումով է, իսկ զոհաբերումից հետո՝ խաղաղ մտածումով՝ առաջին մեղքի /արդյո՞ք մեղքի/ զգացում, չէ՞ որ «Հրապուրված կույսն իր անուշ Մեղքը լացավ» տողով է ավարտվում բանաստեղծությունը:

Ի դեպ, Վարուժանի արխիվում պահվող ինքնագրերից մեկում այս բանաստեղծությունը վերնագրված է՝ «Խորոպաբեկը», որ նշանակում է խորոպը /կուտաթաղանթը, կուտության կնիքը/ բեկված /շեղված, կորցրած, գրկված/ կույսը: «Առաջին մեղքը» խորագիրը, անշուշտ, ավելի ճիշտ է բնութագրում բանաստեղծության էությունը, որ սիրո, մարմնական մղումի, բնության ոգու զգացողության, զոհաբերման ու զդժման, ի վերջո «անուշ մեղքի» /տարբերակներից մեկում՝ քաղցր մեղքի/ մասին է, ոչ թե կոպիտ ու հասարակ խորոպաբեկի: Անշուշտ, մաքուր ու պահին համահունչ է «ծերմակ աղջիկ», «ծերմակ ուլ» խորհրդանշական ու բանաստեղծական պատկերը:

Սևակի «Հովհանք» բանաստեղծության հերոսը ոչ թե դեռատի հովվուիին է, որ ամեն օր արածեցնում էր իր ծերմակ ուզը ու «բորիկ ոտքերով», դարձյալ «ցուազը ծեռքին» /ինչպես հովվուիին/, «ծերմակ, ծերմակ ուզ մը ուսին», ու «սիրտն իր ծեռքի մեջ բռնած» գնում է իր սերը փնտրելու: Գնում է՝ մոռացած իր «ոչխարներին ցանուցիր»: /Այդպես Վարուժանի «Գրգանքի» հովվուիին իր սիրած տղայի հետ հանդիպելու համար «լքեց անթիվ իր գառնուկներն մոլորուն»/: Անհայտ ու անորոշ է սիրո էակը ու նա՝ «գնաց, գնաց... հազար գիշեր, հազար օր», «բռպիկ ոտքերն արյունած // Լացը կրծքին տակ պահած, // Գնաց, գնաց...»: Ուղղությունը՝ «դեպի բլուրն հեռավոր», «ուրկե կը ծներ հովվին լուսնակը աղվոր» /Վարուժանի հովվուինու «Ետևեն կը քալեր» «լուսնկան տարփատենչ»/: Երկար է ծանապարհը, համառ ուխտագնաց փոքրիկ հովիվը հասնում է «լուսնին բլուրը», տեսնում է ծեր Աստծուն.

Հիվանդ եմ, Տեր, սիրտս հիվանդ է,- ըսավ.
Չունի՞ս սիրո մի դարման... -
Սակայն տղու մը նման
Ծերուկ աստվածը լացավ...

Պատանու նկատմամբ կարեկցությունի՞ց, թե՝ անզորությունից: Փոքրիկ հովիվը ուխտի էր եկել և որպես զոհ՝ «մորթեց իր ուզը ծերմակ», ինչպես Վարուժանի հովվուիին, բայց սա «ծերմակ աղջկա ծերմակ ուլի» զոհաբերումը չէ: Փոքրիկ հովվի զոհաբերումը՝ դարձյալ «ծերմակ ուլ», մաքուր, անթիծ, իր երազած Սերը գտնելու համար է: Բայց երբ մորթեց՝ «իր վերքեն ծնավ արյան ո՛ղն համակ»: Ապա՝

Հովիվ, որ ուղխը խմեց,
Մեռավ... բայց սերը մեծ
Աշխարհն ամբողջ ողողեց...

Աշխարհում մեծ, իսկական սիրո ծնունդը եղավ: Ու ոչ միայն խորհրդանշական ճերմակ ուլի, այլև փոքրիկ հովվի՝ առաջին սիրահարի գոհաբերումով:

Չորայր Խալափյանը իր վեպում Արա Գեղեցիկի ու Շամիրամի Սիրո առասպելը մեկնաբանում է այս հայեցակետով. Շամիրամի՝ Արայի նկատմամբ սերը համարում է սկիզբ՝ մարմնական սիրուց անցում հոգեկից սիրուն»: «Այդ պահից սկսվեց սիրո դարաշրջանը պատմության մեջ, քանի որ մինչև այդ հայտնի էր մարմնական վայելքը միայն», - գրում է Խալափյանը: Միֆական Շամիրամից անցումը իրական, թագուիի Շամիրամին, «շամբշոտաշուրթ» Շամիրամից Արային սրտով տենչացող Շամիրամ անցումի մեկնությունն է:

Վարուժանի հովվուիկին բնության՝ մարմնի կանչով է մղվում սիրո վայելքին, և դա նրա «առաջին մեղքն է»՝ թեև՝ «անուշ»: Նա գնում է «հովիտն հեշտաբույր», վերից հսկում է նրան «լուսնակն տարփատենչ», Սևակի հովվիը գնում է «կապույտ բլուրը Լուսին...հեռավոր /անհաս/ բլուրը՝ սկիզբը իր լուսնակի ելման ու իր «լուսնակը աղվոր է»: Նրա ծանապարհը երկար է /«հազար գիշեր ու հազար օր երբ գնաց»/ ու դժվար /«բորիկ ոտքերն արյունած»/ և վերջապես գտած իր Աստծուն խնդրանքն է՝ «սիրտս հիվանդ է... Զունի՞ն սիրո մի դարման»: Սրտի հիվանդության համար սիրո բալասան, դեղ ու դարման է խնդրում:

Չոհն ընդունելի է, ծնվում է Սերը և այնքան Մեծ, որ «աշխարհն ամբողջ ողողեց...»:

Այդ մեծ սիրով էր լցված նաև Ռուբեն Սևակը, այդ սիրով է լեցուն նրա «Սիրո գիրքը», նրա նամակները սիրած կնոջը՝ Յաննի Ապալիխն, նրա խոստովանությունը իրեն սիրահարված փոքրիկ աղջկան.

Ինչո՞ւ, ինչո՞ւ զիս սիրեցիր.

Փոքրիկ աղջիկ քեզի մեղք էր...

... Քեզի փոքրիկ սեր մը պետք էր,
Դուն Սե՞ր-Աստվածը սիրեցիր:

Վարուժանի ու Սևակի ստեղծագործության ուշադիր ընթերցումը մտածումի ու պատկերի շատ աղերսներ կարող է հուշել, որ հաստատում են հոգեկցությունը երկու գրեթե տարեկից բանաստեղծի՝ միասին նահատակված և թաղված կողք կողքի՝ անանուն, անհետք մի վայրում։ Բայց հառնած, դարձյալ կողք կողքի, որպես պոետական երկու պայծառ անուն մեր պոեզիայի միշտ կենդանի անունների կողքին։

ՑԵՂԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՈՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Նրա բանաստեղծությունը իր եղերական մահից հետո, գոնե խորհրդահայ գրականագիտության կողմից շուրջ կես դար մոռացության մատնվեց: Պատճառների մասին խոսելն ավելորդ է: Դրանք հասկանալի են: Բայց ծշմարիտ արժեքները չեն մոռացվում, քանզի հավերժ են: Եվ արդեն անցյալ դարի 50-ական թվականներից, երբ երկու նվիրյալներ՝ Ս. Տարոնցին և Վ. Նորենցը, հրատարակեցին նրա բանաստեղծությունների ոչ ամբողջական ժողովածուն, գրական շրջանակներում ծավալվեց աշխույժ ու շահագրգիռ գրույց այդ զարմանալի ու առեղծվածային թվացող բանաստեղծի շուրջ: Նախ Գ. Հատիտյանը (1962), ապա նաև Էդ. Ջրբաշյանը (1964) համդես եկան հետազոտություններով: Խոկ արդեն 1972-ին ծավալուն ուսումնասիրություն գրեց Վլ. Կիրակոսյանը: Ակսվեց Ռ. Սևակի մեծ վերադարձը, որ շարունակվում է առ այսօր: Այսօր արդեն վերը նշվածներին լրացնելու են եկել Եղ. Պետրոսյանի, Հր. Թամրազյանի, Ստ. և Ալ. Թոփչյանների, ուրիշների հետազոտությունները, որ իրավունք են տալիս խոսելու սևակագիտության մասին: Մասնավորապես, դժվար է գերազնահատել գրականագետ Ա. Թոփչյանի վիթխարի ներդրումը այս խնդրում: Քառորդ դարից ավելի տևող նրա անխոնց աշխատանքի արդյունքում ոչ միայն հավաքվեցին, ի մի բերվեցին մամուլի էջերում և արխիվային գգրոցներում սփոված սևակյան գրչի ստեղծվածքները, այլև գրվեց «Եվ անզամ մահից հետո» հրաշալի վեպը, որ գալիս է ամբողջացնելու այս ասպետականորեն անկրկնելի ազնիվ մտավորականի դիմանկարը: Բանաստեղծի հայտնությունը հիմա էլ շարունակվում է:

Անշուշտ, Ռ. Սևակը չուներ իր ժամանակակցի ու մերձավոր ընկերոջ՝ Սիամանթոյի «անսանձ» երևակայությունը, նույնքան

մտերիմ և հարազատ Դ. Վարուժանի բուռն պաթոսն ու ներքին վիթխարի էներգիան, Մ. Մեծարենցի երգի անխառն լիրիզմը: Դա այդպես է: Սակայն անուրանայի ծշմարտություն է և այն, որ հայ «Նորագույն երգի մեջ հատկապես երեքը՝ Դ. Վարուժանը, Ռ. Սևակը և եղ. Չարենցը, չէին ծանաչում ժամանակ և տարածություն, ընդունակ էին նոր օրերին մոտեցնելու դարերը, մարմին տալու հինավորց առեղջվածներին և նույնիսկ գալիքին»¹: Ավելացնենք, նրա երգի մեջ նույր քնարական շունչը հաճախ է ներդաշնակվում քաղաքացիական հզոր կրքի հետ, որով էլ նա տարբերվում է ժամանակակիցներից՝ ստեղծելով իր սեփական, ուրույն աշխարհը:

«Ենց բանաստեղծական ուրույն խառնվածքն ու մտածողության, նաև արտահայտչածների առանձնահատկություններն էլ նպաստեցին, որ ժամանակակիցները անմիջապես նկատեն բարձրացող տաղանդին: Նրա մուտքը գրեթե նույնքան «շռնդալից»

ու հաղթական» էր, ինչքան ժամանակակիցների՝ Մ. Մեծարենցի և Վ. Տերյանի գրական հայտնի հաղթարշավը: Միայն այն տարբերությամբ, որ այս ծիրքառատ բանաստեղծի վերաբերմամբ չեղան կամ գրեթե չեղան մերժողական, հաճախ նաև ժխտողական այնպիսի արձագանքներ, ինչպիսիք նկատվեցին նախորդ երկուսի դեպքում: Այս առիթով ինքը՝ բանաստեղծն էլ զարմանքով խոստովանում է. «Չեմ գիտեր, թե հոդ ինչպես է: Գալով այստեղին,- 1907-ի հունիսի 20-ին Ֆրանսիայից Ենովք Արմենին է գրում 22-ամյա սկսնակ բանաստեղծը,- շվարած եմ այդ խանդակառ ընդունելության համար, զոր կ'ընեն հոս իմ քերթվածներուս»²: Իսկ «խանդակառ ընդունելության» արժանացնողների մեջ կային բազմաթիվ մտավորականներ, գրական աշխարհի մարդիկ, որոնք զարմանալի ծշգրտությամբ բնութագրեցին ծիշտ ժամանակին հայտնված սկսնակ տա-

1 Հր. Թամրազյան, Հայ քնարերգուներ, Եր., 1996, էջ 319:

2 Ռ. Սևակ, Երկեր, Եր. 1985, էջ 413:

ղանդի աշխարհը, հասկացան ասելիքի թարմությունը, չնայած ասպարեզը, բարեբախտաբար, լցվում էր Դ. Վարուժանի, Սիամանթոյի, Մ. Մեծարենցի, Ինտրայի, արդեն նաև Վ. Թեքեյանի նոր ու թարմ բանաստեղծական մտածողությամբ: Ահա թե ինչու քիչ ավելի ուշ գրական շրջանակներում հայտնի ժիրայրը՝ Բարթող Չորյանը, Զմյուռնիայի «Արևելյան մամուլ»-ում Ո. Սևակի «գրական սկզբնավորությունը» «հոյակապ հայտնություն մը» համարելով՝ գրում էր. «Անիկա նորեկներու հատուկ գեղեցկությունը չուներ բնավ, այլ վարժ ասպետականորեն խրոխտ, ոսկեօնույլ դիմագծությունն էր գերազանցապես մարդկայնական ու խանդաղատեցուցիչ, հուզող ու առաջինող: Շատ մը մինչև իսկ կարող բանաստեղծներ տաժանակիր գրական նոպաներ ունեցած են իրենց սկսնակի օրերուն, քանի որ Սևակ անախորժ չարչրկանքի մը չ'ենթարկվեցավ: Ու ինչ պետք ասոր, երբ անիկա, կազմված, իր վերջին տիպը առած բանաստեղծն էր, կամ ծիշտ օժոյալ բանաստեղծն էր. աստվածներու այդ արվեստը իբր շնորհ ժառանգող բանաստեղծը (ընդգծումներն իմն են - Ս. Ս.), որ հարմար մեկ առիթով պիտի քոնկեր արևուն սիրակեզ կենսականութեամբ»¹: Նա Ո. Սևակին համարում է նաև «նորերու փառքը»:

Չնայած չափազանցության որոշ չափարաժնին՝ գրադատը խորքով հասկացել էր բանաստեղծական նորագյուտ աշխարհը և չէր սխալվում իր բնորոշումներում: Այս բանաստեղծը հետագայում պիտի դառնար և դարձավ հայոց բանաստեղծության փառքերից մեկը:

Ինչպես վերը նշվեց, Ո. Անակը Դ. Վարուժանի նման բազմաթեմա, աշխարհներ հայտնագործող բանաստեղծ էր: Սևակագիտությունը վաղուց է փաստել այդ, ինչպես և այն, որ բանաստեղծը ամբողջացրել էր արդեն իր չորս պոետական գրքերը՝ «Սիրո գիրքը», «Քառսը», «Կարմիր գիրքը», «Վերջին հայերը», ինչպես նաև արձակ եսսեների ժողովածուն՝ «Բժիշկին

1 Գրական թերթ, Եր., 2010 N 36(3044), 29 հոկտ., էջ 2

գիրքեն փրցված էջերը» , որոնցից միայն «Կարմիր գիրքն» է հրատարակվել նրա կենդանության օրոք: Դրանց բովանդակության հնարավոր ընդգրկումների մասին ևս գրականագիտությունն այսօր տարակարծիք չէ: «Վերջին հայերը» ծրագրված գրքի հայրենասիրական թեման չէր կարող շրջանցել XIX դարավերջի և XX դարասկզբի հայ կյանքի աղետավոր ընթացքը և ընդգրկել է: Եվ թեմայի արձարձումներում մնում է ինքնահատուկ՝ չկրկնելով ժամանակակիցներից և ոչ մեկին: Այսպես, եթե Սիամանթոն, իբրև տենդեցիոն գրող, նախ հնչեցնում էր հույսի ու վրեժի նվազներ («Դյուցազնորեն», «Հայորդիներ»-ի Ա և Բ շարքերը), և հետո միայն անցնում տառապանքի ու պայքարի գուգակցված նվազներին, (ի դեպ՝ նույն զարգացման ընթացքն է նաև Դ.Կարուժանի մոտ), ապա Ռ. Սևակի՝ ժամանակի հայ կյանքի եղերական պատկերները միշտ գուգակցված են վրեժի ու պայքարի գաղափարակոչերով, ինչը պայմանավորված էր նախ և առաջ նրա գեղագիտական և քաղաքացիական ըմբռնումներով: 1909-ին Կիլիկյան ջարդերի առթիվ գրած «Ուսանողի նամակներում» Ռ. Սևակը ինքնարտահայտվում է իր մտածումներով, մայիսի 27-ին գրում է. «Երեկ խմբագրատան մը առջև խոնված բազմություն մը դեպի հոն հրավիրեց քայլերս: Լուսատիպ նոր հասած նկարներ էին. հազարավոր թշվառներ ծովի ափին, անկողիններ եկեղեցիներու մեջ, ոտքեր, մարդու կտորներ, որովայնը պատռված և դուրս հանված երեխան մը իր մորը դիակին վրա: Միջերկրական ծովը դիակներով հարուստ, գետինները պառկած ծերութիններ, որբուիիններ, թշվառներ... Հայեր, Հայեր, Հայեր...»¹: Այսպես, ու թեև բանաստեղծը հեռու էր ջարդերից, դրանց ականատեսը չէր, բայց անտեղյակ չէր ազդեցիկ իրադարձություններից, իսկ բանաստեղծական միտքն ու օժտվածությունը, նաև երևակայությունը օգնում էին դրանք տեսնելու ընդգրկումների ամբողջ խորքով ու լայնքով.

1 Ռ. Սևակ, Երկեր, Եր., 1985, էջ 372: Այսուհետևսույն հրատարակությունից կատարվող մեջբերումների կողքին՝ տեքստում կգրվի միայն էջը:

անգամ ավելի իրական, քան շատ ականատեսներ: Զարհուրանքի այդ պատկերները Ռ. Սևակի մոտ ցավի ու տառապանքի զգացողությունից զատ ծնում են նաև զայրույթի, ընդվզման ու ափսոսանքի զգացում. «Աստված էջերը ստեղծեց անարգվելու համար, Հայերը՝ ջարդվելու... Թուրքիո մեջ բեժի՞ն պիտի փոխվի, Հայերու ջա'րդ.. Սուլթանը պիտի գահակալե, Հայերու ջա'րդ. Ծերիա՞թ պիտի հաստատվի, Հայերու ջա'րդ: Բայց այս բոլորը այնքան տարօրինակ չեն մեզի համար, որքան այն հուսահատեցուցիչ «խելոցքությունը, որով հայերը կ'ողջունեն այս ջարդերը (ընդգծումը իմն է- Ս.Ս.): Ե՞րբ այս ժողովուրդը պիտի սորվի մարդկորեն կատղիլ...»:

«Ու իրավ. Մարդկորեն կատղիլ, այս տարրական առաքինությունը կթվի իսպառ հեռացած ըլլալ հայու սրտեն» (ընդգծումները - Ռ. Սևակի) (էջ 372):

Նա նախանշում է նաև հայ մամուլի անելիքները, որ նաև սեփական գրականության հավատու հանգանակն է, Կրեդոն: «Հայ Մամուլը Սուգին սևովը պետք է պատվեր կամ Արյունի կարմիրովը պոռթեկալ և կամ - եթե չեր կրնար ամեն բան ըսել - լոե՞ր...», - գրում է բանաստեղծը և ավելացնում. «Դամբանականները պետք է կարդալ դամբանական խմբագրողներու գլխուն: Ժողովուրդները ինքնապահպանության, ցեղին շարունակության, ՊԱՅՔԱՐԻՆ բնազդը ունին: Մամուլը այսպիսի արհավորակի շրջաններու մեջ պետք չէ որ հոռետեսության, սուգի, անդարմանելի» (ընդգծումը Ռ. Սևակի) ցավի մշուշի մը մեջ խավարե ժողովուրդին այդ բնազդը: Fatalismeը չէ', որ պիտի փրկե ընկճած ցեղերը... » (էջ 373):

Սա էր նրա գրական մտածողությունն ու սկզբունքը, նաև այս մոտեցմամբ էր նա 20-րդ դարասկզբին հյուսում հայենի երկրի եղերական բախտի ու փրկության երգը՝ հաճախ զարմացնելով հանձարին բնորոշ մտքի վիթխարի թռիչքներով: Ահա, օրինակ, այնքան հայտնի ու տարածված «Հայաստանին» բյուրեղյա ընդհանրացումը.

Ո՞վ կուլա այսպես խշտյակիս շեմին:
-Քո՞ւյր, դարիբն է, բաց...
Կմա՞խք մը կանցնի դուրսեն լալագին:
-Սովն է, դուռըդ բաց...
Տապա՞րն է ջախջախ դըռանս կուրծքին
-Զարդն է, դուռըդ բաց...

Գրականագիտության մեջ նկատվել են այս բանաստեղծության ընդհանրությունները ֆրանսիացի բանաստեղծ Շառլ Գերենի ստեղծագործության հետ¹: Ռ. Սևակի «Անտիպ էջեր» գրքույկում Գերենի բանաստեղծությունը Ռ. Սևակի թարգմանությամբ գետեղել է հենց կազմողը՝ Ալ. Թոփչյանը: Ասել է՝ փաստը չի թաքցվում, չի ուրացվում: Ավելին, այստեղ առկա է ոչ թե յուրացման, այլ ստեղծագործական մտքի զարգացման փաստը: Եվ ծիշտ է նկատվել, որ «... Սևակը ահոելի ցավ է հաղորդում տողերին, որոնք հյուսվել են հայկական ողբերգության ընդհանուր տրամադրություններին՝ չափազանց տպավորիչ, ներքին ինքնուրույն շեշտերով»²: Ասվածն ակնհայտ է դառնում հպանցիկ համեմատության դեպքում անգամ.

Ո՞վ կուլա դըրանս՝ մայրամուտի՞ն,
Մերն է, դուռդ բաց:
Ո՞վ այս տժգույն դեմն իմ լուսամուտին,
փառքն է, դուռըդ բաց:
Կզարնեն, ա՞յս, կզարնեն ուժգին,

Մահն է, դուռըդ բաց:
Ինչպես նկատում ենք, ձևային ընդհանրություններով կապված բանաստեղծությունները էապես տարբեր են բովանդակություններում:

1 Հր. Թամրազյան, Հայ քնարերգություններ, գիրք Ա, Եր. 1996, էջ 322:

2 Նույն տեղը:

կային դրսնորումներում: Շառլ Գերենը երգում է սիրո, փառքի ու նրա անցողիկության, կյանքի անցողիկության ու մահվան անխուսափելիության, հավերժության մասին: Այսինքն՝ զուտ անճնական- անհատական ապրումների մասին: Մինչդեռ Ռ. Սևակը խտացնում է մի ողջ ժողովրդի ողբերգական դարավոր պատմությունը՝ կոնկրետացված ժամանակի համեմատաբար փոքր՝ 20-րդ դարասկզբի շրջանակներում՝ այնքան իրական ու շոշափելի, ապրված:

Իսկ դա, անշուշտ, պայմանավորված է արդեն ձևավորված ու վերջնականապես կերպավորված բանաստեղծական հավատամքով. «Ես ավելի իրապաշտ եմ,- գրում է նա տակավին 1907-ի փետրվարին,- ամեն բանե առաջ իրականությունը զիս կգրավե, ամե՞ն իրականութենե վեր մե՛կ իրականություն մը կճանչնամ ես՝ ապրված, ցգացված կյանքը և ոչ երևակայված կյանքը» (ընդգծումը Ռ. Սևակի) (էջ 395):

Ահա այս տեսանկյունով են ստեղծվել նրա քաղաքացիական բանաստեղծության լավագույն երկերը՝ «Զարդին խենթը», «Թրքուիին», «Զանգակնե՛ր, զանգակնե՛րը», «Կիլիկյան երգերը», «Ցավոն», «Վերջին հայերը», ուրիշները: Եվ սրանցում Ռ. Սևակը չի գնում ժամանակակիցների՝ Սիամանթոյի և Դ. Վարուժանի ուղիով: Վերջիններս, բորբոքելու համար ժողովրդական վրեժի և ցասման տրամադրությունները, ներկայացնում էին ջարդերի դաժան սոսկանքը արյունոտ պատկերների շարքով, իսկ Սևակը շրջանցում է դրանք կամ, ավելի ծիշտ շատ քիչ տեղ է տալիս դրանց: Այս դեպքում դժվար է չհամաձայնել գրականագետ Ստ. Թոփչյանի հետ, որն իրավացիորեն նկատում է. «Զարդը պատկերելիս բնավ հարկ չկար դիմել երևակայության ու հորինվածքի: Ավելին, սարսափելի ծշմարտությունը բացահայտելու համար նա անդրադարձնում է ոչ այնքան ջարդի պատկերները, որքան դրանց հոգեբանական արձագանքը, առաջացրած ապրումները, մտածությունները, ստեղծում է դրանց բանաստեղծական համարժեքը՝ դիմելով

թե տիեզերական անսահմանությանը, թե անցյալի մեծությանը, թե ազգային ոգու նշխարներին ու ազգային արժեքներին, առասպելներին ու իրադարձություններին, սիմվոլներին ու իդեալներին» (էջ 17):

Ասվածի անուրանալի վկայություններից է «Զանգակներ, զանգակներ» քերթվածը: Այն թեև գրվել է 1909-ի Աղանայի ջարդերի առիթով, սակայն կարծում են հղացքը եղել է ավելի վաղ՝ 1905-ին: Այդ մտքին է մղում բանաստեղծության կառուցվածքը: Երբ Սևակը Շվեյցարիա հասավ, ոչ վաղ անցյալում 1905-ի մայիսի 9-ին, ամբողջ երկրով մեկ նշվել էր Շիլերի մահվան 100-ամյակը: Ի պատիվ նրա՝ գրանիտե պատվանդան էր կառուցվել այն զանգի համար, որի շուրջին փորագրված խոսքերը՝ «Ուրամ մեռելոց, Կոչեմ ապրողաց, Բեկանեմ շանթեր» բնաբան էին դարձել նրա հայտնի «Զանգակի երգը» բանաստեղծության համար: Մթնոլորտը հազեցած էր շիլերյան երգով, և Ռ. Սևակը կարող էր և ազդված լինել: <ամենայն դեպս նրա բանաստեղծության կառուցվածքը ինչ-որ չափով հիշեցնում է Շիլերի բանաստեղծության բնաբանը: Առաջին տները կարծես բյուր մեռելոց ողբ է.

*Զանգակներ, բարի՝ բարի՝ զանգակներ
Ի՞նչ բան կասեցուց ծեր գումկան լեզուն
- Այն որովհետև տեսաք ծեր բարձրեն
Հավատավորներ հազարով, բյուրով,
Ինկա՛ծ հեթանոս տապարով, բիրով,
Զեր ոտքերուն տակ, երկյուղածորեն...*

*Ու ծեր գմեթեն դիտեցիք անձա՛յն,
Թե ինչպես խնկոտ տաճարներու մեջ,
Ո՛րբ, կի՛ն, ծերունի, բոցերով անշեց.
Իրենց Աստուծո գահին գոհվեցան:*

Առաջին հինգ քառատողը տոգորված են այս տրամադրությամբ, հաջորդող հինգ քառատողերը հիշեցնում են ապրողաց ուղղված կոչ, հորդոր.

Ու կ'ինա այն որ կծնկե վախով
Զի թուրն ավելի արդար է խաչեն,
Զի կյանքն անոնց է միայն, որ քաջ են,
Անոնց որ կ'ապրին ուրիշի մահով:

Որովհետև դեռ հեռո՛ւ է օրն այն,
Երբ գայլ ու գառնուկ սիրո՛վ կ'արածին. -
Թե ապրիլ կ'ուզե գառնը նորածին՝
Պետք է իր ակռան սրե լոելայն...

Բանաստեղծությունն ավարտվում է զայրույթի շիկացած տրամադրությամբ, որ շանթեր բեկանելու արտահայտություն է՝ «մարդկորեն կատղելու» մղող, ավելի ծիշտ այդ կատաղության ծնունդն ավետող.

Ինչպե՞ս կ'ուզեի ծերին պարանեն
Լախվիլ ու ցնցել երկա՛թ բազուկով.
Անո՞նք որ ինկան բյուրո՛վ, քովե քով
Չեր դողանջին հետ՝ լալու պետք ունին. -

Հոգիիս հազա՞ր խուլ զանգակներով,
Գոռացեք, զանգե՞ր ու կատաղորեն
Գահավիժեցե՞ք ծեր երկաթ թառեն
Ուրկե միայն լալ զիտցաք դարերով.-

Օ՛, դողանջեցե՞ք, Աստվածն է մեռեր...

Կարելի է ասել, որ Սևակի ամբողջ հայրենասիրական քնա-

ող զուգորդված է այս տրամադրություններով։ Ու թեև իսկապես նրա պոեզիայում քիչ են ջարդի եղերական պատկերները, սակայն դրանք փոխլրացվում են դրանց զգացողականությունից ծնված ծշմարիտ ապրումներով։ Նրա քնարական հերոսը ամբողջ էությամբ, սրտի յուրաքանչյուր նյարդով ապրում է գեհենական իրականության ամբողջ զարհուրանքը, և այնքան իրական ու տեսանելի, որ ընթերցողն իրեն ակամայից զգում է արյունոտ իրադարձությունների ծիշտ էպիկենտրոնում։ Եվ այնպես է թվում, թե մահվան ու կործանումի պատկերները սպառնում են վերածվել կեցության հավերժական կերպի։ Ահա մի հատված «Վերջին հայերը» քերպվածից։

Հարս ունինք, մեզի հարսնոր չիկա. -
Սուգ ունինք, մեզի սգավոր չիկա.-
Ո՞ր մեղքին համար, ո՞վ է անիծեր
Հինգ հազար տարվան այս խեղճազգը ծեր...
Չո՞րս միլիոնին մեկ ապաստան չիկա,
Յարիծան, հայ կա, Հայություն չիկա...
Կ'երգեն Հայերը...
Թագն առին, դագաղ մը տվին հայուն.
Մեր փառքն անցավոր, մեր Մահն է կայուն...»

Սիամանթոյի նման Սևակն էլ, ծիշտ է ոչ հաճախ, բայց երբեմն հայտնվում է միստիկ, ծնշող ապրումների մեջ, արյան ու մահվան մզգավանջը այս բանաստեղծի հոգին էլ երբեմն տանում է «մահերու դանթեական ծանապարհով», և, ի տարբերություն Սիամանթոյի, արյունոտ պատկերների փոխարեն դաժան սոսկանքի զգացումները կուտակվում ու ծնշում են միտքը, հոգին։ Նրանք իրական, ծշմարիտ պատկերների չափ դառնում են տեսանելի։ Ահա այդպիսի մի զգայական պատկեր՝ «Ահազանգերը»։

Արյունի գիծե՞ր, պատկերնե՞ր, հուշե՞ր. -
Նորեն այս գիշեր,- տաճանքի գիշեր,-
Հիվանդ հոգիիս պատերուն մեջեն
Ղողանջի խավար երգեր կինչեն:

Ցավի ու կորստի, մահվան տագնապներից ծնված զգացումները Ո. Սևակի մոտ շիկանում են այնքան, որ երբեմն չեն զիջում Սիամանթոյի նույնատիպ տրամադրություններին, հաճախ թվում է, թե զգացումները վերածվում են իրական պատկերների.

Դիածածկ կարմի՞ր, կարմի՞ր դաշտերեն,
Ղուզ չե՞ք իմանար դավաճանորե՞ն
Մեզմով հափրացած շան ոհմակներու
Վերջալույսին դեմ ոռնումն ահարկու

Տիեզերքը բռնկվում է մահվան տագնապներով, մահվան տեսլիները խափանում են և իրականություն, և միտք ու բանականություն.

Կարմիր կտեսնեն աչքերս նորեն...
Վերջին հառաջներ կուրծքերու խորեն.
Մեռե՞լ, հոգևա՛րք, կույտ կույտ, քով քովի
Կոկոացող սև խումբեր ագռավի...

Իբրև հայ կյանքի Գողգոթայի իրական ու ապրված պատկեր՝ այս բանաստեղծությունը գալիս է լրացնելու դարասկզբին մեր գրականության մեջ այնքան տարածված մահվան տեսլիների շարքը: Նման տրամադրություններից են հյուսված նաև «Հայ ծնունդ», «Նահապետը», «Էրենց պատմությունը», մի շարք ուրիշ բանաստեղծություններ: 20-րդ դարասկզբի իր գրչակից Եղբայրների նման ու նրանց կողքին Ո. Սևակը ևս դառնում է

Հայոց Գողգոթայի մեծ տարեգիրը, բայց ոչ Եղերերգուն։ Նա հրաշալի գիտեր ցեղային ոգու կենսական ուժերի ներքին խորհուրդը, և բացահայտում է այն սերունդների համար։

Ախուրյանի քով՝ քար էր ավերակ
Քաղաք մը, աշխարհ մը գտա Ճերմակ
Զայն մ'երգեց՝ «Մի՛ լար փառքերու վրա սին,
Նայե տապանիս մյուս երեսին.
Ազգերը կնքեր են վրան՝ «Մա՛հ հայուն»
Բայց մյուս երեսին վրա «Անմահություն»
Գրեր են հայերը...»

ՊԱՐՏՅԻ ԵՎ ՊԱՏՎԻ ԱՍՊԵՏԸ

1945 թ. Նյուրնբերգյան դատավարության մեղադրյալների մեջ էր նաև Մորավիայի և Բոհեմիայի գառլեյտեր, չեխոսլովակյան Լիոնց գյուղի բնաջնջման հիմնական մեղավոր՝ բարոն Կոնստանտին ֆոն Նոյրաթը:

Ատյանում ընթերցված մեղադրանքների ցուցակը միայն սրանով չէր ավարտվում, այնտեղ բազմաթիվ ուրիշ ոճիներ էին թվարկվում: Այնուհանդերձ ցուցակը լրիվ չէր, այնտեղ չկային Առաջին համաշխարհային պատերազմի, ընթացքուն գործված նրա հանցանքները և հատկապես դրանցից մեկը, որն ուղղակիորեն առնչվում էր Ռուբեն Սևակի ծակատագրին:

Կապույտ արյուն ունեցող այս ոճրագործը Հիտլերի մտերիմ և հավատարիմ համախոհներից մեկն էր: 1915-ին, երբ Կայզերական Գերմանիայի հյուպատոսն էր Կոստանդնուպոլսում, բանաստեղծի ծակատագիրը բառացիորեն նրա ձեռքին էր, և կարող էր նրան փրկել ստույգ մահից, բայց գիտակցված և հանցավոր քաշքանչներով ուշացրեց իր միջնորդությունը իրենց խամաճիկների՝ թուրք իշխանությունների առջև:

Կայզերական վարչապետին հասցեագրված իր գեկուցագրում ֆոն Նոյրաթը գրում էր. «Ռուբեն Սևակը համարվում է այն մտավորականներից մեկը, որը զանգվածների վրա մեծ ազդեցություն ունի, և դա վախեցնում է իշխանություններին»:

Ազնվական դիվանագետը գրեթե բառացիորեն կրկնում էր թուրք շովինիստ մտավորական Հալիդե Էդիայի խոսքերը՝ ասված տիկին Յաննի Սևակին. «Դոկտոր Սևակը մեծ ազդեցություն ունի հայ ժողովրդի վրա. իր խոսքերով, իր գրություններով կարող է հայ ժողովրդին ոտքի հանել: Սա է նրա հանցանքը»:

Այս առումով Երիտթուրքերի կառավարությունն իսկապես լուրջ Երկյուղներ կարող էր ունենալ Երեսուն տարին նոր բոլորած բանաստեղծ Ռուբեն Սևակից կամ դոկտոր Ռուբեն Չիլին-կիրյանից, որն ընդամենը մեկ տարի էր, ինչ Լոզանից ժամանել էր Կ. Պոլիս և կարծ ժամանակում դարձել այն մտավորական-ներից մեկը, որի հանդեպ մեծ հավատ էր տածում ժողովուրդը: Դրա գաղտնիքը, թերևս, նրա ստեղծագործության և մարդկային նկարագրի զարմանալի միասմության մեջ էր, երբ բանաստեղծը, իր իսկ խոսքերով ասված, «կ'ապրի մեռնելով, կը մեռնի անմահ»: Ժամանակակիցներից շատերի վկայություններն են պահպանվել նրա՝ մտավորականի և մարդու հազվագյուտ հմայքների մասին: Նշանավոր Թեոդիկը, «Ամենուն Տարեցուց»-ի հոչակավոր խմբագիրը, այսպես է բնորոշել Ռ. Սևակին. «Արենա իմաստության շիթը դրած է անոր ուղեղին մեջ, Եսկյուլապ բժշկության խորհուրդը, Հերմես ալ կայծը պերճախոսության»:

Սևակի կյանքը և ստեղծագործությունը բարոյականի և գեղեցիկի բացառիկ համերաշխության օրինակ են: Նա մաքսիմալիստ էր ամեն ինչում: Մանրամասն ծանոթանալով նրա կենսագրությանը՝ զարմանում ես, թե ինչպես է կարողացել դժվարին ժամանակներում կատարելապես մաքուր պահել և իր խիղճը, և իր գրիչը որևէ կոմպրոմիսից:

Փայլուն ավարտելով Նշանավոր Պերպերյան վարժարանը, 1905թ.² քան տարեկանում, մեկնում է Լոզան՝ տեղի համալսարանում բժշկություն ուսանելու: Իր ուշիմությամբ, ջանասիրությամբ և ակնառու ծիրճերով անմիջապես գրավում է դասախոսների ուշադրությունը: Մի քանի տարի շարունակ համարվում է համալսարանի առաջին ուսանողը, նրան մեծ ապագա են խոստանում բժշկության ասպարեզում: Սակայն զուգահեռ ուրիշ տաղանդներ են զարգանում և բացահայտվում:

Եվրոպայի սրտում, քաներորդ դարասկզբի անկումային գեղագիտության համատարած և իշխող մթնոլորտում ծնվում և հաստատվում է արվեստագետ, միաժամանակ քաղաքացետ

բանաստեղծը: Նրին քնարականությամբ համակված տողերի կողքին կարդում ենք քաղաքացիական հզոր շնչով հագեցած բանաստեղծություններ, որոնք ոչ միայն վկայում են հանձնառու, ժամանակի հրատապ խնդիրներով մտահոգ բանաստեղծի տաղանդը, այլև քաղաքագետ մտավորականի հեռատեսությունը:

Իր եղերական մահվանից մոտ վեց ամիս առաջ, կյանքի չորրորդ տասնամյակը նոր-նոր ոտք դրած, թե՛ հայկական, թե՛ համաշվրոպական առումով գրական բարձր արժեքներ ստեղծած գրողն այսպիսի տողեր էր շարադրում իր օրագրում. «Վաղվճե սկսյալ պիտի ջանամ ըլլալ այն, ինչ որ եմ. որովհետև այն, ինչ որ եմ ինձ կթվի, թե ավելի բարձր է, քան այն, ինչ որ կ'երևամ»:

Սա միայն կատարելության անդադար ծգտման, շինհի խստապահանջության արտահայտություն չէ, որ պարտադիր կերպով պետք է բնորոշ լինի ամեն մի իսկական տաղանդի: Մեջբերված տողերը, այս ամենով հանդերձ, Ռ. Սևակի պարագայում, նաև ուրիշ խորհուրդ են պարունակում, որը ծիշտ մեկնելով, գուցե բանալին գտնենք՝ առավել խորությամբ հասկանալու բանաստեղծի բացառիկ ճակատագիրը և ստեղծագործությունը:

Ուշադրություն դարձնենք նրա կենսագրության մի հետաքրքիր առանձնահատկությանը, նրա կյանքի առաջին տասնամյակը կարելի է բնորոշել ընդամենը մեկ բառով. թրախոս: Չի-լինկիրյանների ընտանիքում գործածական է եղել միայն թուրքերենը: <այրը` <ովկիաննես աղան, անգիր իմացել է ամբողջ «ժամագիրքը», «Նոր Կտակարանը», հայտառ թուրքերենով նամակներ է գրել որդուն, բայց հայերեն չի խոսել: Ինչպես փոքրիկ Սողոմոնի, այնպես էլ Ռուբենի համար հայերենը պիտի դառնար հայտնագործված, ձեռք բերված, վերադարձված լեզու, և գուցե պատահական չէր, որ հետագայում նրանք երկուսն այնքան մտերմացան, որ Կոմիտասը դարձավ Ռ. Սևակի դստեր՝ Շամիրամի կնքահայրը:

Երկրորդ տասնամյակն ամբողջությամբ նվիրված է եղել հայերենի վերանվածմանը: Ուսումնական երեք հաստատություն, անընդմեջ հաջորդել են իրար, որոնցից ամենակարևորը և վճռորոշն է եղել նշանավոր Պերպերյան վարժարանը: Ռ. Սևակն այստեղ, մի շարք առարկաների յուրացման հետ միաժամանակ կարողացավ հայագիտական բարձրակարգ կրթություն ստանալ: Ավելին, իր ուշիմությամբ, մտավոր իր արտակարգ կարողություններով դարձավ նշանավոր մանկավարժ Ռեթեռոս Պերպերյանի սիրելի աշակերտներից մեկը: Եվ, վերջապես, նրա խորհրդով, 1905 թ. հոկտեմբերին ապագա բանաստեղծը մեկնեց Շվեյցարիա՝ բժիշկ դառնալու:

Այս տասնամյակը ոչ միայն բնորոշվում է որպես վերադարձ ակունքներին, այլև, կարծում ենք, որ ազգային ինքնության վճռական, արագացված վերականգնումի ընթացքում, ապագա բանաստեղծի նկարագրում հիմնավորապես հաստատվել է ազգային արժանապատվության առավել քան սրացված գիտակցումը, հայ լինելու հպարտությունը և պատասխանատվությունը: Այս տասնամյակը նաև յուրատեսակ մրցում եղել ժամանակի հետ, քանի որ մեկ տարին դառնում էր Երկու: Միայն այս կերպ կարող էր ոչ միայն վերադարձնել թրջախոսության կորուսյալ տարիները, այլև առաջ անցնել ժամանակից: Եվ որպեսզի ծիշտ խնբագրեր անցյալը, նա պիտի ծիշտ հասկանար ներկան և կրահեր ապագան: Այս մրցումը ժամանակի հետ, ի վերջո, պիտի հանգեցներ ժամանակից առաջ անցնելուն, ինչը դարձավ նրա կարձատն կյանքի Երրորդ տասնամյակի, ամենաքննորոշ գիծը:

Ռ. Սևակը միակն էր ոչ միայն գրողների, այլև գուցե հայ քաղաքական գործիչների մեջ, որ 1909թ. Կիլիկյան աղետից հետո հստակ կանխատեսեց դեպքերի հետագա զարգացումը: Եվ զգայուն արվեստագետի նրա տագնապները վերաբերում էին ոչ միայն հայ, այլև Եվրոպական իրականությանը: Նրա բանաստեղծություններում, հոդվածներում և նամակներում կարող ենք գտնել բազմաթիվ տողեր, որոնք վկայում են, որ

մարգարեացած բանաստեղծը կանխատեսել է ոչ միայն Հայոց մեծ եղեռնը, այլև աշխարհակործան պատերազմը:

Այս կանխատեսումներին զուգահեռ, նրա տողերում հաճախակի հայտնվող մահվան ուրվականը միայն տուրք չէր իր ժամանակի գեղագիտությանը, այլև մարդկության, իր ժողովրդի, վերջապես իր գլխին կախված անխուսափելի մի սպառնալիք:

Հարց է ծագում, թե Ռ. Սևակն ինչու թողեց պատերազմի արհավիրքներից իեռու, չեզոք Ծվեյցարիան և Վերադարձավ ծննդավայր, երբ այդպիսի հստակությամբ տեսնում էր «Պոլսու մղձավանջը... Սողոմի մուխն ու Գոմորի բոցը», - ինչպես գրում էր իր նամակներից մեկում դեռևս 1911 թ.:

Հստակ կանխատեսելով այս ամենը՝ Սևակն շտապեց վերադառնալ, քանի որ նրա տեսակի մարդը, մտավորականը, նրա նման ազնվական բանաստեղծը չէր կարող չվերադառնալ, իր ժողովրդի հետ չկիսել իր իսկ կանխատեսած արհավիրքները: Նա ստեղծագործողի այն հազվագյուտ տեսակից էր, որոնք ոչ միայն խոսքով, այլև գործով են ապացուցում բանաստեղծի և ժողովրդի ճակատագրերի միասնությունը:

Ռ.Սևակը դեռևս 1914թ. նոյեմբերին կանչված էր օսմանյան բանակ, որպես զինվորական բժիշկ՝ կապիտանի աստիճանով: Ապրիլի 24-ի ծերրակալվածների մեջ նա չկար, նրան աքսորեցին ավելի ուշ: Ասում են՝ այս հանգամանքը չափազանց ծանր է տարել: Ժամանակակիցներից մեկը պատմում է, որ մայիսի սկզբներին հանդիպել է Սևակին, և նա ասել է. «Մեզի ամոք չէ, որ հոս ենք»:

Նրան աքսորեցին ավելի ուշ, նույն տարվա հունիսի վերջին: Աքսորավայրն էր Անկարայից հյուսիս ընկած Չանղըրը կոչված գյուղաքաղաքը, որտեղ Դանիել Վարուժանի և ուրիշ հայ մտավորականների հետ երկու ամիս պիտի անցկացներ, մինչև իր ողբերգական մահը:

...Պատմում են, որ Սևակը, ի թիվս այլ հիվանդների, բուժում և փաստորեն մահվան միջանցներից փրկում է տեղի երևելինե-

րից մեկի տասնութամյա աղջկան: Հաջողությամբ ապաքին-ված հիվանդը սիրահարվում է իր գեղեցկաղեմ փրկարարին: Հայրը յուրովի փորձում է շնորհակալություն հայտնել: «Դոկտոր, - ասում է նա: - Դուք բոլորդ դատապարտված եք, բոլորդ պիտի մեռնեք: Բայց եթե ուզես, քեզ կարող եմ փրկել: Եթե համաձայն ես մահմեղականություն ընդունել և աղջկաս հետ ամուսնանալ, ապա կազատեմ քեզ, եթե ոչ՝ փրկություն չունես»:

Սևակի ընկերները փորձում են համոզել, որ համաձայնի, հիշեցնում են նույնիսկ Վարդանանց առերես ուրացումը: Սակայն նա անդրդվելի է մնում: 1915 թ. օգոստոսի 26-ին Ռուբեն Սևակը և Դանիել Վարուժանը գազանաբար մորթվում են չերեների ծեղծով: Մարդասպանների մեջ էր նաև հայրն այն աղջկա, որին Սևակը փրկեց մահից:

Ո. Սևակի դիմանկարը թերի կլինի, եթե չխոսենք Յաննի Ապելի մասին, գերմանացի գնդապետի դուստր, որ հետագայում պիտի դառնար Յաննի Չիլինկիրյան-Սևակ: Երֆուրտցի այդ գեղեցիկ աղջիկը միայն սեր, միայն կին և միայն կյանքի ընկեր չէր նրա համար: Նա այդ բոլորն էր և դրանցից էլ վեր մի բան:

Դժվար է ասել, թե ինչպիսին կլիներ Սևակ բանաստեղծի և մարդու ճակատագիրն առանց Յաննի: Սերը նրանց այնպես էր միացրել, որ բանաստեղծն իր նամակներից մեկում գրում էր. «Ուրեմն, ես դուն եմ»: Մոտավորապես նույն միտքը Տերյանը պիտի արտահայտեր այսպես. «Ես էլ դու եմ, ես չկամ»:

Ամուսնու ծերբակալությունից անմիջապես հետո Յաննին շտապում է Պոլսի ոստիկանապետ Բեղրի բեյի մոտ: Բայց տեսնելով, որ այստեղից ոչ մի սպասելիք չկա, դիմում է ուղակի գերմանական դեսպանատուն: Սակայն օգնության փոխարեն, այսպիսի բառեր պիտի լսեր դեսպան ֆոն Վանգենհայմից. «Դու, թշվառական գերմանուիկի, լքեցիր ազգդ, ամուսնացար այդ հայի հետ և հիմա եկել խնդրում ես, որ ազատեմ նրան: Նա ետ չի դառնալու, նրանք գնացել են մեռնելու»:

Ի պատասխան, Յաննին, արժանապատիվ վրդովմունքով, դեսպանի երեսին է շպրտում իր գերմանական անծնագիրը:

Տիկին Սևակը հետազայում իսկապես իրաժարվեց գերմանական հպատակությունից և իր զավակների՝ Լևոնի և Շամիրամի հետ հաստատվեց Ֆրանսիայում: Նա մինչև կյանքի վերջը գերմանիա չգնաց, անգամ իր ծննդավայրը: Մինչև կյանքի վերջը իրաժարվեց գերմաներեն խոսել, իսկ զավակներին արգելեց գերմաներեն սովորել: Նա համոզված էր, որ Կայզերական Գերմանիան Օսմանյան Թուրքիայի հետ հավասար պատասխանատու է միլիոնավոր հայերի նահատակության համար:

Պահպանվել է նրանց ընդարձակ նամակագրությունը, մոտերեք հարյուր նամակներ ու բացիկներ: Հայ գրողներից ոչ մեկը սիրո այսպիսի հարուստ և վսեմ վկայություններ չի թողել:

Ուրբեն Սևակի նման ազգային հերոսը պատիվ կրերեր աշխարհի ուզած քաղաքակիրք ազգին, և ամեն ինչ կանեին, որպեսզի նրան մեծարելով մեծարեն իրենց: Նա դարձավ մեր՝ ոչ միայն պոետական, այլև, հատկապես, բարոյական հանձարի լավագույն արտօհայտությունը: Եվ այսօր, երբ նայում ենք հետադարձ հայացքով, ապա ոչ միայն մեր, այլև XX դարի համաշխարհային գրականության մեջ նրա նման երկրորդը դժվարանում ենք գտնել:

Նրա կյանքի պատմությունը ծայրեծայր վիպական է՝ բառի բոլոր իմաստներով, ինչը փորձել ենք ապացուցել «Եվ անզամ մահից հետո» վերնագրված մեր վեպում, որը շատ շատերի կարծիքով կարող է իրաշալի նյութ դառնալ բազմասերիանոց ֆիլմի համար (սակայն բնավ ոչ սերիալների՝ արդի կայունացած, հակագեղագիտական հասկացությամբ):

Յաննի Սևակը Կ.Պոլսից վերջնականորեն հեռանալիս իր հետ Եվրոպա տարավ ամուսնու ծեռագրերի, լուսանկարների և այլ նյութերի մեջ մասը: Պակասող մասը հետազայում լրացրեց բանաստեղծի եղբորորդին՝ Հովհաննես Չիլինկիրյանը՝

Նիցցայից ոչ հեռու գտնվող Կանյ-սյուր-մեր քաղաքում հիմնելով «Ռուբեն Սևակի հիշատակի տունը»: Եզակի մի երևույթ ոչ միայն հայ, այլև համաշխարհային գրականության համար. դա փաստորեն բանաստեղծի տուն-թանգարանն է՝ հիմնված հայրենիքից դուրս:

Եվ, վերջապես, այսօր Նիցցայում է ապրում բանաստեղծի դուստրը՝ Շամիրամ Սևակը, որի 95-ամյակը լրացավ այս տարվա հուլիսին:

ՈՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ԿԵՆՍԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Կեցության խորհրդի, կյանքի ու մահվան, կյանքի արժեքի գոյաբանական կարգերը դարձան 19-րդ դարի եվրոպական փիլիսոփայության առանցքային խնդիրները: Երևոյթ, որն, անկասկած, ունի հետազոտության ենթակա հիմնավոր պատճառաբանություն: Դարավերջի հայ մշակույթի համատեքստում այդ հարցադրումները նույնպես դառնում են քննության առարկա և ձանաչվում ու գեղարվեստականացվում են տարբեր իմացաբանական համակարգերի հիմնավորումներով և բացահայտմամբ: Կյանքի արժեքի, գոյության խորհրդի խնդիրը կազմում է նաև դարասկզբի արևմտահայ մտավորական Ռուբեն Սևակի գրավոր ժառանգության բուն էությունը՝ կվինտսենցիան: Իմաստասիրական մշակվածություն ենթադրող այս խնդիրները արծարծվում են և խոհի տեսքով, և գեղարվեստական, բանաստեղծական փոխանակությամբ: Ռուբեն Սևակի աշխարհայացքն ունի ընդգծված պեսիմիստական բովանդակություն, ինչը բխում, որոշարկվում է Սաքյա-Մունիի ուսմունքի ուղղակի, չմիջնորդավորված և համակողմանի ուսումնառությունից: «Սաքյամունի մահվան մեջ գտավ կյանքի գաղտնիքը: Ամեն իղձերու անէացումը քարոզեց ան Սիրվանայի գրկին, էին ընկղմումը Մեծ ոչինչ-ին մեջ, մահվան թույնը՝ կյանքին իսկ բաժակին մեջ...»,- գրում է պատանի բանաստեղծը դեռևս 1905 թ.: Էպիկուրյան փիլիսոփա Արիստոբուլոսը բոլորովին ներհակ բարոյականությամբ էր իմաստավորում մարդու կյանքը՝ հաճույքի բարոյականությամբ, որ սակայն միևնույն վախճանին պիտի հանգեր շատ ուշ» (նույն տեղում):

Բուդղիայի ուսմունքի և Ռուբեն Սևակի գրական ժառանգության համադրական քննությունից պարզ է դառնում, որ բանաստեղծը այն ուսումնառել է բավականաչափ խորությամբ, հետևո-

դականորեն և ամբողջականորեն՝ համակարգված։ Այսինքն յուրացվել են ուսմունքի և տեսությունը, և բարոյականությունը (ասկետականություն), և գործնականությունը կամ հայեցողականությունը։ Սաքա-Մունիի հոգևոր, նաև իմաստափառական ուսուցչը շեշտված պեսիմիստական բնույթ ունի, ինչը ծնվում է առաջին հերթին այն գիտակցությունից, որ մարդու կյանքը համակ տառապանք է։ Այս համընդիանուր ինչեղություն ունեցող ընթրունումը Բուդդիայի հանրահայտ փրկության չորս աստիճաններից առաջինն է։ «Եղբայրներ, - ինչեցնում էր նա, - մենք հածում ենք վերածնունդների տխուր ու ամայի ուղիներում լոկ այն պատճառով, որ չգիտենք փրկության չորս ծշմարտությունները։ Ահա, եղբայրներ, տառապանքի բարձրագույն ծշմարտությունը՝ ծնունդը տառապանք է, ծերությունը տառապանք է, հիվանդությունը տառապանք է, մահը տառապանք է, բաժանվելը սիրելի, հածելի բաներից տառապանք է, չսիրած մարդկանց մերձավորությունը տառապանք է, ցանկալիին չհասնելը տառապանք է»։ Նման խոկումներով առատ են Ռուբեն Սևակի և Շամականին, և արծակ ու բանաստեղծական երկերը։ Նա նույն պես կյանքը համարում էր տառապանքների ու տանջանքների անխորհուրդ ընթացք։ «Քալե՛, դժբաղդ անցորդ։ ...Քալե՛ նոր տառապանքներու, նոր անհուսություններու համար, քալե՛ անհնատ կյանքիդ ողբալի ձամբան, քալե՛, քալե՛, մինչև որ արևը նորեն ու նորեն մարը մտնե ու ալ չի ծագի քեզի համար...»

Սիրտ մը դրին կուրծքիդ տակ, միտք մը դրին զանկիդ մեջ. «ապրե՛, ըսին, պիտի մեռնիս»։

Զգալ՝ տառապիլ, խորիիլ՝ տառապիլ, տառապիլ ու քալե՛ մինչև որ մեռնիս։

Արևը իր մարը մտավ, ու ես կքալեմ դողոջու՛ն։

Քալե՛, կյանքն է այս»։

1906 թ., «Վերջալուս»

Երկրորդ ծշմարտությունը բացահայտում է տառապանքի ծագման ակունքները։ Բուդդիան տառապանքի արմատը տես-

նում էր վայելքների, կյանքի ծարավի, գոյության կառչումի, զգայական մղումները բավարարելու գայթակղության, անձնական երջանկության հասնելու տենչի, անհագ ցանկությունների և կամեցողության մեջ: Համաձայն երրորդ փրկարար ծշմարտության, տանջալից գոյությունից, տառապանքից ազատվելու ծշմարիտ ուղին գիտակցորեն ու կամովին հրաժարվելն է բոլոր կարգի մղումներից ու ցանկություններից: «Ոչ դրամին կիրքը ունիմ, ոչ փառքին կիրքը, ոչ համբավին կիրքը: Կյանքը շատ տխմար բան մը եղած պիտի ըլլար, եթե անոր նպատակը արշավ մ'ըլլար մինակ դրամասիրության ետևեն, փառասիրության ետևեն: Կյանքը, Հրանդս, տառապանքով, ցավով լեցուն այս կյանքը կարժե՞ր միթե ապրիլ այս գծված բաներուն համար...»

Ամեն բան փուժ է աշխարհիս մեջ, ամեն բան վաղանցուկ, սունտ են փառքը, սունտ՝ մեծությունը, սունտ՝ սա խաքեբա երջանկությունն ալ, երջանկությունը որ տառապանքով կը ծնի, տառապանքով կը մեռնի...»

Անապատ, ամայություն, ունայնություն սա տիեզերքը»:

1905 թ.

Բուդրիայի ուսմունքի պեսիմիզմը ծնվում էր հայեցողական այն ակունքից, ըստ որի աշխարհում ոչինչ մշտագո, կայուն ու հարատև չէ: Ամեն ինչ ենթակա է քայլայման ու կործանման: Ամեն ինչ անցողիկ է: Երևույթներն անհետանում են մեկը մյուսի հետևից: «Արագահոս գետերը հոսում են ու չեն վերադառնում»: Ամեն ինչ ենթակա է կործանման ու մահվան օրենքին: Ի՞նչ իմաստ կա պատիր երջանկության տևական ու ունայն այդ տենդագին փնտրութի մեջ: Չուր են մարդու ջանքերը իրական կյանքում երջանկության հասնելու համար: Մահն է թագավորում ողջ աշխարհում, ողջ գոյավորի վրա: Եվ ոչինչ, ոչ մի ուժ ի գորու չէ այս աշխարհում մարդկային կյանքը փրկել մահվան ամենակով երախից: Մահվան առջև հավասար են բոլորը: Անհագ, անդուլ տենչերի ու կամեցողության՝ սանսարայի հոսքը չի կարող գեթ մի երջանիկ օր պարզենել մարդուն: Ամենայն

ոք դատապարտված է հիվանդությունների, ծերության, մահվան: Տառապանքից ազատագրվելու միակ միջոցը սանսարայից լիովին դուրս գալն է: Տառապանքի վերացումը նշանակում է կամեցողության, կյանքի ծարավի լիակատար ոչնչացում, հրաժարում, ազատագրում դրանից: Սա ռոմանտիկ փախուստ չէ իրականությունից, այլ կատարելության հասնելու միստերիա: Սանսարայի աղմուկից ու ժխորից ազատագրվելով լոկ և հանդարտ հայեցողությամբ կարելի է հասնել կատարելության և ծշմարիտ ձանաչողության: Մենակյացության ձգտումը այս պարագայում նաև ձանաչողական ետնախորք ունի: Այն Բարձրագույն էությանը միասնանալու ձանապարհն է, որը ոչ միայն հոգևոր երանելի վիճակ է պարզեցնելու մարդուն, այլև ծշմարտությանը հասու լինելու անհրաժեշտ պայման է: «Ինչքան մարդը մոտենում է այդպիսի վիճակի, որտեղ անհետանում են բոլոր որոշակիությունները, այնքան ավելի է նա կատարելագործվում, իսկ մանավանդ լիակատար անկամության, մաքուր կրավորականության մեջ, նա նմանվում է Բուդդիայի» (Գեղել, Փիլոսոփիա истории, տ. 8, Մ., 19352., ստ. 160):

Մենակյացության պահանջը Ռուբեն Սևակը զգում է ոչ միայն սենտիմենտալ խառնվածքի թելադրանքով: Նա իր կյանքը ձգտում է կազմակերպել դավանած ուսմունքի բարոյականության համաձայն, փրկության տանող նրա աստիճանակարգության օրենքներով կանոնակարգված ու նպատակաբանված: «Կռան Սեն Պենառ անուն վանք մը կա Ալպյանց գագաթը, ծյուներուն ու լոռության մեջ կորսված, երկինքին ու երկրին մեջ առկախ, ժամանակին պես դարավոր ու մահվան պես անխախտ: Բանի-քանի անգամներ երազած եմ հոն քաշվիլ, հոն թաղվիլ, բանտարկվիլ իմ երջանկությանս հետ, դուրս նետվիլ այս զգվելի օրենքեն, որ «կյանքի պայքար» կկոչվի, ապրիլ երազին ու խորհրդին մեջ, աստվածորեն ապրիլ, հավիտենության խարկանքն ունենալ, լոռությունը խոսեցնել... Ինձ այնպես կու գա, որ հոն, բնության մենության մեջ, ժամանակին

ծայնը պիտի լսեի, և հոգիները, որոնք օդի մեջ են, այո՛, պիտի խոսեին ինձ հսկայական բաներ, Մովսեսին լսած պատգամներուն պես: Եվ այն ատեն պիտի զգայի, որ կ'ապրիմ, մինչդեռ հիմա՞ քաղաքակրթության ու խուժանին մեջ նետված՝ ավելի կտարվիմ, կրշվիմ, կիրվիմ, քան թե կրալեմ Բնության մեջ, իին հսկաներու քայլովը: Բայց պատանությունն ի՞նչ կիասկնա ասկե, անիկա ոսկեզօծ սուտերն ու աղմուկը կսիրե. ...Ու այս բոլորին վրա ավելցուր նաև Պոլսու մզավանջը. ...Եվ ըսե՛լ թե այս մենակյաց փիլիսոփայության հասնելես հետո (ընդգծումն ինն է - Ա. Ա.), դեռ պետք պիտի ըլլա ինձ այդ զարհութելի ոստանին մեջ ապրիլ, ամենուն հետ, ամենուն պես... »:

Բուդրիայի չորրորդ ծշմարտությունը տառապանքից ազատագրվելու ուղու մասին է: Այդ ճանապարհն ութաստիճան է: Այդ աստիճաններից վերջինը Բուդրիան անվանեց Նիրվանա: Բառացիորեն այն նշանակում է փշել հանգստել, մարել (կրակը): Ածականաբար այդ հասկացությունը նշանակում է «անհետացող», «մեռնող», «ավարտվող», իսկ որպես գոյական՝ «ավարտ», «վերջ», «գոյության ավարտ», «երանություն», «քավարարվածություն», «լիապարար գոհացում», «հավերժական հանգիստ» և ի վերջո՝ «փրկություն անվերջ վերածնունդներից» (տես A.H. Չանաւեա, Կурс лекции по древней философии, М., 1981, стр. 78):

Նիրվանան տառապանքից կատարելապես ազատագրում է մարդուն դեռևս իր կենդանության օրոք: Տառապալից գոյությունից նման ազատագրումը տեղի է ունենում երևութերի կապի ճանաչողությամբ և Բուդրիայի կատարյալ բարոյական պատվիրանների պահպանումով: Նիրվանան այդ ամենի բարձրակետն է՝ մարդու կության մեջ կյանքի լիակատար «մարումը»: Դա այն հոգեվիճակն է, երբ անհետանում են բոլոր կրքերը, մարում է լինելության ցանկացած մղում: Դա նի հոգեվիճակ է, որին ոչինչ չի նմանվում այս աշխարհում, այն բարձր է ցանկացած իրականությունից: Դա այն վիճակն է, երբ

կյանքի տառապանքներից ազատագրված մարդն ընկղմվում է կատարյալ հոգեկան անդորրի, խաղաղության ու երանության մեջ: Սենտիմենտալ խառնվածքը, դավանած ուսմունքի շնորհառության աստիճանների և փրկագրործության կերպերի գիտակցական որդեգրումը իրապես Ռուբեն Սևակի էության մեջ հասու էին կամքի մարման՝ կվիետիզմի որոշակի հոգեկան պահանջ: «...Ու տարօրինակ, ահոելի զգացումը մեծ անհունին մեջ լուծվելու, անէանալու, մեռնելու...» (Երկեր, էջ 374):

Առաջին երկու ծշմարտությունները կազմում են Բուդյիայի ուսմունքի տեսական մասը, իսկ վերջին երկուսը՝ գործնական: Առաջինում տեսականացվում է, որ կյանքը տառապանք է և հիմնավորում այդ տառապանքից ազատագրվելու անհրաժշտության ըմբռնումը, մյուս երկուսը ցույց են տալիս դրանից ազատագրվելու միջոցներն ու եղանակները: «Բայց կա, միշտ կա իմ մեջ գերագույն իտեալի մը երազը, ու միշտ կա իմ մեջս կամքը միշտ մոտենալու բարձրագույն տեսլականի մը: Այդ իտեալը ու այդ կամքը կը հատկանշեն ամբողջ Չիլինկիրյանը», - գրում է Ռուբեն Սևակն իր նամակներից մեկում: Այստեղ, իհարկե, ինքը չի որոշակիացնում այդ իտեալի բովանդակությունը, սակայն նկատի ունենալով, որ Սաքյա-Մունիի ուսմունքը էական դեր է ունեցել նրա աշխարհայեցողության ձևավորման մեջ, կարելի է ենթադրել, որ այն առնչվում է այդ ուսմունքի բարյականությանը: Սևակը նաև բանաստեղծականացրել է Հին աշխարհի բարձրագույն մարմնավորումներից մեկի՝ Բուդյիայի անձը և նրա ուսմունքի ծակատագիրը:

Տառապանքից մարդու փրկության այդ ուսմունքի էությանը, Բուդյիայի առաքելությանը և քարոզած կատարյալ լուսաբանությին անապատային անտարբերությամբ են հաղորդ դառնում առօրյա կյանքի գորշ, անիմաստ ընթացքի մեջ թաղված մարդկանց բազմությունները: Այս իրողությունը «ՍԱՔԻԱ-ՄՈՒՆԻ» բանաստեղծությամբ հնչում է իբրև մարդու տիեզերական ծակատագրի ողբերգություն:

«Սաքիա՝ Սաքիա...» կկանչեր ձայնը հեռուեն:
Կթավալեր Արևն իր գունտը ոսկյա
Ու անապատն իր մրափին մեջ հուզորեն
Կ'արձագանքեր կերկերող կո՞չը «Սաքիա»...

Իմաստունին Աշակերտը, մոլորո՛ւն,
Արշալույսին մթնշաղեն շատ առաջ
Սկսեր էր իր անվերջ վազքն, ու հեռուն
Վաղո՞ւց, տխուր, կնվաղեր իր հառաչ:

Մազերը խոիվ, ոտքերը մերկ, անձնվե՛ր,
Ի գո՞ւր գյուղե գյուղ իր ստվերը տարավ,
Ի գո՞ւր մարդոց ան խոսեցավ անվեհե՛ր,
Իմաստունին պատվերները սրտագրավ:

Ան «Նիրվանա, կքարոզեր, Նիրվանա՝,
Ինքնամոռաց անէությո՛ւնը հոգվույն,
Տենչանքներու ոչնչացումն անխնա,
Երազամոլ վերացո՞ւմը գերագույն:

Ա՞հ, Նիրվանա՝, ոչ մեկ փափաք, ոչ մեկ սեր.
Ոչ իսկ հետին գոհացումը մեր սրտին.
Ոչ տառապանք, ոչ ալ ժպիտ, ոչ հույսեր.
Ա՞հ, Նիրվանա՝, ինքնակամ մա՞հը ցրտին»:

Սակայն սանսարայի հոսքին տրված ամբոխը անտարբեր
է կեցության խորհրդի, գերագույն իմաստության ու կատարե-
լության հանդեպ: Ամբոխն, ըստ էության, իրապաշտ է և հաշ-
վենկատ: Նա մտքերով և զգացմունքներով կապված է աշխար-
հի իրական, տեսանելի և շոշափելի ոլորտին: Ագահությունը,

Բուղդիայի բնութագրմամբ, այս աշխարհի թագուհին է, նա է մարդկանց մղում ցանկությունների և ապա դրանց հասնելու գործողությունների: Ողջ իդեալականը, որը գտնվում է իրականության սահմաններից դուրս, կատարելապես խորթ է նրանց: Բարձրագույն կատարելության և ծշմարտության ի գորու է հասնելու մարդկության սոսկ աննշան մասը՝ ովքեր որոշում են կտրականապես լքել աշխարհիկ կյանքը: Մարդկային հոծքազմությունները ինքնամոռաց քաղված են երկրային ունայն մղումների, կրքերի ու ցանկությունների թանձր մշուշի մեջ: Այդ ամենից օտարվելը և գիտակցական հրաժարումը, ինչպես նաև մենակյացությունը, ճգնակյացությունը միայն կարող են նպաստել բարձրագույն երանության հասնելուն: «Ես իտեալական բաներ կսիրեմ: Իմ խենթությունս է այդ: ...Իտեալը իմ տկարությունս է: Կսիրեմ այն ամենը, որ ինձի մտածել կուտա իտեալականության մասին: Եվ, ընդհակառակը, չեմ կրնար տեսնել ինչ որ չափազանց երկրային, չափազանց մարդեղեն է և իրական»: Բարձրագույն կատարելության և իմաստալից հայեցողության հանդարտ աստիճանը, անվորով վիճակը նվաճվում են հետևողական ասկետիզմով: Դեռևս բրահմանականության տեքստերից է հայտնի, որ շուղրաները՝ ամենաստորին կաստայի մարդիկ, ասկետ լինել չեն կարող: Դա ենթադրում է իդեալահակ և բնազանց հոգի:

*Մարդերը զայն քաղաքներեն վանեցին:
Ոտքերը մերկ, մազերը խոյիվ, անձնվե՛ր,
Անապատին ծամբան բռնեց առանձին,
Ու հուսահա՛տ իմաստունը կփնտռեր:*

Բանաստեղծության մեջ առկա է նաև ռոմանտիկական բևեռացում: Հակադրված են իմաստունը՝ մարգարեն և գորշ ամրոխը, երկնայինն ու հողեղենը, ծշմարտությունն ու նոլորությունը, որոնք իրարամերժ են և հակոտնյա: Բուղդիայի տիեզերա-

կան ծշմարտությունները կատարելապես անհաղորդ են կոռապաշտ ամբոխին, որ դեռևս խունկ ու կնդրուկ է ծխում կրակին: Ավելորդ է մարմինը մեղցնել տարրեր գրկանքներով, կամ էլ պաշտամունքային ծխակարգերին տուրք տալ: Սանքյա- Մունին ուսուցանում էր գլխավոր ուշադրությունը սկեռել հորի մտածումներից հոգու մաքրման վրա, քանզի մաքուր սրտին են բացվում ամբողջ աշխարհը և ողջ բարի գործերը (տես՝ Թուրքական հանրապետությունից հետու ամբոխի լսելիքին որպես՝ ծայն բարբառոյանապատի...)

Բանաստեղծության համատեքստում հնչեցվում է մեծ անհատի չհասկացվածության ողբերգությունը: Մարգարեների ձակատագիրն է՝ քարկոծվել կամ խաչվել ամբոխից: Ենթատեքստում առկա է նաև իր՝ Ռուբեն Անակի իդեալահակ հոգու և հաշվենկատությամբ, իրապաշտությամբ հագեցված միջավայրի հակադրությունը:

Արեգակին հրատապ գումտին տակ հսկա,
Տաք ավազը թմրա՛ծ, անշարժ կննչեր.
Ու տանջվո՛ղ, գալարվող ձայնը «Սաքիա»
Մենության մեջ լացի մը պես կընչեր:

Սարսափ: Իր մեծ բազուկները լայն, արձակ,
Հըրատապ, շեկ ավազին վրա տարածեր,
Սրբությունը, Գիտությունը բացարձակ,
Սաքիա-Մունի, Պուտուա ինքը մեռա՛ծ էր:

Ամբոխի, տգիտության և անգիտության անապատի խորշակում մեռնում է Սրբությունը՝ բարձրագույն բարոյական կատարելությունը, Գիտությունը՝ կատարյալ իմաստնությունը:

«Սաքիա՛, Սաքիա՛...» հեկեկաց ծայնը լալեն:
Կթավալեր Արևն իր գո՛ւնտը ուկյա.
Ու անապատն իր մրափին մեջ հուլորեն
Արծագանքեց հուսահատ ժիշը «Սաքիա՛»...
«Սաքիա՛, Սաքիա՛...» հեկեկաց ծայնը լալեն:

Չորս փրկարար ծշմարտությունից բացի, հոգու բարձրագույն վիճակին հասնելու համար, անհրաժեշտ է նաև ազատվել մարդուն գոյությանը գամող, շղթայող հետևյալ տասը շղթաներից. ա) այն մոլորությունից, ըստ որի «Ես»-ը, անհատականությունը կամ հոգին փոփոխության ենթակա չեն, թ) անվերջ վերածնունդներից ազատագրվելու ուղու գոյության կասկածից, գ) այն հանգմունքից, ըստ որի կրոնական արարողությունները, աղոթքները, զոհ և ողջակեզ մատուցելը, կրօնական երկրպագությունները, ծեսերը և արարողակարգերը փրկության են տանում, դ) զգայական կրքերից և ցանկություններից, ե) մերձավորների հանդեպ ատելությունից և անբարյացակամությունից, զ) երկրային կյանքի սիրուց, է) երկնքում գալիք հավիտենական կյանքի տենչից, ը) հպարտությունից, գոռողությունից, թ) մեծամտությունից, ժ) անգիտությունից:

Ըստ Սաքյա-Մունիի ուսմունքի, փրկության չորս ծշմարտությունների հետևորդները և տասը շղթաներից ազատագրվածները կարող են հասնել բարձրագույն կատարելության, նմանվել Բուդդիային և դրանով հասնել Նիրվանայի (տես՝ Բुදда, Կոնֆуций, Մագոմետ, Ֆրանցиск Ասսիզսկի, Սավանարոլա, Մ. 1995г., стр. 41):

Կյանքի շինության պսակը, Բուդդիայի կարծիքով, պետք է լինեն համընդիանուր կարեկցանքը, գթասրտությունը և սերը ամենայն բանի հանդեպ: ծշմարիտ ընծայաբերումը և ազատությունը միայն սիրո մեջ են ի հայտ գալիս: Սիրով լցված հավատավորը, Բուդդիայի կարծիքով, հասնում է փրկության վերջին աստիճանին, քանի որ նա ազատագրվում է անգի-

տուրյան, մեղսահակության և կրքերի իշխանությունից ու շղթաներից: Սերը բարձրացնում է մարդուն նյութական կեցության օրենքներից դեպի հոգեկանության ոլորտներ, ինչը իր ուսմունքի հետևորդների համար նշանակում է մոտ լինել Նիրվանայի երանությանը: Բուդդիան պատգամել է նաև բարոյական կանոններ, որոնց հետևելով կարելի է ավելի տաճելի դարձնել առօրյա կյանքի ծախորդությունները, ներշնչել է մերժավորի հանդեպ կենդանի և անկեղծ գթասրտություն՝ ջանալով ծայրահեղ դեպքում դրանով թերևացնել դառնություններն ու վշտերը: Նա չի թողել աշխարհիկ ունայն ու սին հոգսերից կտրվելու անընդունակ մարդկանց ծակատագրի քնահածությն: Նա ուսուցանում էր, որ ամեն ոք, ծգտելով փոքրացնել չարիքի սահմաններն իր համար, պետք է ծգտի դա անել և իր նմանների, և բոլոր շնչավորների համար: Մարդիկ պարտավոր են լինել հեզ, ներողամիտ, կարեկից և անեն ամենայն հնարավորը՝ թերևացնելու այլոց վիճակը: Խորհուրդ է տալիս չտրվել սեփական ծախողանքների վշտին, այլ հոգալ ուրիշների մասին: Նա գտնում էր, որ մարդը պետք է լինի առատաձեռն, ողորմած, բարեգործ, աղջատներին կերակուր տրամադրող, հիվանդների մասին հոգացող (տե՛ս Էնցիկլոպեդический словарь, Փ.Ա.Բրոկգայզ և Ի.Ա.Եֆրոն, Ը-Պб., 1896, թ.4, стр. 842):

Սաքյա-Մունին իր ուսմունքի քարոզությամբ իրականում լոկ մի նպատակ էր հետապնդում՝ բարոյական կատարելագործման միջոցով հասնել մարդկության փրկությանը: Ռուբեն Սևակն, ըստ էության դավանելով այդ ուսմունքը, իր կյանքը նույնպես գիտակցորեն ծրագրում և իմաստավորում է մարդասիրական առաքելությամբ: Այդ առումով, նրա կյանքի կարծ, սակայն չափազանց իմաստալից տարիները իր արվեստով մեզ են ներկայանում իբրև ինքնասրբագործման ու անցողիկ արժեքների հաղթահարման վերընթաց ուղի: «Անհունություն մը ժամանակը, անհունություն մը միջոցը, ու մարդ՝ հյուլե՛ մը

այս երկու անհունություններուն մեջ կորսված, անհունություն մը և այդ հյուլեն...»: Կյանքի նպատակը լուսավորվում է լոկ կատարելության հասնելու ծգտումով, ինչը գործում է միջոցի մեջ և ինչը մարդուն մղում է «բարոյական արև մ'ըլլալ տիեզերքին մեջ, լուսի՝ հառաջադիմության արևը»:

«Ու այս խաբուսիկ ստվերներուն մեջ եթե կա հաստատուն և իրական բան մը, այդ ալ (ըստ իս) Զարգացումն է, Բարությունն է:

Կեանքը այս երկու սկզբունքներուն համար միայն կարժէ ապրիլ, ըստ իս. տգե՞տը, չար չապրիր. մինչդեռ Գիտունը անհունություն մը կապրի, ու Բարին՝ անմահություն մը:

Ու եթե բժշկությունը ընտրեցի ինձ ասպարեզ՝ միայն ու միայն այդ սկզբունքներու իրագործնան համար է: Եվ հիրավի ո՞ր ասպարեզին մեջ մարդ ավելի դյուրություն և հակամիտություն ունի գիտնապես զարգանալով՝ որքան բժշկության մեջ. և ո՞ր արհեստն իիվանդին կը շնորհե կյանքը՝ մեծագույն բարիքը, եթե ոչ բժշկությունը դարձյալ»:

Ռուբեն Սևակը Բուդդիայի ուսմունքը յուրացրել է նրա իմացաբանության ամբողջականությամբ: <անրահայտ է, որ Սանցյա-Մունին մերժում էր Բրահմանականության ուսմունքի ընդունած սուբստանցը կեցության կենտրոնը, համաշխարհային ոգին, բարձրագույն օբյեկտիվ ռեալությունը, որպես բացարձակ արարող, որի ընդերքում է ծնվում, գոյավորվում և դադարում գոյություն ունենալուց ամենայն բան: Բուդդիան այդ ամենն անվերապահորեն հայտարարեց որպես վերացական պատկերացում, դատարկություն, ոչինչ:

*Երկնից կամարը դիտեցի
Անհուն պարապն էր Անէին,
Գիսավորները կերթային
Արցունքներու նման լացի:
«Մեներգ»*

Վերացական Ոչինչը այն է, ինչ գտնվում է վերջավորից անդին, և ինչը իմացաբանության մեջ անվանվում է բարձրագույն էություն: Իրերի սկիզբը Ոչինչն է, ամեն ինչ ծնվում է Ոչնչից և կրկին վերածվում Ոչնչի: Աշխարհում գոյություն ունեցող տարբերությունները լոկ ծագման տարբեր կերպեր են: «Վերացական Ոչինչն այն է, ինչ գտնվում է վերջավորից անդին, և ինչը մենք կոչում ենք բարձրագույն էություն: Այդ ծշմարիտ սկիզբը, ասում են, որ գտնվում է հավերժական հանգստի մեջ և ինքն իր մեջ անփոփոխ է, նրա էությունը կայանում է հենց անգործության ու անկամության մեջ: Չէ որ Ոչինչը վերացական Ամբողջն է ինքն իր հետ: Երջանիկ լինելու համար մարդու պետք է նմանվի այդ սկզբին՝ ինքն իր վրա մշտական հաղթանակներ տանելով, այն է՝ ոչինչ չանել, ոչինչ չկամենալ, ոչինչ չպահանջել: Այդ երանելի վիճակում խոսք չի կարող լինել ոչ արատների, ոչ առաքինությունների մասին, քանզի ծշմարիտ երանությունը միասնությունն է Ոչնչի հետ (Գեղել, Փիլոսոփիա истории, տ. VIII, стр. 160):

Այս մտահայեցողության շրջանակներում է մեկնաբանվում, բացատրվում հոգու ըմբռնումը: Այն գիտակցության հոսք է, մշտահոլով ու հարափոփոխ լինելիություն, քանզի հոգին էլ է փոփոխվում ամեն ակնթարթ: <Ոգին իրեն կատարելապես հաստատուն և սուբստանցիոնալ դիտելը պատրանք է, որը կապում է անհատին տառապանքների աշխարհին: <Ոգու սուբստանցիալության բացասումից է բուդյիզմը բխեցնում նրա մահկանացու լինելու ըմբռնումը: Կյանքը դիտվում է իրեն հոգեվիճանների գուգորդումների և համադրությունների հերթափոխություն: Այս ըմբռնումն ավելի է խորացնում պեսիմիզմի էությունը, քանի որ դրանց հետևում է, որ ծշմարտությունը հավիտենական և բացարձակ չէ, այլ հարաբերական: Առավել ևս ըմբռնան տրամաբանությամբ կյանքն ընկալվում է ոչ թե կեցություն, այլ պարզապես լինել: Ըստ այդմ՝ գոյություն չունի ոչ քողարկված իմաստ, ոչ էլ ապագա կարգ:

Բուղդիայի ուսմունքի դոգմատիկայի, բարոյականության կանխադրությաների իմացաբանության հիմքի վրա է ստեղծվել բանաստեղծի խոհափիլիսոփայությունն առավել ամբողջականորեն ներկայացնող «Մարդերգություն» չափածո երկը: Ուուրեն Սևակը գտնում է, որ Արևմուտքի քաղաքակրթության, մարդկային հոգեբանության ու մտածողության մեջ իսպառ բացակայում է կյանքի ծշմարիտ ըմբռնումը: Այն, ըստ էության, պրագմատիկ է, հաշվենկատ, ամբողջությամբ կլանված ու թաղված է գործնական խնդիրների, ծրագրերի ու գօայական, կրթածին գաղց վայելքների անսրափ հոսքի մեջ: Բոլոր շղաներով հասարակությունը գամված է նյութական կեցության ոլորտներին: Այդ հարթության վրա էլ կայանում և ծավալվում է ստեղծած քաղաքակրթությունը: «Եկուր տես՝, որ երիտասարդները չեն հասկնար այս բաները. Եվրոպա նետվիլ կ'ուզեն իսկույն. մինչդեռ հոն 7 տարի ապրող մը միայն կրնա գիտենալ ի՞նչ է քաղաքակրթությունը, «զարգացած կյանքը», ամեն սուտ ու կեղծիք, շպար ու ամոթ»: Արևելքցի իդեալահակ, գծված բնագանցական մտածողությամբ օժտված և բանաստեղծական ռոմանտիկ խառնվածք ունեցող Ուուրեն Սևակը չէր կարող իմաստավորված համարել իր կյանքը. «անդո՞ւ, անընդհատ անմիտ վազքի» այդ աննպատակ, անհասցե երթի Հոգեբանական այս հեռացումը, անշուշտ, երևույթի գոեհկացում կլինի, եթե ընդունենք, որ այն ուղղված է բուրժուական հարաբերությունների դեմ:

Առավել ևս անիմաստ է փիլիսոփայական ենթատեքստ ունեցող «Մարդերգություն» պոեմը, ինչպես նաև հեղինակի աշխարհայացքը պատճառաբանել լոկ ազգային կյանքի սոցիալական, քաղաքական հակասություններով, կամ էլ բանաստեղծի անձնական կյանքի դրվագներով, աններդաշնակությամբ: Ժամանակին իտալացի պեսիմիստ բանաստեղծ Զակոնո Լեոպարդին հակադրվում էր իր այլեզիան հետազոտող քննադատներին, գտնելով, որ սխալ է իր արվեստում արտահայտ-

ված կենսափիլիսոփիայությունը պատճառաբանել իր իսկ անձնական կյանքի բարդություններով: Այն, ինչը պետք է վերագրել իմ բանականությանը, ասում էր նա, պարզունակ և գոեհիկ ծնով է վերագրվում է իմ անձնական տառապանքներին: Մինչդեռ ինքը գոյության խորհրդի, կյանքի էության քննությունը բարձրացնում է այնպիսի համընդհանրության, որտեղից սկսվում է գոյի փիլիսոփայական ձանաչողությունը:

Սևակի խոհական երկերը առաջին հերթին բացատրելի են իր ուսումնառած աշխարհայեցողությամբ և իր փիլիսոփայական իմացությամբ: «Մարդերգություն» պոեմում բանաստեղծականացվել է Սանքյա-Մունիի ուսմունքի տեսությունն ու բարոյականությունը դավանող բանաստեղծի կենսափիլիսոփայությունը: Պոեմում տրվում է Արևմուտքի քաղաքակրթության, և առհասարակ մարդու իրական կյանքի ու գոյության անխորհուրդի հոլովույթի գնահատականը: «Աստղերգություն» պոեմի փիլիսոփայական ենթատեքստը այնքան համընդհանրական է, որ այն նաև չի կարելի դիտել իբրև կյանքի անարդարությունների, սոցիալական, դասակարգային անհավասարության արձագանք: Հայտնի է, որ Բուդդիան չէր մերժում վառնաներ՝ կաստաները: Ավելին, դրանք դիտում էր որպես կայացած իրողություն, ինչն ինքը հակված չէ փոխելու կամ բարեշրջելու: Նաև չէր քարոզում հասարակական հավասարություն, սակայն հոչակում է դրա սկիզբը՝ կրոնական հավասարության սկզբունքը: Նա բոլոր կաստաների մարդկանց կոչ էր անում ապրել հոգևոր կյանքով, և բոլորն էլ իրենց բարեպաշտ կյանքի շնորհիվ կարող են հասնել երանելի փրկության: «Մարդերգությունը» ներկայացնում է գոյության իմաստի կրոնա-փիլիսոփայական համակարգված սկզբունքը: Այն եռաստիճան կառուցվածք ունի՝ ծնունդ-կյանք-մահ: Պոեմն, ըստ էության, ունի պայմանական կառուց: Այն ունի նաև ծրագրային խորհուրդ՝ կյանքի ծննարիտ էությունը պարզելով՝ վերացնել անգիտությունը և նպաստել մարդու հոգևոր առաջընթացին ու բարոյա-

կան կատարելությանը: Երկի սյուժեն ծավալվում է իմաստասիրական խորհրդածությունների գեղարվեստականացմանը: <Եղիշնակը հայրենի գյուղի «լռության ու բնության» «հեռո՛ւ, խնկավե՛տ, մշտնջենի» «անդորր Երանության» ծոցում խոկում է մարդկության անցած ճանապարհի մասին... <ազարամյակների ճանապարհ անցած մարդը հայացքը մշտապես երկինք է հառել: Ամբարտավան աստվածամերժությունը Երեկինն է, մինչդեռ հավատը քայլել է մարդու հետ անհիշելի դարերից... Եվ չնայած, որ իր դավանած ուսմունքը ներհակ է («հակառակ հավատքիս մոլոր»), այլ կերպ է հայում և բացատրում աշխարհը, գոյության խորհուրդը, այնուամենայնիվ, ինքը իմաստասերի հայացքով է նայում այդ ամենին և չի ծաղրում հավատն ու կրոնները (հեթանոսություն, կրակապաշտություն, բրահմանականություն, սիրիլլական գրականություն, քրիստոնեություն): Քանահրանքով չի նայում Եկեղեցի հաճախող իր քրիստոնյանորը (և քրիստոնյաներին առհասարակ), որը՝

Գերագույն, ամիաս, անսկիզբ, բարի,
Մթին Աստուծո մ'անվան կփարի.
Ու անիրավվա՛ծ, տառապա՛ծ, հուսա՛
Մեծ Արդարության վժոին կհուսա...

Այդ կրոններում է իրականում դարբնվել Հովսը, ինչը մարդուն պատիր հույսերով կապում է Երկնային կյանքի անգոքարիքներին: Այդ պատճառով էլ Մեծ Էտիթյանը (ինչը, Սաքյա-Մունիի հետևությամբ, Անակը համարում է Ոչինչը, ԱՅէ՛) այդ կրոնների դավանողները հաղորդակցվում են զոհաբերություններով ու ողջակեզմներով («Ու ի՞ն զիխարկնիդ բացեք վեհերուն - գերեզմանոցն է կենդանիներուն...»): Շարադրանքում նշվել է արդեն, որ Բուլղակայի մատնանշած մարդուն գոյությանը շղթայող տասը շղթաներից երրորդն ազատագրվելն է աղոթքով, արարողակարգերով, ողջակեզմներով, զոհեր մատուցելով,

մարմինը մեղսնելով փրկության պատիր հույսեր փայփայելուց: Եկեղեցում բանաստեղծը մի պահ անէացման պատրանք է ունենում: Դա կյանքի առօրյա հևքից, մութ մղումներից, հոգնությունից, ժամանակի միտքը թակող մուրճի մանրակրկիտ հարվածներից հոգու մի պահ ազատագրված վիճակն է: Նման վիճակներն են նպաստում մարդու բարոյական կատարելագործմանը: Դա մարդու կյանքում իրականության աղմուկից դուրս, վերտարածական և վերժամանակյա հոգեվիճակն է: Այնտեղ՝ եկեղեցում ժամանակը մեռելորեն կը ննջեր անշարժ, դարե՛ր քննեած:

<ո՞ն ոչ հեք, ո՞չ վազք, ո՞չ ժամ, ո՞չ վայրկյան.
Անսահման, անխռով, անծալ, հավիտյան,
Չո՞րս պատերու մեջ Անհուն մը խորին,
Ուր ծեր գեղջուկներ մեռնիլ կսորվին...>

Մահը և անէացման նման պահերը Ռուբեն Սևակը դիտում է իբրև համարժեք դերառույթի միավորներ, երկուսով էլ մարդու էռթյունը հայտնվում է սանսարայի հոսքից անդին:

...Բանաստեղծը երևակայության թոխքով տեսնում է դարերի միջով անցած մարդկության բազում սերունդների երթը, տեսնում է արյան լժեր, անողորմ նախքիրներ, կախաղաններ ու սպանդ: Տեսնում է անգիտության մշուշում մոլորված ստրուկների, կու՛ռ, բարբարոսն գնդեր, որոնք տաճար, աստված, կու՛ռը, իշխան ու տե՛ր տապալելու ծանապարհով էին փորձում՝

<ավասարության սե՛րմը ցանելու,
Ու լա՛յն բաշխելու Արդարություն, <ա՛ց...>

Բանաստեղծը գտնում է, որ տառապանքներով ու անազորույն տանջանքներով լեցուն է մարդու անցած ուղին, մարդկության ողջ պատմությունը: Կյանքի կովում մեկը Տեր է, մյուսը

Գրաստ, մեկը Ուժն է, մյուսը՝ Ստրկությունը: Իսկ Օրենքը Ուժի հովանավորն է, նրա ապահով վահանը: Միակ ծշմարիտ հավասարությունը պարզենում է Մահը, միակ ծշմարիտ երանությունը՝ Նիրվանան: Այս կապակցությամբ տեղին է վկայակոչել Բուդդիայի կողմից իր իսկ ուսմունքի էռությունը պարզաբանող մի պատմություն:

Մի անգամ Բուդդիան մոտենում է մի հարուստ բրահմանի և ուտելիք խնդրում: <արուստ հողագործ բրահմանն ասում է.- Եթե դու ել հերկեիր ու ցանեիր իմ նման, ապա ստիպված չեր լինի ողորմություն խնդրել:- Ես նույնպես բրահման եմ,- ասում է Բուդդիան,- ցանում եմ, հերկում եմ, հնձում եմ:- Սակայն ոչ ոք չի տեսնում, թե ինչպես ես դու հերկում,- Ըկատում է բրահմանը: <ավատն իմ սերմնահատիկն է, ինքս իմ դեմ պայքարելը՝ բարեբեր անձրևը, իմաստությունն իմ արորն է, որին կառավարում է համեստությունը: <ամառությունս առաջ է տանում արորը, որին ուղղություն եմ տալիս մտքով: Օրենքն այն դաշտն է, որը մշակում եմ, իսկ հավաքածս բերքը դա Նիրվանայի անմահ նեկտարն է:

...Բանաստեղծի տրտում հոգին վերստին տրվում է խոհական հայեցողության.

<եռուներն հանդա՛րտ, հեռուները լա՛յն,
<եռուները ջի՛նջ, միսթի՛ք, լոելա՛յն:

Այս տողերը ներկայացնում են երբեմնի Արևելքը,...ուր Անշարժության օրենքին հլու, հազար դարերի ու անհունների մտերմության մեջ ապրում էին մարդիկ, հեռու

Մեզ Արևմուտքեն ու հեզմելով զա՛յն...

Այդտեղ Կյանքը ծավալվում էր անուրջի մեջ: Արևելքի որդիները ապրում էին լոակյաց, խունկի, կնդրուկի ծոցում: Ու իրենց

հոգուն անծանոթ էր Արևմուտքի «պոռոտ Գիտությանց շեփորը սովինստ, ու սուտ Փառքերի ծածկույթն հաստաբեստ...»: Իրենք ստացան «առանց ուզելու ու կյանքեն անցան՝ առանց հուզելու» (ընդգծումն իմն է - Ա. Ա.) նրա անտեսանելի մութ հատակը:

Անկասկած, Ուրբեն Սևակը իդեալականացնում, դրական է գնահատում մարդու կողմից կամքի ամբողջական մարումը կվիետիզմը, ցանկությունների սահմանափակումը և վերջապես բնականորեն անեղծ, արևմտյան քաղաքակրթությամբ ու գիտական գիտելիքով չմիջնորդավորված կյանքով ապրելու իրողությունը: «Նրանք գինովցան, առանց քննելու... ու լացին՝ սրտի պետքի մը հլու...»: Ուրվագծվում է նաև վաղնջական, հովվերգական ժամանակների բնական, ամբողջական մարդը:

Արևելքն իր համայնապարար խոկումներում և դրախտային անուրջներում երկնեց.

*Անէության մեջ հսկան-Նիրվանան,
Ու երազատես Նազովրեցին հեզ...
Ու երկունքը հեշտ էր Մահվան մը պես:*

Ուրբեն Սևակը քրիստոնեության մեջ հատկապես գնահատում է սիրո և կարեկցանքի բարոյականությունը՝ հանձին ևազովեցու կերպարի: Մնացյալը՝ Գերագույն էություն, Աստված, հոգու անմահություն, հանդերձյալ կյանք, կրոնական արարողակարգեր և ծիսակարգեր, մերժվում են:

Եթե նրանք՝ Արևմուտքի որդիները, կյանք հասկացությունը ենթարկում են հարցախույզ քննության, ապա Արևելքի կենսիմաստությունը կյանքը իմաստավորում է՝ մահվան, անէացման իրողությանը հարաբերելով: Եթե նրանք տենդագին լծված են թվանշաններով զննելու հոգին, մտքով քննելու երկինք ու Աստված, ապա արևելքցիք երազում են ծակատագրական այն կախման երեք կետը՝ մահը, որն ընկալվում է իբրև տառապանքը հաղթահարող փրկարար և ծշմարիտ միջոց:

Ու արևելյան անկամ, հայեցողական ու անրջային այդ կենսակերպի մեջ՝

Բա՛ն մը կար Կյանքեն անջատ, Կյանքեն վե՛ր,
Բա՛ն մը, որ Կյանքեն բնա՛վ չէր ազդվեր,
Որ կնմաներ երեկին, Վաղվան...
Այդ՝ Մահվա՛ն իսկ մեջ ժխտումն էր Մահվան...

Միևնույն է, Մահն անխուսափելի է, այն մարդու վերջնական հանգրվանն է: Յուրաքանչյուր քայլ մեզ ավելի է մոտեցնում նրան: Մահն այն վարագույրն է, որը փակում է մեր կյանքի դերակատարության վերջին դրվագը: Եվ քանի որ այն անխուսափելի է, պետք է հոգեբանորեն պատրաստ լինել՝ արժանապատիվ և հանդարտ դիմավորելու այն՝ «Պետք է կորսվիլ. կորսվինք հըլու՛...»: Արևմուտքի «խրոխտ», ինքն իրենով խանդավառ «Հառաջադիմությունը» չի ոգևորում Սաքյա-Մունիի ուսմունքն էությամբ ըմբռնած բանաստեղծին, որն ամեն բան կշռում է կյանքի անցողիկության զգացողության ու մահվան փիլիսոփայության լույսի տակ: <Նիհին, թե դանդաղ, մեկ է՝

Անվրի՞պորեն պիտի հասնինք Մահ...
Ու ինչ որ անշե՛ց
է, պիտի շիշի շիրմին մութին մեջ:

Արդ՝ կյանքը ծավալվում է «Նորին Վսեմությանց» Դրամի ուժով: Բանաստեղծը տեսնում է կյանքի մյուս բաղադրատարրերը՝ Ուժը, Իշխանությունը, Օրենքը հտպիտ, ստրուկ կրքերին հլու մարդուն, հանց մուրացիկ ձեռքը պարզած Աշխատությունը: Արևմուտքի կյանքը, Ուութեն Սևակի կարծիքով, շնչում է գործնականի ոիթմով (կամեցողություն, շահ, նպատակներ, ծրագրեր, փառք, հեղինակություն և այլն), ինչի պատճառով էլ այդ հեղձուկ մթնոլորտում խիղճը սոսկ բառ է, մարդը մեքենա,

աշխարհը գործարան, սերը՝ լոկ հաշիվ, կյանքն անհաշտ կոիվ, անմիտ, անողութ վազք, մահմ՝ անմահություն... Հայտնի է, որ կյանքի կեղծ ձևերը, ըստ Բուդդիայի, հետևանք են անհագուրդ կրքերի, ինոչ ցանկությունների... Վերստին ու վերստին տեսանելի է դառնում կյանքի ունայնությունը, երբ այդ ամենը բանաստեղծը հարաբերում է Դեղին Փոշու անցած հուսահա՛տ Ժանապարհին: Դա անցյալն է իր խրոխտ հերոսներով, իր փառքերով, գոռ և աշխարհակալ գորավարներով, ինքնասեռ հանձարներով, բազում, անհամար ժողովուրդներով...

Պոեմի երրորդ հատվածում առավել որոշակի է դառնում հեղինակի անհատականությունն ու կենսիմաստությունը.

Ակեպտիկ ժպտով մը դանդաղագին
Երբ մարդ ըմպած է մրուրը Կյանքին,
Երբ ծառայած է կամքով կորովի
Այն մեծ վարպետին, որ Վիշտ կկոչվի.
ճանչցա՞ծ է դողդոց դշխույն, որ Սերն է.
Ազգաց և անհատին Պատմության դժնե
Նայած է անգամ մը մյուս երեսին,
ճանչցա՞ծ է մարդուն Գիտությունը սին,
Արվեստն հավակնու, սիրտն ամբարտավան,
Սունգը երեկին, երկյուղը Վաղվան...
Ու ծշմարտության հոգին ծարավի՝
Զննած է երկնից պարապը ծավի
-Հին աստվածներու վիհն այդ մշտակա՛...

Բանաստեղծը գերեզմանատան՝ Մահվան Քաղաքի, տապանաքարին նստած, խորհում է հոգու անմահության ըմբոնումի շուրջ:

Ու գուր խորհեցա, թե այս այն վայրն է
Ուր վաճառական Աստված մը դժնե

Չարը կպատժե անսահման վախով,
Բարփոյս շնորհելով դրախտ մապահով...

Բանաստեղծը խոկում է կյանքի անմահության շուրջ: Հայ-
նի է արդեն, որ Բուդուհան Ժխտում էր հոգին որպես կեցութ-
յան սկզբունք, ինքնակա սուբստանց: Առավել ևս անընդունե-
լի էր հոգու անմահության դրույթը: Սևակը նույնպես գտնում
է, որ հոգու անմահության ըմբռնումը հորինված պատրանք
է, ցնորք: Անմա՞հ... Բայց չէ որ երկնքի բյուր գիսավորներ են
մոխրանում, աստղեր են վառվում, աստղեր են հանգչում, ողջ
բուսական ու կենդանական աշխարհն է ոչնչանում, ամենայն
ինչ համայն տիեզերքում ենթակա է մահվան ու ոչնչացման:
Եվ մարդն է, որ փայփայում է անմահության պատրանքը: «Ինչ
ամբարտավան ու եսամոլ գաղափար»:

Ու երկինքին հյուր՝ լոկ մարդն է տըխուր...
Անմա՞հ, մինչև երբ, և ինչպես, և ու՞ր...

Մինչդեռ «Մահը բացարձակ է ու հավիտենական, ու տիեզե-
րական, որովհետև Մահը ծշմարիտ է, թերևս միակ ծշմարիտ
իրողությունը այս երազ- կյանքին» (Անտիա Էջեր, Էջ 37):

Բայց ո՞րտեղից է մարդու մեջ այդ Հույսը: Այդ ինչպե՞ս նա
համառորդեն Մահվան ծոցի մեջ Անմահության հովս է սնու-
ցել...Բազում դարեր, հազարամյակներ ապրած մարդը, Բնութ-
յան շատ ուժերի վրա է իշխանություն ձեռք բերել՝ կենդանիներ
է ընտելացրել, նաև ոչնչացրել, աստվածներ է ստեղծել և այ-
րել, տիրել է Բնության Ուժին ահազին,

Կը տենչա իշխել արդ ժամանակին...

Մարդու տենչերից մեծագույնը անմահության ճգտումնէ: Նա
ցանկանում է անմա՞հ լինել, ապրել հավիտյան: Թեկուզ ան-

միտ, թեկուզ հիվանդ, թեկուզ տառապանքով ու վիրավոր, մեկ է, միայն թե՝ ապրի... (Բուղդիայի մատնանշած տասը շղաթերից մեկը գալիք կյանքի տենչն է երկնքում, որից նույնաբես պետք է ազատագրվել՝ տառապանքից ազատվելու և փրկության հասնելու համար):

-Աստվածացյալդ Մարդ, ամո՞թ քեզ, ամոթ,
Մութ, ամբարտավաճ խրոխտությանց ամո՞թ,
Դեռ ամեն գինով կըկառչիս հողին...
Նայեիր աշնան տերևին դեղին...

Ուրբեն Սևակը մերժում է հոգին: Այն չկա, կա նյութը միայն: Սակայն սա մատերիալիզմ չէ: Այնտեղ՝ գերեզմանում, «Դանդաղ խմված պարապ գավառն է լոկ»: Այսինքն ապրած կյանքը: Ամենուր թագավորությունն է Մահվան: Սակայն մահն էլ մարդուն չի ազատում հարափոփոխ ու տառապանքներով լեցուն կյանքից: Նա վերստին ծնվում է նոր կյանքի ու կրկին մեռնում: Ու այսպես, անվերջ վերածնունդների հարատևորեն պտտվող անիվի ենթակայությունն է իշխում մարդու ձակատագրի վրա: Այդ շրջապտույտից դուրս գալու միակ փրկարար հանգրվանը Նիրվանան է: Նրան պետք է ուղղվեն մարդու բոլոր մտածումները, այն պետք է դառնա առհասարակ մարդու փափագելի իոնը: Նա է ազատում գոյության բոլոր ծներից, ժամանակից և տարածությունից, որով էլ մարդը թաղվում է հավերժական հանգստի ու լոռության մեջ:

-Ե՞ս եմ, Ե՞ս եմ, քեզ եղրայր, քեզ քո՛ւր.
Ե՞ս տիեզերքին հսկա աչքը կու՛յր.
Ե՞ս սկիզբ և վերջ, երախ ու արգանդ.
Ե՞ս վի՛հ անհատակ ու ծոց արգավանդ.
Ես այ՞ն եմ, որ քեզ ծընավ, նաև այ՞ն
Զոր պիտի ծընիս: Ե՞ս ձայն լոելայն:

Ես օրինությունն եմ, բարիքը վերջին.
Ես այն եմ որմե ամենքը փախչին
Եվ որմե փախչիլ չի կա՛: Հավասա՞ր
Ներումն եմ անոր, որ ինձ կհուսար,
Անոր, որ հեգնեց զիս առանց խղճի:
Ամենուն ալ վրան իմ մարգըս կ'ածի...
Մանգաղս ո՞վ պիտի համբուրեր անա՞հ.
-ինձ ԱՍՏՎԱԾ ըսին, իմ անունս է ՄԱՅ...

Մահվան նման ընկալումներ են ունեցել եվրոպացի մի շարք բանաստեղծներ և իմաստասերներ՝ (Չոպենիահուեր, Հարթման, Բայրոն Լեոպարդի, Պշիրիշևսկի և այլն): «Կյանքն ինձ համար պարզապես չարիք է.- գրում է Զակոնը Լեոպարդին, - բայց ոչ միայն ինձ համար: Կյանքը մեզ բոլորիս տանում է դեպի մահ: Բնությունն ինքն է ծնում ոչնչացումը և ինքն էլ դրանով սնվում: Հետևապես ծշմարիտ եռարյունը, ծշմարիտ ռեալությունը նահն է: Մնացյալ ամեն ինչ չնչին, ողորմելի պատրանքներ են: Կարելի է դրանց հավատալ, կարելի է ինքն իրեն խաբել, բայց ազնավաշնորհ արիությամբ օժտված մարդը նայում է ծշմարտության աչքերին, չի սկսում իրեն օրրել հանդերձյալ կյանքի երազանքներով, նախախնամության ողորմածությամբ» («Հնագույն առաջնային բառեր», Փ.Ա.Բրոկգայզ և Ի.Ա.Էֆրոն, Ը-ՊԵ., 1896, թ.17, ստ. 566):

Մահը բնական ավարտն է, կեցության նպատակը:

Անշուշտ, կարող է շփոթ առաջանալ, թե Բուդդիայի ուսմունքը անկումայնություն է հարուցում: Իրականում այդպես չէ: Փրկության ուսմունքը չի կարող անկումային լինել: Այն պարտություն չէ Մահվան առաջ, այլ հաղթանակ է Կյանքի հանդեպ:

Ուրբեն Սևակը իր շատ գործերում է բացահայտում մարդկային ձգտումների, ցանկությունների, վայելքների, փառքի և իշխանության, անգամ սիրո և երջանկության ունայնությունը, երբ դրանք դիտարկում է մահվան մերձավորության լույսի ներ-

քո: Բանաստեղծի կարծիքով՝ «անոնց, փա՛ռքը, հիշատակը, արձանը խեղկատակ դրսերսումներ են միայն ահութի ու անիմաստ ողբերգության որ կյանք կկոչվի» («Անտիպ էջեր», էջ 37):

Ահա՝ մարդկության պատմության ամենավառ օրինակներից մեկը:

Մեռնում է «հին» դյուցազնական աշխարհի մեծագույն անհատականությունը, վերջին կիսաստվածը՝ Կայսրն ինքը: Պատմությունը խաղում էր դրամաներից ամենաեղկելին: Նա, որ հրամայում էր աշխարհին, այժմ ենթարկվում է մի ողորմելի կառավարչի՝ Հուտսոն Լաոսի հրամաններին: Ու բանտված առյուծի պես, «ինքզինքը պատե ի պատ կնետեր»: «Ու Նաբոլեն ա՛լ չէր ուզեր ապրիլ»: Խնդրել էր, որ Եվրոպայից «զարգացած քահանա մը դրկեն իրեն, որպեսզի իր կասկածները փարատեր, հոգի՞ մը, հավա՛տք մը, անմահությո՞ւն մը, կառչելիք բա՛ն մը ցույց տար իրեն... Որովհետև այս մարդը, որ գահեր գահերու վրա, թագեր թագերու վրա ու Երկիրներ Երկիրներու վրա բարդած էր, հիմա սարսափով կտեսներ, որ ամեն կխուսափեր իր ձեռքեն, նույնիսկ իր անունը, իր կինը, իր զավակը...»:

Իր անկողնու «չորս անկյունների վրա, չորս արձաթե արծիվներ կիսկեին, բայց ի զո՞ր, որովհետև մահը մտեր էր, հոն էր արդեն, անմահին վրա...»: Ու ինք, որ Հռենոսեն մինչև Նեղոս, ու Ալպյաններեն մինչև ծյունապատ Ոուսաստանը, բոլոր ապարանքներն իրեն պալատ ըրած էր ու բոլոր թագավորները՝ իրեն մանկավիկ... վերջին կամք մըն ալ հայտնեց իր որդվույն համար. «Թող իմ զավակս չփործե իր հոր մահվան վրեժը լուծել, թող դաս մը առնե իմ մահեն, թող կրվասեր կայսր մը չըլլա»: Աշխարհակալ կամքը վերստին շարժման մեջ է դնում նրա Երևակայությունը և Երազների աշխարհը: Նոր ծրագրեր է մտմտում: «Իր սիրական ծիով մղոններով Երկիրներ կտրել կուզեր, Երբ խոսքը մեռավ բերնին մեջ...»:

«Ահա թե ինչպես մեռավ-մեռա՞վ- Կամքերուն հզորագույնը... Իր դահիճներուն իսկ խոստովանությունով, Նաբոլենի

դեմքը, ցավի պրկումներեն ազատված, այժմ անդիմադրելի, ահավոր, գերերկրային գեղեցկություն մը, վեհություն մը, լուս մը ստացեր էր»: Սևակը իր ճանաչողության չափանիշերով է բնութագրում կայսեր հոգեվիճակների փոփոխությունը մահվան մատուցեներում: Երկրային կյանքի, անգամ աշխարհակալ կյանքի ու փառքի ունայնության զգացողությունը Բոնապարտը զգում է լոկ մահվան պաղ հայացքի մերձավորությամբ: Մահը զգացնել է տալիս կայսրին, որ վաղանցուկ է ամենայն ինչ այս աշխարհում, ինչ արժեքներով ու հզորությամբ էլ որ այն արտահայտված լինի: Կայսրն ապրում է իր գործի և փառքի ունայնության զգացողությունը: Այդ պահին Մահն է արդեն լուսավորում և իմաստավորում Կիսաստծո ապրած կյանքի իրական, փառասիրության և կամքի պատրանքներից ազատված բովանդակությունը ու ընդ որում՝ միանգամայն այլ չափումներով և արժեքներով: Երբեմնի հզոր կամքը փոխարինվում է խղճի կերկերուն կայծկլտումներով: Այս ապրած կարծ պահերն իրենց կշռույթով գերազանցում են կայսեր առասպելական կյանքը: Զավակի ապագան նա պատգամում է կազմակերպել արդեն այլ արժեքներով և չափանիշներով: Կայսեր հոգին հայտնվել է կամքի և նյութական կեցության օրենքներից անդին՝ լուսավորվել Այլ աշխարհի լույսով:

Կյանքի շինության պսակը Բուդիհան համարում էր համընդհանուր կարեկցանքն ու սերը: «Սերն ինձ համար մեծ, լուրջ, հավիտենական բան է: Անիկա միակ զգացմունքն է, որ մեզ կմոտեցնե աստվածներուն» («Երկեր», 442): Սիրո ըմբռնման բացահայտումը էական նշանակություն ունի նրա պոեզիայի բնույթն ընկալելու համար: Սևակը գտնում էր, որ միայն կրքերից մաքրված սերը կարող է մարդուն մոտեցնել Իդեալին: Այդ առումով, Աևակը ներքին պայքար է տանում իր սիրո ապրումը նույնպես մոտեցնելու Իդեալի մաքրությանը և լույսին, իր երազած խաղաղ ոլորտների երկնային մաքրությանը: «...պիտի ուզեի ամբողջ կյանքս զոհաբերել Խտեալի մեկ վայրկյանի հա-

մար: Կուզեմ..., որ սեր ընեն վեհ ու աստվածային պարտականության մը պես...» (2,110): «Ինձի ի՞նչ փույք, թե Գիտությունը պիտի հեգնե իր անարժան աշակերտին այս երկյուղած դիրքը՝ կրկնապես ծիծաղելի, որովհետև Գիտությունը, որ Կրոնը չի հասկնար, Սերն ալ չի հասկնար: Հարաբերական իրականություններում միայն կիհավատաան. մինչ Սերն ու Կրոնը բացարձակ իտեալին կձգտին, նույն հավիտենական զգացումին երկու հավիտենական ձևերն են անոնք: Սերը՝ անձնական, կերպարանավոր, երկրային, բնական իտեալն է, Կրոնը՝ անանձնական, անկերպարան, տիեզերական, գերբնական իտեալը...»: Սերը մարդուն բարձրացնում է իտեալի բարձունքը: Ռուբեն Սևակի սիրերգությունը կրքերի, զգացմունքների, սիրո և դավանած իտեալի երթեմն ներդաշնակ, երթեմն հակասական զուգորդումների մի ամբողջ հարուստ և գունագեղ աշխարհ է: Այն առավել համակողմանիորեն է ի հայտ բերում բանաստեղծի էությունն ու անհատականությունը: Սիրո զգացումի մեջ կրքի արտահայտությունը Ռուբեն Սևակը մշտապես լծորդում է մեղքի զգացողությանը:

Դուն ուստի եկար՝
Տապանիս նըկար...
Եվայի ծընունդ,
Մահավետ սընունդ,
Ի՞նչ է քու անունդ...
Բու անունդ Սերը է,
Բու անունդ՝ Անդունդ:
(«Սեներգ ինձ համար»):

Քանի որ բանաստեղծի կյանքը դեպի իտեալը բարձրացնող ինքնասրբագործման գիտակցական նվիրումի միստերիալ դրսնորում ունի, այդ պատճառով էլ սիրո ապրումը և դրա որոշակի արտահայտությունը, զգացմունքների և իտեալի իրարա-

մերժ որակները նույնպես հոգեբանական լիարժեքություն և ինքնատիպություն են փոխանցում ապրումին: Առավել ևս, լիարժեք է այդ երկու որակների գուգորդումը կենդանի ապրումի մեջ և այնուհետև բանաստեղծության համատեքստում: Առաջին դեպքում գործողության դրդողը և ապրումը սնուցողը կրքերն ու զգայություններն են, իսկ բանաստեղծելիս կիզակետող, առաջատար ուժը դառնում է Իդեալի բարոյականը: Բանաստեղծությունը ծնվում է արդեն այլ արժեքների և զգացմունքների գուգորդմանք, հոգեբանական այլ կոնտեքստում: Ցանկություններից հալածված, կյանքի ծարավի, վայելքի մղումը հանգում է մեղքի զգացման, զղջման և տառապանքի:

Ես երազիս երկիմքներեն,
Ես իմ կապույտ մենութենես
Վա՛ր, վա՛ր իջա խոնարհորեն.
Սարսափա՛ծ իմ տրտմութենես...

Սիրուս վարդերն հովին տալով,
Թերթերն <ույսիս փեթոտելեն,
Ստորնացա՛, իջա՝ լալով,
Սեպ գահույթիս յոթն ոտներեն...

Քառսներեն իջա տղմուտ.
Խորվիրապիդ մեջ հասա քեզ.
Դուն հոն էիր Մեղքին պես մութ
Ու Գեհենի պես բոցակեզ...

Ու չգիտցա՛ր երբ վրաս կ'իշխեր
Վիշապ մարմինը գետնամած
Որ դժոխքիդ մեջ այդ գիշեր
Աստվա՛ծ մըն էր ապաստանա՛ծ...

Քառսը մութ, «անասնական» կրօքերն ու մղումներն են մարդու մեջ: Ըստ էության, «քառս» արտահայտությունը հենց այդ իմաստով էլ պետք է հասկանալ իր իմացաբանության համատեքստում: Չարի պատճառը բնազանցական չէ, կարիք դրան հայեցողությամբ հասու լինել: Այն գտնվում է մարդու էության անվերջ ու անհատնում կամեցողությունների շղթայում, և տեսանելի է ու ակնհայտ այն ամենի մեջ, ինչն անվանում ենք կյանք կամ կյանքի պայքար: Մարդու էության գուսապ տենչերն ու անհագ ցանկությունները հանրային կյանքում և անհատի կենսագրության մեջ հարուցում են տառապանք ու քառս: Կարծում ենք, որ բանաստեղծի ժառանգությունը հետազոտելիս, իմաստ չունի այդ հասկացությունը կապել իրականության, սոցիալական կյանքի քառսի հետ: Իրականում այն իմացաբանական ավելի բարդ համադրույթի արտահայտություն է: Եվ քանի որ, ըստ իր դավանած ուսմունքի, չկա ոչ մի տրանսցենդենտ էություն, սուբստանցիա, քողարկված տեսանելի գերագույն գորություն, որպեսզի շտկի, վերացնի կյանքի անկանոնությունները, խառնակչությունը և քառսը, ապա խնդիրը հանգում է նրան, որ դրա փրկարար ելքը ցանկությունների, կամքի, մղումների մարման՝ կվիթետիզմի, կամ էլ ցանկությունների սահմանափակման մեջ է: Խսկ հիեալը առհասարակ տիեզերական անդորրի, լոռության մեջ անէանալու, շիջելու ցանկությունն է:

*Երգը մեռավ շրթներուս.
Մի՞այն մա՞ն կա, կաղկանձյու՞ն.
Ներե՛ ծաղկող ծիլերուս,
ճերմակ Ոչինչ, ճերմակ Զյում...*

*Ներե՛ սրտիս իմ անահ,
Անուրջներուն վաղանցիկ,
ճերմակ Աստված, ճերմակ Սահ,
Զի դու ես լոկ գեղեցիկ:*

Կմեռնին սեր ու ժպիտ,
Զի դու՛ ես լոկ իրական.
Կյանքը քրթի՛ջ մէ հտպիտ,
Ու դո՞ւ ես լոկ տիրական...

Համբույրը գե՛ջ, սերն անշե՛ջ,
Պետք է մոռնալ ամե՛նն ալ.
Փակել աչերս Մահվան մեջ
Անհունին մեջ անհուննալ...

«Ջունին»

Սևակի պոեզիայում Մահն ու Սերը հաճախ են նույնանում: Դա բնորոշ է պեսիմիստ բանաստեղծներին, որոնց հայացքների համատեքստում գործառույթի առումով նրանք զուգորդվում են իրար: Ահա թե ինչ է գրում Զակոնո Լեոպարդին. «Սերը և Մահը երկվորյակներ են: Ճակատագիրը նրանց ծնել է միաժամանակ: Ավելի գեղեցիկ, քան նրանք, չկա ոչ երկրի վրա, ոչ երկնքում: Մեկը տալիս է մեծագույն երջանկություն, ինչպիսին կարելի է գտնել կեցության օվկիանում, մյուսը մարում է ցավը և դժբախտությունները» (Джакомо Леопарди, Изданные произведения, М., 1989, стр. 121):

Սևակի պոեզիայում դրանք հաճախ արտահայտվում են միևնույն ծերմակե բառով: «Սերը սեր չէ, մահը մահ չէ, սերն է մահ», - գրում է նա:

Եկու՛ր, ես մու՛թ քաներ պիտի քեզ ըսեմ
Սիրո պես քաղցըր ու Մահվան պես հըզոր.

Մի՛ լսեր հոգնած հոգիս որ կուլա,
Տա՛ր զիս Սիրո կղզիներեն դեպի Մահ.
Իմ կյանքը թող կորած նավուն պես ըլլա...

Սի այլ բանաստեղծության մեջ այդ ցանկությունն արտահայտվում է այլաբանորեն: Բանաստեղծն ուզում է խենթորեն հոսող վտակին հրապուրել ափամերձ ծաղիկներով, սեղերով, լայնատարած դաշտերով, այսինքն՝ հրապուրել տեսանելի և գգայելի կյանքով:

*Մի՛, մի՛ վազեր ծովն անհատակ
Պիտի թաղե քեզ այսց տակ...*

*Ի՞նչ փույթ թե մահն է քայլ մ'անդին,
Ես Սիրահար եմ մարմանդին...*

*Ու մինչ քերթողը կ'երազեր
Լալո՛վ, վըտակը եռուզեռ
Երգով իր Մահը կվազեր...*

Կարծում ենք, որ Սևակի ծանաչողական կոնտեքստում սերը կյանքի մնացած շղթաներից ու կառչումներից ազատագրելու պոտենցիալ հնարավորություն է: «Եվ որքան պիտի հառաջանանք տարիներու և սիրո մեջ, այնքան պիտի մոտենանք լուսին, այնքան պիտի երջանիկ դառնանք: Եվ այդ պիտի ըլլա մեր Արշալույսը, անխօռվ, խաղաղ, երազուն... Երջանկության Արշալույսը... Արշալույսը հավերժական... Սեր երկրային կյանքն շատ ավելի լուսապայծառ ուրիշ կյանքի մը Արշալույսը... Անդենականի Արշալույսը...»:

Սևակը նախապես այլ կերպ էր ընկալում գործառույթը:

*Կխորհեի թե ինչ որ մենք Անմահ Սեր կ'անվանենք,
Մութ կիրքերու հագեցման պարզ նախաբա՛նը չէ՞ր նենգ...*

Սակայն Բուդդիայի փրկության և մարդու բարոյական կատարելագործման ուսմունքի համատեքստում միանգանայն

այլ գործառույթով է դիտում այն: Այն Իդեալին մոտեցնող բնական զորություն է:

Սիրած աղջկան՝ Յանիկին գրած նամակում նրան հիշեցնում է իրենց առաջին հանդիպումը: Այդ ժամանակ կրքերով լեցուն էր իրենց սերը: «Կրակ ու բոցեի միայն, կեռայի, և սերը ամեն ինչե զորավոր էր և ուժգին»: Այն լեցուն էր կրքերի մառախուղով, «Եվ այս հոգեվիճակը կշարունակվեր ակամա, անգիտակից, անուղցուց, կույրզկուլայն»: Սակայն, շարունակում է նա, «Ես այն կրաղեն իին Հիշողության դեղին տերևներուն տակ...»:

Կյանքը, իր դավանած կատարելագործման ծանապարհի տրամաբանությամբ, ենթադրում է նման մետեմփոխուոգ՝ հոգեփոխություն: «Հոգիի և սիրո որքան այլակերպումներ...»:

Իսկ իիմա՞... «Հիմա Սերն է, որ կօնի... Սերը մաքուր, Սերը գիտակից, Սերը անձնվեր, Սերը խաղաղավետ ու խորունկ, Սերը վճիտ... Քանզի երեկվան սերը սերն էր մեկ օրվան, սերը կիրքերու, սերը միգամած... Հիմա սերն է Հավերժության, որ կիառնե... Հստակորեն կտեսնեմ ամբողջ ապագան: Կտեսնեմ զայն առջևս, շոշափելի, իրական: Անոր գալուստը կզգամ: Եվ քեզ կզգամ իմ մեջս, իմ մեջս կզգամ ամբողջ Հավերժությունն ու Տարածությունը... Երեկվա ոստոստուն սերը չէ ասիկա, այլ Սերը Հոգիներու, զոր ոչ մեկ մարդկային հոգի հղացած է ցարդ...»: Աևակը իր մեջ զգում է անհավատալի և անհուն փոփոխություն: «Եվ իիմա մեծ անդորրության, երկնային խաղաղության, անդրաշխարհային իտեալի էջքը կզգանք մեր մեջ... Ահա հասեր ենք մարդկային երևույթներեն անդին, անդին՝ երկրայիններեն...

Մենք այլևս չենք կրնար վերադառնալ անկե: Անկարելի է: Մանավանդ որ ա՛լ չենք ուզեր վերադառնալ: Մենք պիտի ապ դինք այնտեղ ու այնտեղ ալ մեռնինք:

Ահա թե ինչու երբեք պետք չէ ափսոսանք այն ամենը, զոր հարկ էր թողով վարը: Եվ եթե պետք է տակավին, պիտի թողունք դեռ բոլորը, որպեսզի բարձրանանք Ցկյանս:

Պետք է ջնջել ամեն ինչ մեր ետև։ Պետք է մոռանալ ամեն ինչ վարը։ Մեծ զոհաբերությունն է այս»։

Բուդրիայի ուսմունքը դավանողների համար «միասնանալը Անգոյին ոչ միայն հոգու ապագա, այնկողմնային, անդենական վիճակ է, այլև ներկա ծշմարիտ ռեալություն մարդու համար, որը նրանում պետք է իրականացվի» (Գեգել, Փիլոսոփիա իշտուր, տ. ՍIII, ստ. 160)։

Այդ առումով անհատի կյանքը պետք է կայանա փրկության ծանապարհի քառուղիներում։ Այն միստերիալ բնույթ ունեցող աստիճանական կատարելագործման ընթացք է, իսկ մարդը կատարելության ընթացող ուղևոր։

Չեմ գիտեր ով, չեմ գիտեր ուր
Կ'երթա...

Կ'ըսեն՝ դոյակ մ'ունի աղվոր
Կամ ուխտ մը սուրբ, սեր մ'հեռավոր,
Ու հոն կ'երթա... Եվ գիտեմ որ
Տապան մ»ունի, չեմ գիտեր ուր...

(«Գացող մարդը»)

Այդ անկանգ գնացքի մեջ մարդը նպատակի և այդ նպատակին տանող միջոցների հստակ գիտակցությունն ունեցող ծամփորդ է։

Երթա՛լ, Երթա՛լ, Երթա՛լ անձայն, անհանդես.
Երթա՛լ առվի՛ն պես՝ մարգերու տակ անտես.
Կապույտին մեջ՝ հե՛զ, հողմավար ամպին պես...

Երթա՛լ, Երթա՛լ, Երթա՛լ առանց ճրագի.
Երթա՛լ՝ առանց սուզի, լացի, փափագի.
Երթա՛լ առանց սովի, առանց պապակի...

Երթա՛լ՝ մարդոց կույտին մեջեն լոելայն.
Օտար մընալ իրենց Ցավին, Գիտության,
Երթա՛լ՝ տգետ, խուլ, համըր, կույր հավիտյան...

Չըգիտնալ, որ հոս հտեալը չիկա՞...
Ուխտագընա՞ց Երթալ ափերն հեռակա,
Դեպի ուղին Երջանկության մշտակա...

Աննյութանա՛լ, անրջանա՛լ, վըսե՞մ, վե՞ս.
Երթալ անցայգ, անայգ, Երթա՛լ վերջապես
Աչքերը գոց՝ ցայգաշրջիկ խեղճին պես...

Երթա՛լ, Երթա՛լ, չճանչնալ Մարդ ու Աստված.
Չույգ Երթալ՝ ծեռքը քույր ծեռքի մեջ դըրած

Անրջանքին ու Սիրույն պես - աքսորված...

Այսպիսով, Ռուբեն Սևակի ճանաչողության մի շրջանը հստակորեն որոշարկվում էր Բուղդիայի հոգևոր ուսմունքի ուսումնառությամբ, ինչը սոսկ ճանաչողություն չէր, այլ մարդու փրկության ուսմունք: Այդ ուսմունքը դավանողը իր կյանքը կամովին և գիտակցաբար վերածում էր մեզ հայտնի աստիճանակարգությամբ արտահայտված ինքնասրբագործման միստերիայի: Կյանքի մերժման, կամքի մարման գործնական մի ամբողջ ծրագիր է պարունակում դա, ինչը նրա պոեզիայում ի հայտ է գալիս զղում, մեղքի զգացում, ապաշխարություն, էքստազ արտահայտող այլաբանական պատկերներով և խորիդանշաններով: Վերը նշված ապրումներով և տրամադրություններով ողողված են Ռուբեն Սևակի պոեզիան և արձակը:

Հայտնի է, որ բուղդիզմի Երկրորդ աստիճանում տեղի է ունենում այդ ուսմունքի բարոյականության գոյաբանականացում՝ օնտոլգիզացիա: Բարոյական բարձրագույն արժեքները դիտվում են իբրև տիեզերակարգին բնորոշ որակներ:

Ուսանելու տարիներին Սևակը ծանոթանում է բնագիտական և փիլիսոփայական նոր գրականության հետ: Այդ ամենը իր երբեմնի ծանաչողության մեջ հարուցում է նոր «ինչու»ներ ու տարակուսանք: Կյանքի և մահվան, հոգու անմահության խնդիրները իր կողմից վերստին դրվում են քննության: Միտքը հայտնվում է միանշանակորեն չհամադրվող ծշմարտությունների ու անորոշության մղձավանջի մեջ:

«Ո՞վ, ո՞վ պիտի ազատ գիս այս ահավոր մղձավանջեն:

Կ'անցնին օրեր, կ'անցնին շաբաթներ, ու տարակուսը կմեծնա՛, կմեծնա՛...

Ի՞նչ էր կյանքը, ու մահը ի՞նչ... Ո՞րն էր իրական, ո՞րն էր անիրական...

Բայց ժամանակներու, միջոցներու, օրենքներու անհումության մեջ՝ ի՞նչ խղճալի բան է իմ գիտցածս, ինչպե՞ս զորեմ իմ այդ փոքրիկ գիտությունովս ամբողջ Սեծ Անծանոթն սպաննելու:

Չեզքս փոքրիկ մուրճ մըն են տվեր, որ աստղերը փշրեն անով... Բայց աստղերը միշտ մեզմե բարձր ու անհասանելի պիտի մնան՝ գերագույն ծշմարտություններուն պես. ու ով որ աչքեր ունի տեսնելու՝ պիտի տեսնե զանոնք...

Երկու հսկաների միջև կտատանվիմ ու կտառապիմ: Երկու միականի կիկլոպներ կրածնեն հոգիս. Գիտություն մը, որ փաստեր ունի ու իտեալ չունի ու կրոնք մը, որ իտեալ ունի ու փաստեր չունի...

Առաջինը անվերապահ մահվան կդատապարտե զիս, երկրորդը անհունության լուսամուտները կրանա անհունաբա՛ղը հոգիիս: Սեկը ոտքս գերեզմանին կկապե, մյուսն աչերում երկինքները ցույց կուտա:

Կրոնքը իր հետևողին հավերժորեն երանելի հաղթություններ կխոստանա. Գիտությունն իր աշակերտին լոկ վերջնական ու բացարձակ հպարտություն մը կ'երաշխավորե՝ ստրուկ բջիջի մը մահով կապելով սանձարձակ հոգիին ազատաշունչ թոխքները...

Եթե գոնե Գիտությունը ձեռքս ուժեղ զենքեր տար՝ անմահության ամեն երազ ջնջելու, կսփոփեի, խորհելով, որ ծշմարտությունը մեր կողմն է՝ հոգ չէ, թե դա՛ռն ըլլար ան... Բայց ո՛չ, Գիտությունը կլու. և այս լռությունը ժխտումն մը ավելի ծանր կկշռե տարակույսի նժարին մեջ:

Ու նժարը կտատանի ահավոր Ելեկջներով: Ո՞ւր, ո՞ւր պիտի հանգի իր մահացույց ասեղը, հավիտենական կյա՞նք, թե՛ հավիտենական մահ...»:

Բնագիտական գիտելիքը Սևակի աշխարհայացքում սկեպտիցիզմի և անհուսության տրամադրություններ է հարուցում: Կյանքի, գոյության իմաստի երբեմնի ճանաչողությունը լրացուցիչ բացատրություններ է պահանջում: «Ես, որ աշխարհն այնքա՞ն հաստատուն իիմերու վրա դրած կկարծեի, իիմա կզգայի, որ ան կդողար ոտքերուս տակ» (Երկեր, 274): Սևակը տրվում է կյանքի և մահվան շուրջ նոր խոկումների: Ծրջապատում, ամենուր սաղայելական պարի պես եռում է կյանքը: Բազմությունները, մարդիկ խելակորույս վազքի մեջ են: Ու այս խելացնոր վազքը կյանքի՝ արշավ է, թե՛ մահարշավ: Վաղանցուկ երթի մյուս եզրում մի՞թե չի բացվում «անդունդներեն ամենեն սկը...»: Փաստորեն մարդկային կյանքը հևիին վազք է մի անկայուն կամրջի վրա, որի մի ծայրը հենված է դատարկությանը: «Կարելի՞ էր երևակայել կյանք-կամուրջ մը, որուն մեկ ոտքը ոչնչության վրա դրած ըլլար..»: Սակայն այդ ինքնամոռաց վազքի մեջ ոչ մեկը չի հավատում մահվանը: Եթե հավատային, որ այդ տառապալից ու հյուծող գործունեությունը «անիմաստ ոչնչության մը համար էր, ո՞վ պիտի վազեր...»:

Ուրեն Սևակը հարցախույզ քննության է ենթարկում կյանքի բնագիտական այն ըմբռնումը, ըստ որի՝ կյանքը բջիջների խաղ է միայն: Եթե այդպես է, ապա հարց է ծագում, որ այդ բջիջների ամենաախտագին, ամենահուսահատ, ամենապտոր պահերին կյանքի սերը, ապրելու հավատը, հաղթելու հույսը մարդու մեջ ինչի՞ց է, որ ծնվում են այդքա՞ն զորությամբ,

այդքան լավատեսությամբ: «Եվ ուրկե՛ կուգային այդ հունավոր բջիջներուն մեջ անհունության գաղափարները, այդ մահացու տարրերուն մեջ անմահության բնազդները, այդ գետնաքարշ մարմնի անշրջագիծ իտեալները... Ինչպես կարելի էր երևակայել մասը ամբողջություն մը պարունակեր, ու բջիջը՝ տիեզերք մը...»: Եթե Կյանքը ժամանակների սկզբից իսկ գնում է դեպի Մահ, և եթե Բարեշրջության օրենքը բազում դարեր աշխատում է անշունչ առարկաներին շունչ տալու, մարդ սերելու և այնուհետև այդ մարդուն դարձյալ հող դարձնելու համար, ապա ո՞րն է այսքան անիմաստ, անտրամաբանական և ամուլ գործունեության իմաստը: Անշարժ ու անզգա նյութից ծագել են զգացում ու իմաստ, կամք ու խղճմտանք... պարզապես տառապելո՞ւ և մեռնելո՞ւ համար... Արժե՞ր այս դարավոր ու տիեզերական աշխատանքը, որին «գեղջուկ գերեզման մը բավ է խեղդելու...»: «Ուրեմն ինչո՞ւ համար են ծաղիկները, աստղերը ինչո՞ւ, ինչո՞ւ համար է սերը ու կյանքը ինչո՞ւ...»:

Գեղարվեստական տեքստը համադրում է հեղինակի փիլիսոփայականը, որն այս դեպքում ծնվում է հեղինակի իմացաբանական պեսիմիզմից: Այն բոլոր գիտությունների վրայից վառնող, դարե ի դար և սրտե ի սիրտ արձագանքող ահավոր հարցականն է «Լինե՛լ, թե չինել... մեռնի՛լ, քնանալ... քնանալ, երազե՛լ, թերևս...»: Եթե Բուդիհայի ուսմունքից սերած պեսիմիզը ծնվում էր կյանքի տառապանքի գիտակցությունից, ապա պեսիմիստական այս տրամադրությունը արդյունք է կյանքի իմաստի ծանաչողության անորոշության: «Բայց մարդ պիտի հասնի վերջապես բացարձակ գիտության.- Ոչ, իր գիտությունը սահմանափակ պիտի ըլլա ամեն ատեն, ու միշտ գոյություն պիտի ունենա Անձանաչելի՛ որ պիտի ծիծաղի մարդուս ընդունայն ձգանց վրա»:

Ուրբեն Սևակի գեղարվեստական ժառանգությունը (պոեզիա, արձակ, նամականի) սերտ կապի մեջ է ըստ իր դավանած ուսմունքի ապրելու և կատարելագործվելու արվեստի, կատա-

րելության հասնելու ճանապարհի և ուղիների, բարձրագույն իմաստնություն ծեռք բերելու հնարավորության, անձնական կյանքը այդ ճանաչողությամբ կազմակերպելու միստերիալ բնույթի հետ, որի համատեքստում էլ այն հետազոտելի է: Սեր գրականագիտությունը, երբեմն նաև արդարացվող պատճառաբանությամբ (Երբեմնի իդեոլոգիական պարտադրումները) ցավոք, այդ ժառանգության հետազոտության արդյունավետ եղանակ չի ընտրել: Ուսումնասիրողները անտեսել են հեղինակի պեսիմիզմը, ինչը տեսակարար մեծ կշիռ ունի նրա ժառանգության համատեքստում: Ուրբեն Սևակի պոեզիայում, արձակում բացարձակացվել է սոցիալական և ազգային-քաղաքական թեմատիկան, և հեղինակը գնահատվել է այդ չափանիշներով: Անտեսվել են ուսումնառությունը և աշխարհայցը, երբեմն էլ փորձել են այն կապել ճանաչողական ինչին համակարգերի հետ («կյանքի փիլիսոփայություն»), որոնց հետ ոչ մի առնչություն չունեն: Առավել ևս ապարդյուն են այս կամ այն գեղարվեստական մեթոդի գեղագիտության հետ կապելու փորձերը: Անկասկած, դրանք կարելի է քննել ռոմանտիզմի կամ սիմվոլիզմի գեղագիտության և գեղարվեստական մեթոդի չափանիշներով: Բայց վերջիններս հետևանք են, արդյունք, մինչդեռ այդ ամբողջի պատճառները Ուրբեն Սևակի ժառանգության իմացաբանության ընդերքում են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՏԵՓԱՆ ԹՈՓՉՅԱՆ.	
ՈՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ	3
ՎԼԱՂԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ.	
ՏԻԵԶԵՐՅԻ ՄԵԾԻ ԻՆՉՈՌԻՆ	41
ՎԱԶԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ.	
ՈՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ ԵՎ ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ	59
ՄԵՐՃ ՄՐԱՊԻՈՆՅԱՆ.	
ՑԵՂԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ	
ՈՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ՊՈԵԶԻԱՅՅՈՒՄ	84
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՉՅԱՆ.	
ՊԱՐՏՅԻ ԵՎ ՊԱՏՎԻ ԱՍՊԵՏԸ	96
ԱՐԱՄ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ.	
ՈՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ԿԵՆՍԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ	104

«ՀԱՅ Մ. ԱԲԵՂՅԵԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
«ՀԱՅ Մ. ԱԲԵՂՅԵԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
«ՄԵԿ ԱԶԳ, ՄԵԿ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՂԻՔԵՆ ՍԵՎԱԿ 125

ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՎՎԱԾՈՒ

Պատասխանառու Խմբագիր՝
Վարդան Դերիկյան
Սրբագրիչ՝ Արմենակ Ղազինյան
Էջաղբումը՝ Վահրամ Մանուսաջյանի

Տպաքանակը՝ 400 օրինակ

Տպագրվել է «ԳԱՍՊՐԻՆՏ» ՍՊԸ տպագրատանը

Զի մենք ենք, մենք ենք, բանաստեղծ, պուետ,
Մենք, պատառոտուն բեհեզով վետ վետ,
Երգի իշխաններ՝ իսպան հալածված,
Մենք, նոթի, հպարտ, երբեմնի Աստված,
Մենք, չըհասկըցված, մենք, եղերական,
Մենք, Բանաստեղծներ, մենք ենք իրական
Թրուպատուրները:

ՈՒՐԲԵՆ ՍԵՎԱԿ